Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

891.99-82
Հրատարակ. Գրականության
ուսման ամսագիր.
1917
№ 1-2-3/4
բնագիր.

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ

ԱԼԱՐԱՆԱՏ

ՆԻՒԹԵՐ ՈՒՆԵՆ. — ՄԻՔ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ, Վ. ՏԷՐԵԱՆ, ԱՐՄ. ՏԻԳՐԱՆԵԱՆ, Գ. ՔԵԱԼԱՇԵԱՆ, ԱՆՈՒՐՋ, ՍՏ. ՋՕՐԵԱՆ, Ն. ԱՖՐԻԿԵԱՆ, Վ. ԱՂԱՍԵԱՆ, ՌԱՖԱՅԷԼ ՋԱՐԴԱՐԵԱՆ, Վ. ՎԱԼԱԴԵԱՆ, ՍԱՐ-ՅՈՎ, ՊԱՇԱՐԷ, ԵՂԻԱ ՏԷՐ-ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ, ԱՋԱՏ ՎԵՇՏՈՒՆԻ, Մ. ԷՓՐԻԿ ԵՒ Յ. ՄԵԼՔՈՒՄԵԱՆ:

3-4

ԹԻՖԼԻՍ 1917

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Թէև խոստացել էինք «Գրական-Գեղարուեստական Ալմանախի» բաժանորդներին այս տարի 3 ռուբլով տալ վեց գիրք, բայց հանրածանօթ թղթի սովի և տպարանական ծանր պայմանների պատճառով խմբագրութիւնս կարողացաւ իր բաժանորդներին տալ միայն չորս գիրք։ Այնպէս, որ բաժանորդները ստանալով այս գիրքը, իրենց պէտք է համարեն բաւարարուած։

ԼՈՅՍ ՏԵՍԱԼ

Երիտասարդ գրողների գրադարան № 1.

ՄԻՔ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հատոր II

Շքեղ հրատարակութիւն — Հեղինակի պատկերով։ Գինը 3 ռ.։ Ճոնապարհածախսով 3 ռ. 50 կ։ Դիմել՝ Тифлисъ, Книгоиздательство «Патани», М, Эприкянъ, Ходживанская, 5.

ՍՐՃԱՐԱՆՈՒՄ*)

Երբ նա ներս էր մտնում սրճարան և նստում իր մշտական տեղը, սրճարանի բոլոր ծառայող աղջիկները ժպտալով իրար էին նայում ու աչքերով նշաններ անում։

Իսկ փոքրիկ Նինան առաջուց գիտենալով պատուէրը, շտապում էր բերել մի բաժակ սուրճ երկու պաքսիմատի հետ։

Սրճարանի աղջիկները այնքան սովորել էին օրւայ նոյն ժամին, նոյն տեղում նստած տեսնել այդ երիտասարդին, որ եթէ մի օր չէր գալիս, զարմացած իրար էին հարցնում, թէ արդեօք ի՞նչ է պատահել։

Իսկ փոքրիկ Նինան՝ առանց այն էլ գունատ ու թուլակազմ, աւելի էր գունատւում, թախծոտ դէմքը աւելի էր մռայլում, և անժպիտ, ակամայ ծառայում էր յաճախորդներին։

---

*) Համարեա ամեն օր լինում էի այդ սրճարանում. այդտեղ մի ծառայող աղջիկ կար սաստիկ նման օրիորդ Ս. Ադամեանին։ Մի անգամ օրիորդին տարանք այդ կաֆէն՝ ցոյց տալու իրա կենդանի պատկերը։

Երբ օրիորդ Ս. Ադամեանը մեռաւ, ես գրեցի այս պատմւածքը և նւիրեցի նրա յիշատակին։

Նախքան տպագրութեան յանձնելը պատահմամբ կրկին ձեռքս անցաւ Կնուտ Համսունի «Միրոյ ստրուկները» պատմւածքը, զգացի, որ նրա ազդեցութիւնը, ըստ երևոյթին, կայ պատմւածքիս վրայ։ Այնուամենայնիւ չեմ ամաչում, նոյնիսկ եթէ կայ այդ ազդեցութիւնը և յանձնում եմ տպագրութեան։

Մ. Մ.

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
Ա. Մյասնիկյանի անվան
Ա. Мясникяна

Սև, մեծ-մեծ աչքերը շարունակ դռներին յառում, շարունակ նույն միտքը գլխում, արդեօք հիւանդ չէ։

Օրւայ որոշ ժամերին նա գալիս էր, նստում անկիւնում դրած փոքրիկ կլոր սեղանի մօտ և եթէ պատահմամբ բռնւած էր լինում, սպասում էր մինչև ազատւի և երբէք չէր դաւաճանում ոչ իր սեղանին, ոչ էլ իր մի բաժակ սուրճին՝ երկու պաքսիմատի հետ։

Երբեմն նա երկար նստում էր և կարծես մոռանում էր, թէ ինչու է եկել սրճատուն, մինչև փոքրիկ Նինան սիրտ առնելով զգոյշ մօտենում էր և կամաց շշնջում.

— Ձեր սուրճը սառչում է։

Նա թեթև ժպիտով նայում էր նրան, շնորհակալութիւն յայտնում ու մի քանի գդալ մեքենայաբար կուլ տալուց յետոյ կրկին խորասուզւում մտքերի մէջ։

Նինան դռան շէմքից նայում էր նրան և նրա հետ միասին ինքն էլ տխրում, ցաւում, որ ոչնչով չի կարող օգնել, սփոփել։ Էլ առաւել տանջում էր նրան այն, որ ոչինչ, ոչինչ չգիտէ նրա մասին, չգիտէ ինչ մտքեր են տանջում նրան։

Երբեմն նա ծաղիկներ էր բերում և գնալուց թողնում սեղանի վրայ ու կամաց ասում.

— Նինա, ձեզ համար են։

— Շնորհակալ եմ,—կարմրելով պատասխանում էր աղջիկը, ուրախութիւնից պատրաստ արտասւելու։

Նրա գնալուց յետոյ, Նինան տխրում էր, որ այդ օրը էլ չի տեսնելու նրան։ Վերցնում էր բաժակը, ծաղիկները, արագ անցնում հարևան սենեակը սղմում ծաղիկները շրթունքներին զգոյշ ու գաղտնի, որ ոչ ոք չտեսնի և ուրախութիւնից լալիս էր։

Բոլոր նրա բերած ծաղիկները նա խնամքով տուն էր հասցնում. իսկ երբ սկսում էին թառամել, նա հանում էր ջրից և դնում արդ ու զարդի աղքատիկ սեղանի վրայի վազոյում, միւսների մօտ։

Զորացած ծաղիկների մի ամբողջ փունջ էր կազմւել նրա բերած ծաղիկներից։

Նինան սիրահարւել էր անկիւնի հիւրի վրայ։ Գիտէին սրճարանի բոլոր աղջիկները։ Բայց ինչպէս է վերաբերւում հիւրը Նինային, այդ ոչ ոք չգիտէր։

Երբեմն երբ ծաղիկներ էր բերում, բոլորը վճռում էին, որ նա էլ Նինային է սիրում։ Բայց յաճախ այնքան սառն էր լինում, որ նոյնիսկ չէր էլ նայում Նինային, որն այնպէս սրտատրոփ սպասում էր նրան։ Այնքան անտարբեր, որ կարծես այդտեղ չէր, այլ հեռու, շատ հեռու։

Այդպիսի դէպքերում վճռում էին, որ չի սիրում, որ եթէ սիրի կր սպասի սրճարանի փակուելուն, ճանապարհ կը կը ձգի, այնպէս, ինչպէս իրենց սիրած երիտասարդները։ Այս մէկը այդ երբէք չէր անում, ուրեմն չի էլ սիրում։

Նինան խուսափում էր այդ նիւթի վրայ խօսելուց ընկերուհիների հետ և աշխատում էր որքան կարող է անտարբեր ձևանալ, բայց այդ նրան չէր յաջողւում։

Այդ զգացմունքը քանի գնում աւելի էր ուժեղանում և նա այլևս անկարող էր կրծքի տակ պարփակել այդ ուժեղ ճիչը, որ ինքն իրեն դուրս էր ցայտում, և եթէ լռէր, կուրծքը կը պատռէր։

Մի օր նա թղթէ անձեռոցիկի վրայ գրեց. «Ես ձեզ սիրում եմ», և դրեց պաքսիմատների տակը։ Իսկ ինքը դողալով դռան շէմքից սկսեց դիտել։ Բայց տղան չնկատեց էլ, սրբեց բերանը, ճմռտեց և ձգեց ափսէի մէջ։

Այդ օրը նա սովորական ժամից ուշ եկաւ։

Նինան իսկոյն նկատեց, որ սովորականից աւելի նեարդային և յուզուած է։ Նա նստեց իր սեղանի մօտ, ծոցի գրպանից մի նամակ հանեց պատռած ծրարով, նշան էր, որ առաջին անգամ չէ որ կարդում է։

— Բարև ձեզ,—սուրճը և պաքսիմատները դնելով սեղանի վրայ ասաց Նինան, մի խեղճ ժպիտ դէմքին՝ նայելով նրա վրայ։

— Ինչու՞ բարի լոյս չէք ասում, Նինա, մթթէ այդքան ուշ է։

— Այո, այսօր շատ ուշ էք գալիս։ Սովորականից մէկ ու կէս ժամ ուշ։ Ես կարծում էի էլ չէքգալ։

— Քանի ես այստեղ եմ միշտ կը գամ։ Ես պէտք է ամեն օր տեսնեմ ձեզ։

—Ի՞նձ,... շշնջաց աղջիկը հազիւ զսպելով իրեն՝ որ չճչայ։

— Այո, ձեզ, դուք այնքան նման էք նրան...

— Ո՞ւմ։

— Նրան։ Ես ամեն առաւօտ նրա համար ծաղիկներ էի տանում, իսկ այժմ նա այստեղ չէ. ձեզ համար եմ բերում, վերցրէք։

Նա կրծքին ամրացրած վարդը հանեց և դրեց սեղանի վրայ։

— Դուք շատ բարի էք... Նա ձեր սիրածն է։

— Այո, ոչ։ Միթէ ձեզ համար միևնոյն չէ։

— Միևնոյն... Այդ նամակը նրանից է։

— Այո, նա ինձ կանչում է։

— Դուք պէտք է գնաք...

— Մի քանի օրով... Նա մի քիչ տկար է։

— Միք գնալ... Անգիտակցաբար դուրս թռաւ աղջկայ բերանից։ Բայց իսկոյն ուշքի գալով, լայն բացած աչքերով նայեց նրա վրայ և կարծես այլևս անկարող մի խօսք ասելու, արագ դարձաւ և համարեա վազելով անցաւ հարևան սենեակը, գլուխը ձեռների մէջ առաւ, սղմեց պատին և հեկեկաց։

Աղջիկները շրջապատեցին նրան, ջուր տուին, հարց ու փորձ արին, նա ոչ մի խօսք չասաց, լուռ սրբեց աչքերը, նստեց ցած նստարանի վրայ, գլուխը կախ, ձեռները ծնկների մէջ սղմած, անօգնական, թշուառ տեսքով։

Երկար նա անշարժ նստած էր։

— Նինա, անկիւնի պարոնը քեզ կանչում է,—ներս մտնելով ասաց աղջիկներից մէկը։

— Ի՞նձ...

Շփոթուած ու վախեցած ոտքի ելաւ Նինան։

Մի րոպէ կարծես չհասկացաւ թէ ինչ պէտք է անի. ո՞վ է կանչում, ինչո՞ւ։ Բայց ուշքի գալով սրբեց աչքերը, ուղղեց մազերն ու գնաց։

— Ի՞նչ էք կամենում։

— Նինա, գուցէ ես այսօր գնամ... Մի շաբաթով... Նա մի քիչ տկար է։ Ես նրան կը պատմեմ, որ մի շատ լաւ աղջիկ կայ, որ շատ նման է իրեն, անունը Նինա... Նինա, եթէ դու տեսնես նրան շատ պիտի սիրես. նա այնքան լաւն է, բարի. նա շատ, շատ նման է քեզ... Դու հօ չես նեղանում, որ ես «դուք»-ով եմ խօսում քեզ հետ։

— Ոչ, խնդրեմ։

— Կուզես բարևեմ քեզանից։

— Այո, բարևեցէք։

— Դէ, ցտեսութիւն...

— Դուք իսկապէս գնում էք։

— Այո, մի շաբաթից կրկին այստեղ կը լինեմ։ Գուցէ յաջողուի նրան էլ բերել, ես ձեզ կը ծանօթացնեմ...

— Ցտեսութիւն...

Աղջիկը սառած նայեց նրա ետևից, մինչև նա դուրս եկաւ փողոց և խառնուեց ամբոխին։ Տխուր վերցրեց դատարկ բաժակը և պնակը, վարդը, որ մնացել էր սեղանի վրայ և դանդաղ գնաց։

Որքան էլ տխուր, սարսափելի երկար թւային նրա բացակայութեան օրերը, այնուամենայնիւ անցան։

— Այսօր նա պիտի գայ։

Այդ օրը անցնում էր, միւս օրը նա սպասում էր ու մտածում. «Այսօր կը գայ»։ Այդ օրն էլ զուրս սպասելուց յետոյ, հետևեալ օրը նա սպասում էր, որ «գուցէ այսօր գայ»։

Բայց նա չէր գալիս։

Արդէն խոստացած ժամանակից երկու շաբաթ էր անցել։

Նինան աւելի էր նիհարել ու գունատուել։ Ախորժակը փակուել էր, քունը կտրուել, գլուխը պտտւում էր, աչքերը սևանում։ Բժիշկը ասաց, որ արեան պակասութիւն ունի և բժշկութիւն նշանակեց։ Մի քանի օր այնքան թոյլ էր զգում, որ չկարողացաւ ծառայութեան գնալ։ Ընկերուհու միջոցով սրճարանատիրոջը յայտնեց, որ մի քանի օր չի կարող գալ ու մնաց անկողնում, շարունակ նրա մասին մտածելով։ Անհամբեր նա սպասում էր մինչև սրճարանը փակի և ընկերուհիներից մէկն ու մէկը գար, որ հարցնի արդեօք չի՞ եկել։

Չորս օր պառկելուց յետոյ, նա առաւօտեան վաղ վեր կացաւ, որ սրճարան գնայ, վախենալով զրկուել տեղից, մանաւանդ որ սրճարանատէրը լուր էր ուղարկել, որ եթէ հիւանդ է և չի կարող ծառայել, կարող է չգալ։

Նրա գլուխը պտտւեց, քիչ էր մնում ընկնի. նա նորից նստեց անկողնու վրայ, մի քանի րոպէ անց՝ նորից վեր կա-

ցաւ, լացեց, հագնեց և օրօրելով հասաւ սրճատուն։

Սրճարանատիրոջից ներողութիւն խնդրեց, ասաց որ այժմ լաւ է և կանոնաւոր կը յաճախի. անցաւ իրենց սենեակը և նստեց։ Դեռ սրճարանում ոչ ոք չկար։ Ընկերուհիներից իմանալով, որ դեռ չի եկել, խնդրեց որ մի բաժակ թէյ տան։

Տաք թէյը մի քիչ կազդուրեց նրան. նա վեր կացաւ և սկսեց օգնել ընկերուհիներին՝ բաժակները, ամանները մաքրել։ Ժամը տասներկուսից անց էր, որ աղջիկները մէկը միւսի ետևից վազեցին Ինայի մօտ, աղմուկով իրար հրհրելով, որ առաջինը հաղորեն։

— Ինա՛, ուրախացիր, եկա՛ւ...

— Եկա՛ւ, եկա՛ւ,—իրար ետևից կրկնեցին աղջիկները։

— Մենակ է նա,—մի փոքր լռելուց յետոյ հազիւ արտասանեց նա, բռնելով սիրտը և ոտի ելնելով։

— Այո՛։

— Ի հարկէ։

— Նա միշտ մենակ է գալիս։

Նա ուզեց վազել ընկնել նրա գիրկը, բոլորի առաջ ասել, որ սիրում է, որ կը մեռնի առանց նրան, բայց շուտով հասկացաւ, որ խելագար կը կարծեն և իսկոյն և եթ սրճարանի տէրը դուրս կը վռնդի փողոց։

Նստեց առաջւայ տեղն ու անմիտ աչքերով նայում էր մի կէտի։

— Ինա, գնա. քեզ է սպասում։

Նա անգիտակցաբար վեր կացաւ, մի քանի քայլ արեց դէպի դուռը ու էլի ետ եկաւ։

— Խնդրում եմ գնացէք, ես չեմ կարող։

Աղջիկներից մէկը գնաց իմանալու, թէ ինչ է կատմենում։

— Բարև ձեզ պարոն. վաղուց է չէք երևում... Ի՞նչ կը կամենայիք։

— Իսկ ո՞ւր է Ինան։

— Այստեղ է նա, մի քիչ տկար է, մի շաբաթ է պառկած էր, նոր է վեր կացել։

— Խնդրեցէք նրան, որ գայ. ասացէք, որ կարևոր բան պիտի ասեմ։

— Իսկոյն։

— Նինա, քեզ է ուզում։ Այնպէս տխուր է նա. գնա տես։

Նինան վեր կացաւ, օրօրելով մօտեցաւ դռանը, նայեց դռան ճեղքից և թւաց թէ իսկոյն կը ընկնի. սիրտը այնպէս արագ էր բաբախում, որ շնչառութիւնը արգելում էր։ Մի բաժակ ջուր խմեց և հաւաքելով ուժերը դուրս եկաւ։

Ինքն էլ չիմացաւ թէ ինչպէս հասաւ նրա սեղանին, նրան թւաց, թէ դա նա չէ սեղանի մօտ նստած, այլ մի օտար մարդ, որին նա առաջին անգամն է տեսնում։

— Նինա... Նինա...

Լսեց Նինան նրա ձայնը, բայց նրան թւաց, թէ հեռից, շատ հեռից է գալիս։

— Ի՞նչ է պատահել Նինա. դու ինձ չե՞ս ճանաչում։

— Ինչու այդքան ուշացաք, ուշքի գալով շշնջաց Նինան, հազիւ արտասանելով խօսքերը։

— Նինա... գիտես... նա...

Նրա ձայնը դողաց և չկարողացաւ վերջացնել։

— Ի՞նչ...

— Նինա, նա այլևս նման չէ քեզ, այսինքն դու նման չես նրան, դու ապրում ես, իսկ նա...

— Ես ձեզ չեմ հասկանում։

— Նա մեռաւ, Նինա...

— Մեռա՞ւ։

— Միծաղելին այն է, Նինա, որ ես շարունակում եմ և ուտել, և սուրճ խմել... Միծաղելի է չէ՞...

ՄԻՔ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ՏՐԻՕԼԷՏ

Մաշում է իմ սիրտն անդադար
Հին երգ մի ծանօթ ու տրտում,
Կիզում է կարօտ մի արթուն,
Մաշում է իմ սիրտն անդադար։
Դրժել եմ կարծես մի երդում,
Մի ուխտ եմ թողել անկատար—
Մաշում է իմ սիրտն անդադար
Հին երգ մի ծանօթ ու տրտում...

Վահան Տէրեան

---

* * *

Նետում եմ աւէր իմ կեանքը ահա
Պատուհանների մեծ ճամբի վրայ.
Թող տանի բախտը հիմա ուր կուզի,
Էլ ոչ մի շշուկ հոգիս չի յուզի։

Իմ հանդէպ հիմա կայ մի գերեզման,
Ուր լուռ թաղեցի սէրըս յաւիտեան.
Ի՞նչ փոյթ, էլ որքան հողմ ու ցուրտ փչի՝
Հանգած կրակը նորից չի՛ հանգչի...

Արմենուհի Տիգրանեան

ԱՂՕԹՔ

Լուռ ու դանդաղ
Դիերն անթաղ՝
Հողն է դնում ծեր քահանան։
«Ցաւ ու չարիք,
Արեան մրրիկ՝
Այս աշխարհից միշտ չքանան...

Ոխը սրտին,
«Վրէժ» շրթին,
Ատելութեամբ վառուած անզօր,
Քանի՛ քանի
Վառ պատանի,
Ծեր ու մանուկ ընկան այսօր։

Թէ ունես դեռ
Պատուհաս, Տէր,
Անցո՛ւր մեզնից ու խնայի։
Ների՛ր, որ մեր
Հոգին անմեռ
Վրէժ սնեց, ձգտեց մահի։

Խաչը մէկ-դին
Նետած գետին,
Քինախնդիր բոցով վառուած,
Մարտիկների
Շարքին արի՝
Ես մաղթեցի հատու հաւատաց։

Ներիր, որ քո
Հովի ներքոյ
Բորբոքեցինք պայքար ու թոյն.
Մեր խեղճ սրտին
Տուր վերատին
Խաղաղութիւն, խաղաղութիւն...»

Մութի միջին
Պարտքը վերջին՝
Կատարում է ծեր քահանան...
«Ցաւ ու չարիք,
Արեան մրրիկ
Այս աշխարհից մի՛շտ չքանան»։

Գ. Քեալաշեան

---

* * *

Որպէս հողմածեծ տերևը աշնան,
Որպէս մոռացած որբը դժգունակ,
Երկնքից ընկնող ասուպի նման՝
Անյոյս դողում եմ լուսամուտիդ տակ։

Դու չգիտես այդ... Քնած ես անդրը,
Դու, իմ երազած քնքոյշ հրեշտակ...
Իսկ ես՝ հոգեզմայլ ու արտասուաթոր
Անուշ հալւում եմ լուսամուտիդ տակ։

Անուրջ

ՍՊԻՏԱԿ ՏԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Կան մենաւոր մենակ սրտեր
անյայտ անտես հեռուներում,
խոր ու մթին անտառներում...
—Ո՞վ է նրանց ողջոյն բերում...

Մոլդաւական երգից

Այդ տունը վաղուց, շատ վաղուց է կանգնած այդ անտառի մէջ։

Ես նրան յիշում եմ դեռ մանկութիւնից։

Այնտեղ, ուր փոշոտ խճուղին, ինչպէս մի գորշ ժապաւէն, օձապտոյտ ոլորուումներով, իւ ծննդավայրից վազում է դէպի Սևան, այնտեղից միշտ երևում է նա՝ անտառապատ սարի բարձրում բաղմած։ Ծառերի միապաղաղ կանաչի մէջ այդ սպիտակ շէնքը անցնորդներին թւում է ինչ-որ խորհրդաւոր բան։ Աղօթասէր օտարականին նա թւում է մատուռ կամ վանք, իսկ Ռուսաստանից նոր եկած պետական պաշտօնեայի սրտում զարթեցնում է հազար ու մի կասկածներ, թէ արդեօք հակապետական գործերի մի որջ չէ՞ դա, արդեօք այնտեղ կեղծ դրամներ չե՞ն կտրւում... Բայց թէ՛ օտարականը և թէ պետական պաշտօնեան սխալւում են միշտ։ Այդ սպիտակ տունը, որ գոռոզ կերպով բազմել է անտառի գլխին,—հանրակացարան է ծծումբի հանքի բանւորների, որոնցից սակայն նա դատարկ է հիմա։ Կար ժամանակ, որ նա այդ վայրի տեղում իրենից ներկայացնում էր մարդկային մի փեթակ, որի մէջ բազմաթիւ ձեռքեր էին աշխատում առաւօտից մինչև երեկոյ և բազմաթիւ գլուխներ էին ննջում երեկոյից մինչև առաւօտ։ Բայց այժմ դատարկ է նա, ինչպէս ծառի վրայ հիւսած թռչունի մի բուն, որի մէջ եղած ձագերն իրենց մօր հետ թռել են վաղուց. նրա տէրերը թղթախաղում սնանկանալով, փակեցին հանքը, փակեցին հանրակացարանը և գնացին հանգստանալու քաղաքում... Բայց նրանք այնքան քարի

եղան, որ չհեռացրին իրենց ծեր ծառային և թողին նրան այդ տանը պահապան։

Այդ ծառան քեռի Վարոսն է, սպիտակ միրուքով մի փոքրիկ ծերունի, որ շաբաթը մի քանի անգամ՝ երկաթածայր գաւազանը ձեռին, ռուս զինուորի հաստ կօշիկներով, ինչուամ է գիւղ և կէս օրին վերադառնում մի փոքրիկ կապոցով կամ մի տոպրակով։

Վաղուց ապրում էր նա այդտեղ իր պառաւի հետ միասին, իրենց հաւերով և ծեր շնով։

Ծեր ամուսիններն իրենց փոքրիկ, կնճռոտ դէմքով, խօսելու եղանակով, շարժ ու ձևով, այնքան նման էին իրար, որ կարելի էր կարծել, թէ խստապահ կրօնաւորից դաստիարակուած քոյր ու եղբայր են։ Երկուսն էլ խօսում էին ծոր տալով, զգոյշ և իրարից ակնածելով, ինչպէս նորապսակ ժամանակ։ Ինչպէս պսակի առաջին օրերին, այնպէս էլ հիմա, նրանք չէին վստահանում իրար անուն տալ, և միմեանց կանչում էին «Ա՛յ տօ»։—«Էսօր հաւերին կուտ տուՔ ես, ա՛յ տօ» —հարցնում էր ծերունին։—«Ի հարկէ, ա՛յ տօ, ի հարկէ, տուել եմ»,—պատասխանում էր պառաւը։ Զաւակներ չունենալով, ծերերն այդ անտառի մէջ իրենց հոգատարութիւնն ու խընամքը նուիրում էին հաւերին, պառաւ շանը, այդ տանը և նրա մէջ եղած իրերին։

Առաւօտները զարթնելով, պառաւը նախ և առաջ կուտ էր տալիս հաւերին, մաքրում էր նրանց բունը, երբեմն յանդիմանում նրանց. ապա օջախի վրայ լափ էր պատրաստում շան համար։ Իսկ ծերունին նախ պտտում էր տան շուրջը, յետոյ մտնում էր սենեակները մէկ-մէկ դիտում, տեսնելու հօ մի բան չի՞ պատահել։

Առհասարակ տունը և նրա մէջ եղած իրերը մեծ անհանգստութիւն էին պատճառում ծերերին։ Աւելի անհանգստանում էր պառաւը։

— Ա՛յ տօ, մի բան չպատահի տանը,—երբեմն ասում էր նա խորհրդաւոր, կարծես մի բան գուշակելով։

— Ի՞նչ, ա՛յ տօ,—հարցնում էր ծերունին թագուն երկիւղով։

— Ո՛վ է իմանում, ա՛յ տօ. հարամին շատ,—աւելացնում

էր պառաւը, նոր կասկած գցելով իր ծերունու սիրտը։—Բան չգողանան...

— Ով կը համարձակուի,—ասում էր ծերունին աշխատելով հանգստացնել և՛ պառաւին և՛ իրեն,—եթէ մի բան ըլի, Բօղարը կիմացնէ...

Բօղարը ծեր շունն էր. նա իսկապէս զգաստ և աչքաբաց էր. հարկ եղած դէպքում նա միշտ հնչեցնում էր իր խռպոտ ձայնը անտառի լռութեան մէջ։

— Որ իմացնի, ինչ պիտի անես,—առաջ էր տանում իր խօսքը պառաւը, ակնարկելով ամուսնու ծերութիւնը։

— Ա՛յ,—ասում էր ծերունին աչքերը յառելով պատից կախուած հրացանին։

— Յիսուս ու Քրիստոս,—խաչակնքում էր երեսը պառաւը տագնապով,—ինչեր ես ասում, այ տօ...

Նրանց անհանգստութիւնն աւելանում էր մանաւանդ այն ժամանակ, երբ գիշերը փոթորիկ էր լինում անտառում։ Երբ տունը շրջապատող վիթխարի ծառերը խուլ, անվերջ շառաչում էին քամուց և խոր անտառը տրնգում էր խաւարի մէջ, ու դրա հետ միաժամանակ քամին ծղրտում հալածական դևի նման,—ծերերին թւում էր թէ ծառերի արանքում և թէ տան պատերի տակ վխտում են հազար չար, հազար աւազակ։ Անկողնի մէջ, համակ լսողութիւն դարձած, ականջ էին դնում փոթորկի ձայնին և մինչև լոյս քուն չէր գալիս նրանց աչքին։ Նրանց անհանգստութիւնն աճում էր աւելի ձմեռ ժամանակ։ Երբ ձիւնն սպիտակ շուրջառ էր քցում ծառերի վրայ, և հաւքերը, նոյնիսկ ագռաւները հեռանում էին նրանց բնակարանի մօտից, ծեր ամուսինները փակւում էին իրենց սենեակում։ Պառաւը նստում և բրդէ գուլպայ էր գործում, իսկ ծերունին շուտ-շուտ փայտ էր աւելացնում վառարանի կրակին։ Ախորժելի ջերմութիւնը ձմեռ ժամանակ զարթեցնում է հին-հին յիշողութիւններ. և նրանք պատմում էին իրար անցած դէպքեր, մոռացած զրոյցներ. երբեմն պառաւը երանի էր տալիս գիւղում ապրողներին, որ տեղեակ են մնում աշխարքի բանին և շուտ-շուտ ժամ են գնում։

— Ոչինչ, այ տօ, Զատիկը գայ, ճամբէն բացուի, դու էլ կերթաս,—մխիթարում էր ծերունին այդպիսի դէպքերում։

Բայց յաճախ պառաւին պաշարում էր տխրութիւն և նա դառնում էր ծերունուն.

— Ա՛յ տո, ինչ պիտի անենք, եթէ յանկարծ էստեղ մի բան պատահի մեզ։

— Ի՞նչ կարող է պատահել,—միամիտ հարցնում էր ծերունին։

— Ո՛վ է իմանում, այ տո, յանկարծ հիւանդացանք. ոնց պըտի տէրտէր կանչենք ճաշակելու։

— Է՜հ,—խնդում էր ծերունին,—տէրտէրն ինչ ենք անում, այ տո. առանց տէրտէրի էլ եօլա կերթանք։

— Ո՞նց թէ... առանց ճաշակելու մեռնել,—զարմանում պառաւը, և փոքր ինչ լռելուց յետոյ աւելացնում.

— Չէ, այ տո. ես առանց ճաշակի չեմ կարող մեռնել... Էսօրւանից ասում եմ—հէնց որ ծանր հիւանդանամ՝ տէրտէր կը կանչես։

— Է՜հ, այ տո, ինչի ես տխուր բաներ ասում,—նկատում էր ծերունին ակնյայտ դժգոհութեամբ,—ուրախ բաներից խօսա...

Պառաւը լռում էր մի փոքր՝ մտքի ետևից ընկած և կրկին դառնում ծերունուն.

— Ի՜նչ լաւ կը լինէր, այ տո, եթէ գեղում ապրէինք։

— Ի հարկէ,—պատասխանում էր ծերունին,—իհարկէ, լաւ կը լինէր. իսկ եթէ մի զաւակ էլ ունենայինք, որ մեզ պահէր...

Եւ նրանք, երկուսը միասին, հառաչում էին այս խօսքերի վրայ, առանց իրար երեսի նայելու։

Հառաչում էին ու լռում...

Երևի այսպէս երկար կը շարունակէր նրանց կեանքը, եթէ չպատահէր մի տխուր դէպք։

* * *

Ծերունին ազատ ժամերին սիրում էր պտտել անտառի մէջ։ Ամառւայ և աշնան օրերին նա երկար տարածութիւններ էր անցնում չոր փայտ ու պտուղներ հաւաքելու։ Այդպիսի դէպքերում ծեր, բրդոտ շունը զառամ քայլերով միշտ հետևում էր իր տիրոջը, իսկ պառաւը շէմքում՝ ձեռը ճակատին, նայում էր նրանց ետևից։

Մի անգամ գարնանը այդպիսի շրջագայութիւնների ժամանակ, Ծերունին շան շնորհիւ գտաւ եղնիկի մի փոքրիկ ձագ՝ սուր-սուր ականջներով, որն այնուհետև դարձաւ Ծերերի հոգատարութեան ամենասիրելի առարկան։ Օկզբում փոքրիկ կենդանուն նրանք կերակրում էին գիւղից բերած կաթով, ապա երբ նա սկսեց իրեն հաւաքել, նրան ուտեցնում էին թրջած հաց, սառը կերակուր, կանաչ խոտ և ծառի տերևներ։

Պէտք էր տեսնել, թէ ինչպէս Ծերերը խնամքով, փոխէ-փոխ, խոտ էին մօտեցնում փոքրիկ եղնիկի դնչին, ինչպէս էին գուրգուրում նրան և սովորեցնում ման գալու եղանակը։ Պառաւը նրա համար փափուկ խոտերից շինել էր մի անկողին, ուր միշտ հանդարտ մշղոցով հանգստանում էր փոքրիկ կենդանին։ Քնած տեղը նա այնքան անօգնական ու թոյլ էր երևում, որ պառաւը երկիւղով մտածում էր, թէ չլինի մի բան պատահի նրան։

— Ա՛յ տօ, վախենում եմ թէ մի բան պատահի սրան, —երբեմն կասկած էր յայտնում պառաւը,—ի՞նչ ուտացնենք, որ լաւ ըլի։

Ծերունին մի փոքր միտք էր անում և ասում.

— Ինչ-որ իրա մէրն է ուտում՝ խոտ, տերև՛, ջո՛ւր։

Բայց պառաւը դրանով չէր գոհանում. նա պահանջում էր, որ Ծերունին շուտ-շուտ կաթ բերի գիւղից։ Եղնիկի ձագը նրան թւում էր իբրև մի որբ երեխայ, որին պէտք է լուռ ուտեցնել, խնամել, գուրգուրել. և նա շատ ափսոսում էր, որ չի կարող իմանալ փոքրիկ կենդանու սրտի ուզածը։ Յաճախ նա գրկում էր նրան ու հարցնում.

— Ի՞նչ կուզես, բիժօ ջան։

Փոքրիկ անասունը միամիտ, մոլոր հայեացքով նայում էր պառաւին և տրտում խոնարհում թախծոտ աչքերը։ Այդ տեսնելով պառաւը սղմում էր նրան գրկին և համբուրում նրա գլուխը, աչքերը, ականջները։

— Բիժօ ջան, բիժօ ջան։

Կարճ ժամանակում Ծերերը, մանաւանդ պառաւը, այնպէս սովորեցին եղնիկի այդ ձագին, որ երբ նա մի րոպէ չէր երևում, նրանք երկիւղով հարցնում էին իրար.

— Բիժօն ո՞ւր է, ա՛յ տօ։ Չլի թէ...

Ու տագնապով այս ու այն կողմն էին ընկնում նրանք

«բիժոյին» որոնելու։ Ցաճախ նրան գտնում էին շան մօտ նստած կամ նրա հետ խաղալիս։ Ինչպէս որդին կորցրած ծնողը գտնի իր զաւակին, այդպիսի դէպքերում մեծ էր լինում ծերերի ուրախութիւնը. փոխէ-փոխ համբուրում էին նրանք եղնիկին և գրկած տանում էին տուն՝ ժպտալով, հանդիսաւոր, ինչպէս մի կնունք։

Մի անգամ սակայն, աշնան առաջին օրերին, փոքրիկ եղնիկը անյայտացաւ յանկարծ։

Այդ օրը ծերունին տանը չէր. նա գնացել էր գիւղն աւիւրի։ Ուստի պառաւը մենակ դուրս ելաւ որոնելու։ Երկար նա փնտրեց եղնիկին տան շուրջը, պատերի տակ, հաւանոցում, շան մօտ, և ոչ մի տեղ չգտաւ։

— Բիժո, բիժո,—կանչում էր նա և ինքն իր հետ խօսում. «Տեսնես ի՞նչ եղաւ, տեսնես ո՞ւր գնաց»։

Ինքն իրեն խօսելով, նա մի առ մի նայեց մասրի թփերը, մտաւ մացառների մէջ, կանչեց, որոնեց, բայց եղնիկը չերևաց։

Այդ տեսնելով, նա տան դուռը կողպեց, շանը վերցրեց և մտաւ անտառ։ Նրան թւում էր, որ եղնիկը տեսել է իր նման մէկին և հետևել նրան, թէ չէ, մտածում էր նա, ինչ պէտք է պատահած լինէր։

Մի չոր ճղափայտ ձեռին, պառաւը, շունն ետևից, քայլում էր նեղ արահետով և շուտ-շուտ կանչում.

— Բիժո, բիժո...

Սակայն նրա ձայնը կորչում էր շառաչող ծառերի աղմուկի մէջ։ Բարձրացած խուլ փոթորիկն ալեկոծում էր ծառերը և հողմավարտերևները, ինչպէս դեղնագոյն թիթեռների անհամար խմբեր, պտտւում էին ծառերի արանքում, ասես մի չար ձեռքից հալածւած։

Չնայելով վատ եղանակին, պառաւը շարունակում էր առաջ գնալ և խրախուսել շանը։ Անցնելով սայթաքուն սարի տեղերից, չոր ճղափայտերի կոյտերի վրայից, անելով անտառի վերելք ու վայրէջք, նա թէև սաստիկ յոգնել էր, քրտինքը թափւում էր քունքերից, բայց և այնպէս չէր դադարում որոնելուց ու կանչելուց։ Շունը լեզուն հանած, հոտոտելով վազում էր այս ու այն արահետով և շուտ-շուտ իր տիրու-

հուն նայում, ըստ երևոյթին իմանալու, թէ բաւական չէ՞ արդեօք որքան փնտրեցին։

Երբ նրանք հասան մի փոքրիկ բացատի, շունը յանկարծ կանգ առաւ ինչ-որ ձայնի ունկնդիր։ Պառաւը նոյնպէս կանգ առաւ և ականջները սրեց։ Մօտ, շատ մօտից լսւեց ինչ-որ ճչոց, որ նման էր անասունի ձայնի։

— Բօղարը, նա է. բիժօն,—ճչաց պառաւն ուրախացած։

Շունն իսկոյն հասկացաւ տիրուհու միտքը և առաջ վազեց։ Պառաւն ուրախութիւնից դողացող քայլերով հետևեց նրան։

— Նա է, նա... Բիժօ, բիժօ...

Նրանք անցան բացատը և նորից մտան ծառերի մէջ, դիմելով ձայնի կողմը։ Սակայն այնտեղ, ուսկից լսւեց այդ մընչոցը, ոչինչ չերևաց. միայն վերևում, մի ծառի կատարից ինչ-որ մի թռչուն թռաւ թևերը թափահարելով։

Մի քանի րոպէ պառաւը մնած կանգնած՝ խաբւածի պէս շուրջը նայելով։ Ապա դարձաւ շանը.

— Չէ, Բօղարը, նա չէր. նա չէր... նա չկայ...

Արդէն իրիկնաժամ էր, երբ պառաւը ձեռնունայն ու յուսահատ տուն վերադարձաւ։ Փոքրիկ եղնիկը չերևաց ոչ մի տեղ։ Տուն դառնալով, նա զգաց մի խոր դատարկութիւն տան մէջ և իր սրտում։ Նրան թւում էր, որ մի հարազատ բան պակաս է, և ամեն բան այնպէս չէ, ինչպէս միշտ։ Նրան վշտացնում էր ոչ այնքան կորուստը, որքան անօգնական վիճակը փոքրիկ կենդանու։ Եւ նա մտածում էր, թէ ինչ պիտի պատահած լինէր նրան. տեսնես գէլ հանդիպեց, թէ մի ուրիշ գազան, իմ խեղճ բիժօ...

Ծերունին գիւղից եկաւ մի փոքրիկ տոպրակ ալիւրով։ Տեսնելով պառաւին տխուր, նա անհանգստացաւ։

— Ի՞նչ է պատահել, այ տօ,—հարցրեց։

Պառաւն իր մոլոր հայեացքը յառեց ծերունու դէմքին։

— Բիժօն չկայ, այ տօ... ման եկայ. չկայ...

Ծերունին զարմացաւ։ Պառաւը մանրամասն պատմեց նրան եղելութիւնը։

Այդ գիշեր նրանց քունը չտարաւ։ Երկար մտածում էին, խօսում, թէ արդեօք ինչ պատահած կը լինի փոքրիկ կենդանուն, արդեօք ողջ է։

— Ա՛յ տո, տեսնես որտեղ կը լինի հիմի,—շուտ-շուտ հարցնում էր պառաւը։

— Եսիմ, այ տո, ո՞վ է իմանում։

— Չըլի՞ որսկան մարդիկ բռնեցին։

— Դժւար թէ...

— Ո՛վ գիտի մի գէլ պատահեց, այ տո։

— Դժւար թէ... Շատ կարելի է մոլորւել է մի տեղ։

— Կամ ո՞վ գիտի ոտքերն ընկել է պատատուկների մէջ...

— Էդ էլ կը պատահի, այ տո,—հաւանութիւն տւեց ծերունին.—առաւօտը կերթամ ման կը գամ։

— Հա՛, այ տո, հա, գնանք. ես էլ կը գամ... Իմ խեղճ բիժօ... իմ խեղճ բիժօ...

* * *

Առաւօտեան վաղ ծերերն ելան կորած եղնիկին որոնելու։ Ծերութիւնից կքած ուսերով նախ անցան նրանք տան շուրջը, նայեցին բոլոր անկիւնները, փոսերը, խոռոչները, և ոչինչ չգտնելով, տունը փակեցին ու մի-մի փայտ ձեռներին մտան անտառ։

Շունը հետևեց նրանց։

Արևը նոր ծագում էր։ Խոտերի և ծառերի վրայ փայլում էր ցողը, աշնանային այն առատ ցողը, որ երբեմն յիշեցնում է գիշերը տեղացած անձրև։ Հազիւ մի քանի քայլ էին արել նրանք, բայց արդէն նրանց ոտքերն ու փէշերը թրջւել էին շաղից։ Նրանք այժմ գնում էին այն կողմը, ուր պառաւը չէր եղել առաջին օրը։ Ծառերի կախ ընկած ճիւղերը թաց տերևներով շուտ-շուտ դիպչում էին նրանց գլխին, երեսին, երբեմն էլ ճիւղերին հիւսւած ոստայնը կպչում էր նրանց դէմքին, բայց նրանք այս ամենին անուշադիր՝ առաջ էին գնում չորս կողմն աչք ածելով։

— Ա՛յ տո, ով գիտի մի տեղ քնել է,—կասկած յայտնեց պառաւը։

— Շատ կարելի է, գիտես, այ տո,—կանգ առաւ ծերունին,—լաւ կանեմ մի կանչեմ։

Եւ նա մի քանի անգամ իրար վրայ կանչեց «բիժօ»-ին։

Ձայն չկար։ Անտառի մէջ շարժում չէր լսւում։ Միայն ծառերից կաթում էր ցողը՝ հատ-հատ, ծանր կաթիլներով։

Մի փոքը տեղ գնալուց յետոյ, ծերերը բաժանուեցին իրարից առանձին որոնելու։ Շունը գնաց պառաւի հետ, իսկ ծերունին մնաց մենակ։ Նա գիտէր, որ եղնիկները սովորաբար նստում են ծառերի ընների մօտ, ուստի և շուտ-շուտ նայում էր ծառերի ըներին։ Իսկ պառաւը հետևում էր միայն շան գնացած ուղղութիւններին։

Ցողը շարունակում էր կաթել անտառում, ինչպէս խախուտ տանիք ունեցող բնակարանը անձրևի ժամանակ։

Առանձին-առանձին երկար որոնում էին նրանք և շուտ-շուտ կանչում իրար ծառերի խորքից.

— Ա՛յ տո, հէյ... գտա՞ր...

— Չէ՛, ա՛յ տո, չէ՛... Դու գտա՞ր։

— Չէ՛... չէ՛...

Եւ արձագանքը, կարծես նրանց ծաղրելու համար, կրկնում էր. «Չէ՛, չէ՛...»։

Երկար ու ապարդիւն որոնելուց յետոյ, նրանք վերջապէս նորից գտան իրար և վերադարձան տուն։ Պառաւը չէր ուզում դատարկ ձեռքով տուն դառնալ և կամենում էր շարունակել որոնումը. բայց ծերունին համոզեց նրան, որ դա զուր է։ Այժմ պառաւի ուսերն աւելի էին կքել, քրտինքը ծածկել էր նրա դէմքը, և նա դժուարանում էր խօսել։ Ծերունին նոյնպէս լուռ էր։

— Ես ախր երազը տեսայ, ա՛յ տո... Տեսայ, որ էսպէս բան պըտի պատահի,—ասաց պառաւը խորհրդաւոր, հազիւհազ շնչելով.—Հիմի դու ինձանից վախեցիր, ա՛յ տո,—աւելացրեց նա աւելի խորհրդաւոր։

— Ինչե՞ր ես ասում, ա՛յ տո...

— Է՛հ,—հառաչեց պառաւը և լռեց։

Երբէք նա այնքան յուզած չէր եղել, որքան այդ երկու օրը, մանաւանդ այդ րոպէին... Փոքրիկ եղնիկի անհետացումը վրդովել էր նրա հանգիստը և նա մի վայրկեան չէր կարողանում մոռանալ նրան։

Հետևեալ ամբողջ օրը պառաւն անցրեց տխուր։ Մի օրուայ մէջ նա կարծես նիհարեց, իսկ երկրորդ օրը մնաց անկողնում պառկած։ Նա թեթև հազում էր։

— Ի՞նչդ է ցաւում, ա՛յ տո, —ասում էր ծերունին նայելով պառաւի պղտոր աչքերին,—դու բիժոյի համար իսկի մի

մտածի. եկող տարի մի ուրիշը կը գտնեմ... Փառք Աստծու, մեր մէջում նրանցից շատ կան...

Պատասխանի փոխարէն պառաւը խզզացնում էր միայն և թաց աչքերով նայում ամուսնուն։ Մի-ւս օրը նա ծերունուն կանչեց իր մօտ և ասաց.

— Ա՛յ տո, լաւ կը լինէր, որ ես ճաշակէի։

Ծերունին լուռ նրան նայեց։

— Տխուր բաներ մի խօսա, այ տո,—ասաց նա։

— Չէ, այ տո. չէ... Տեսնում եմ որ՝ չէ...

— Պառաւի աչքերում փայլեցին արցունքներ։

Քիչ լռելուց յետոյ, նա շարունակեց.

— Դու քեզ լաւ կը պահես, այ տո... Շորերդ չթողնես կեղտոտ. շանը սոված չպահես. խեղճ կենդանի է... Հաւերին էլ լաւ մտիկ արա...

Ծերունին ջանում էր արցունքները զսպել։

— Ինչի ես տխուր բաներ ասում, այ տո։

— Չէ, այ տո,—շարունակեց պառաւը,—լաւ կըլի, որ ես ճաշակւեմ։ Բայց ամենից լաւ կը լինէր, այ տո, եթէ մի անգամ էլ ժամ գնայի, խորանը համբուրէի... էլ բան հարկաւոր չէր։ Կամ թէ չէ մին էլ տեսնէի իմ հէրանց տունը...

— Դեռ կը տեսնես, այ տո, կը տեսնես,—յոյս տուեց ծերունին,—օրերը չհատան։ Եթէ կուզես մի շաբաթից յետոյ կերթանք։

Պատասխանի փոխարէն պառաւի բերանից թռաւ մի խոր հառաչանք։ Նա լռեց։

Ծերունին կռացաւ դէպի նա։

— Ա՛յ տո, ինչ եղաւ քեզ, այ տո,—կանչեց ծերունին,—այ տո, կուզես գնամ տէրտէր կանչեմ։

Պառաւը չէր պատասխանում։

Նա արդէն մեռել էր։

Յաջորդ օրը ծերունին իջաւ գիւղ և մի սայլ տարաւ սպիտակ տուն՝ պառաւի մարմինը փոխադրելու։ Թաղեցին նրան գիւղի գերեզմանատան ծայրում։ Թաղումից առաջ ծերունին խնդրեց տէրտէրին, որ պառաւին ճաշակի։ Քահանան կատարեց նրա խնդիրքը, և ծերունին շատ գոհ մնաց, որ անկատար չթողեց իր պառաւի փափագը։

Այժմ սպիտակ տան մէջ ծերունին ապրում է մենակ՝ իր շան հետ միասին։ Շուտ-շուտ նա իջնում է գիւղ և այցելում պառաւի գերեզմանը։ Առաջւայ պէս նա դարձեալ հսկում է իրեն պահպանութեանը յանձնուած տանը և նրա մէջ եղած իրերին, սպասելով կրկին, որ տէրերը կը գան մի օր և հանքը նորից կըսկսի գործել։ Ցաճախ նստում է նա իր կացարանի շէմքին և, հայեացքը հեռուն նետած, յիշում է իր պառաւին ու ինչ որ լուռ դնդնում ինքն իրեն։ Երբեմն էլ,—այս լինում է առանձնապէս երեկոները,—երբ մութն իջնում է անտառի վրայ, նա դառնում է ոտքերի մօտ պառկած շանը և խօսում նրա հետ.

— Էդպէս, Բօղար, այ տօն էլ չկայ,—ասում է նա մեղմ, մտերիմ ձայնով,—նա մեզ մենակ թողեց ու գնաց։ Նա էլ չի՛ գայ, Բօղար, էլ չի՛ գայ։ Անխի՛ղճ այ տօ, խե՛ղճ այ տօ։

Շունը դունչը թաթերի վրայ դրած, լուռ նայում է տիրոջ դէմքին ու աչքերը խոնարհում։ Նա հասկանում է, որ խօսքն այն պառաւի մասին է, որն իր համար լափ էր պատրաստում, և որը հիմա ուր-որ գնացել է։

Տեսնելով շան կարեկից լռութիւնը, ծերունին ոգևորւում է աւելի և շարունակում իր զրոյցը։

Մինչ այդ մութն աւելի ու աւելի թանձրանում է անտառում, և նրանք երկար-երկար մնում են միևնոյն տեղը նստած...

ՍՏ. ԶՕՐԵԱՆ

ԿԱՅԱՐԱՆԻ ՄՕՏ

Տխրում եմ վհատ, արտասւում առատ՝
Այս ցուրտ, ձիւնամած դաշտերի դիմաց,
Յիշում եմ մէկի դէմքը անարատ,
Սիրում եմ մէկի ուղին ամպամած...
Գնացքը, թովիչ, թողել է թախիծ
Երկաթագծի սառնութեան վրայ.
Դաշտերում սառոյց, անձրև ու կսկիծ,
— Ա՜խ, ես ինչպէս տամ անունդ հիմա...

Ս. Աֆրիկեան

ՍՕՍԻՆ

Պատուհանիս տակ սոսին երկնամբարձ,
Մեղմիկ սոսափում, երգում է կամաց։

Ես այդ երգի մէջ քո երգն եմ լսում,
Միշտ նա է հնչում իմ տխուր սրտում։

Ուզում եմ յանկարծ, յանկարծ գրկել քեզ,
Բայց դու հեռու ես, հեռու ու անտես։

Ցուզում է հոգիս, յուզում ու լալիս,
Շուրթերս դողդոջ՝ անուն են տալիս։

Նայում եմ երկար, նայում քո ճամբին,
Դու չես երևում, դու չկաս կրկին։

Թափում են անվերջ, թափում շիթ առ շիթ,
Գիշեր աչերէս արցունքներս վճիտ։

Եւ սոսին, սոսին, սոսին երկնամբարձ,
Պատուհանիս տակ երգում է կամաց։

Ո՞վ գիտէ, գուցէ իր ցաւն է երգում.
Ես չեմ հասկանում... քո երգն եմ լսում։

Վարսենիկ Աղասեան

---

* * *

Բուռնօրէն, վայրիօրէն, անվերջօրէն սիրել կուզեմ ես.
Փաթթուիլ ծունգերուդ դողդոջուն ձեռներով,
Բաբախուն կուրծքով զգալ նայուածքը աչքերուդ,
Զգալ անհանգիստ շունչդ լռումի խորութեան մէջ...
Ու յետոյ՝
Անսանձօրէն, խենթօրէն գրկել քեզ,
Թաղել գլուխդ կուրծքիս վրայ...
Մազերդ, այտերդ, շուրթերդ համբուրել, համբուրել...
. . . . . .
Ու նորէն ծնրադրել, յոգնած, դժգունած պատկերիդ առաջ...
Նորէն գրկել ծունգերդ...
Եւ արտասուել ու սիրել, փայփայել ու հեկեկալ,
Բուռնօրէն, վայրիօրէն, անվերջօրէն...

Ռաֆայէլ Զարդարեան

ԵՐԿԻՐՆ ԿՈՎԿԱՍ

(Ռուս ժանդարմի նամակներից)

Վլադիկաւկազ, ապրիլ ամսի 16, 1910 թիւին։

Իմ սիրելի և թանգագին եղբայր Պեսոր Օնուֆրիչ! Ես արդէն հասայ Կովկաս և այժմ գտնւում եմ Վլադիկաւկազ քաղաքում։ Քաղաքի միջով մի գետ է անցնում, որ կոչւում է Տերեկ։ Շատ աղմկալի գետ է, ինձ դուր եկաւ քաղաքը։

Սիրելի եղբայր Պեսոր Օնուֆրիչ! Ես Կովկասում կը գործեմ եռանդով և մեծ անձնուիրութեամբ։ Իւրաքանչիւր մարդ, որ ունի խելք ու խղճմտանք, պարտաւոր է իր անձը նուիրել մեր պաշտելի Ինքնակալ և Աստծոնաղորմած Կայսր Նիկոլայ II Ալէքսանդրովիչին։ Եթէ Աստուած տայ՝ Ագրաֆէնան տղայ ծնի (երեք ամսից յետոյ, Ագրաֆէնայի իրա ասելով ծնելու ժամանակն է)—անունը կը դնեմ Նիկոլայ։ Իսկ եթէ աղջիկ լինի՝ այն ժամանակ մեր պաշտելի Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեոդորովնայի անունով կը կոչեմ՝ Ալէքսանդրա։

Սիրելի և թանգագին եղբայր Պեսոր Օնուֆրիչ, դու, անշուշտ, շատ կը հետաքրքրւես իմ վիճակով. և ես պէտք է անկեղծ կերպով յայտնեմ քեզ, որ գոհ եմ իմ վիճակից։ Ես առաջ եմ գնում պաշտօնիս մէջ և իմ մեծաւորները արդէն ուշադրութիւն են դարձնում ինձ վրայ. որովհետև ես մեծ հեռատեսութիւն եմ ցոյց տւել՝ յեղափոխականներին և տերրորիստներին բռնելու համար։ Բայց ես, իհարկէ, չեմ ուզում գովել ինձ, հարկաւոր է համեստ լինել։ Ո՛չ ոք այնքան հաւատարիմ չի ծառայի Ցարին և Հայրենիքին, որքան որ ես հաւատարիմ կը ծառայեմ։

Սիրելի և թանգագին եղբայր Պեսոր Օնուֆրիչ Չեմ հասկանում, Աստուած վկայ, ինչու յեղափոխականները և տերրորիստները հակառակ են մեր պաշտելի Ցարին։ Չէ՞ որ նա իսկական Ցար է, համայն Ռուսաստանի Ինքնակալ և Թագա-

ւոր Կայսր Նիկոլայ II Ալէքսանդրովիչ։ Դէ իհարկէ՛, աւազակների համար ի՞նչ ծառ, ի՞նչ օրէնք... Բոլոր յեղափոխականներին ու տերրորիստներին պէտք է կախենք կամ թէ Սիբիր աքսորենք—թող կորչեն՝ սատկոտեն այնտեղ ցրտից և քաղցից։ Եթէ ես լինէի ներքին գործոց մինիստր՝ այն ժամանակ բոլոր ջհուդներին կը քշէի մեր երկրից. իսկ հայերին կասէի. „Цыцъ! թէ չէ աչքներդ կը հանեմ։ Քրիստոնեայ էք՝ ձեզ հանգիստ պահէք, լաւ պահէք, ինչպէս որ վայել է Քրիստոսի հետևորդներին»։

Սիբելի եղբայր Գեօտր Օնուֆրիչ, մեր վախմիստրի ազգանունը Գէօրգի Գարէնկո է։ Այս Գէօրգի Գարէնկոն երեք տարի է ինչ այստեղ ժանդարմութիւն է անում և կարողացել է ահագին հարստութիւն դիզել... Ի հարկէ. ի՞նչ կայ որ։ Մարդ որքան շատ հարստանայ՝ այնքան աւելի է սիրում Թագաւորին և Հայրենիքը։

Սիբելի եղբայր, աշխարհիս երեսին երկու տեսակ մարդկութիւն կայ. առաջին տեսակը՝ ազնիւ մարդկութիւն, երկրորդ տեսակը՝ հասարակ մարդկութիւն։ Ազնիւ մարդկութիւնը իսկական ազնիւ մարդկանց մարդկութիւն է. օրինակ՝ ներքին գործոց մինիստրը, պալատի մինիստրը, ֆինանսների մինիստրը, պոլիցիայի դեպարտամենտի գլխաւորը, ժանդարմների կորպուսի շէֆը, Թագաւոր Կայսրի բոլոր ադիւտանտները, Թագուհի Կայսրուհու բոլոր ֆրէյլինները, ռուսական զօրքի գեներալները, մասամբ պոլկովնիկները (որովհետև սրանք գեներալ են դառնալու). պոդպոլկովնիկն էլ հետը, կապիտանն էլ հետը, շտաբս-կապիտանն էլ հետը և այլն։ Միտրոպոլիտները և բոլոր եպիսկոպոսները և այլն և այլն և այլն։ Կայարանների գլխաւորները (բայց ոչ նրանց օգնականները) և այլն, և այլն։ Սենատորները և կարևոր անձինք և այլն և այլն և այլն։ Ես բանաստեղծօրէն կը նմանեցնեմ մի պարտէզի. այսինքն՝ Թագաւոր Կայսրը մի մեծ ծառ է՝ պարտիզի կենտրոնում և ամեն կողմ ճիւղեր է արձակում։ Ճիւղերը՝ Օգոստափառ Զաւակներն են. ծառի շուրջը՝ աւելի փոքր ծառեր կան. դրանք՝ մեր բոլոր նշանաւոր մարդիկն են։ Ցեռոյ ուրիշ ծառեր են շարուած, այսինքն էլի ուրիշ մարդիկ՝ նոյնպէս նշանաւոր, բայց մի քիչ պակաս նշանաւոր։ Ցեռոյ էլի ուրիշ մարդիկ, էլի ուրիշ մարդիկ... Վերջը չորս կողմից շղթայ են կազմած

մեր բոլոր ժանդարմները։ Մենք պատնէշ ենք և պահապան։

Մեր նոր պոլկովնիկը երէկ ճառ կարդաց մեզ համար և ասաց. «Ժանդարմներ, այո, դուք պատնէշ էք և պահապան։ Դուք էք այն հաստատուն վէմ քարը, որի վրայ կառուցած է կայսերական Սրբազան Գահը։ Ամբողջ Ռուսաստանը ձեզ է մտիկ տալիս. երբէք չվախենաք մեր թշնամիներից, այլ կըռւեցէք և յաղթեցէք, հոգ ու մոխիր արէք մեր բոլոր հակառակորդներին այնպէս, որ նրանք թաւալեն ցեխի ու փոշու մէջ՝ մեր ոտքերի տակ»։

Սիրելի և թանգագին եղբայր Պետր Օնուֆրիչ, ինչ որ մեր նոր պոլկովնիկը ասաց՝ ես արդէն առաջուց գիտէի բոլորը։ Եւ երբ նա կարդում էր ճառը՝ ես շարունակ ասում էի մտքիս մէջ թէ՝ «Իհարկէ ճիշտ է. ես էլ գիտեմ, որ ճիշտ է»։ Բայց մեր պոլկովնիկը կարծում է թէ մենակ ինքը ճառ կարդալու շնորհք ունի։ Իզուր է այդպէս կարծում... Վասիլիչն անցեալ օր ասում էր, որ իրենց ռոտմիստրը հազիւ-հազ կարողանում է խօսելիս՝ բառերը կապել միմեանց։ Մինչդեռ դու շատ լաւ ես իմանում, սիրելի եղբայր, որ ես կատարեալ շնորհք ունեմ։ Ես, սիրելի եղբայր, ամեն աշխատանքը թափեմ, գիշերները չեմ քնի, շան պէս պէտք է չարչարւեմ, որպէսզի ես էլ դառնամ ռոտմիստր։ Դու, սիրելի եղբայր, շուտով ուղարկիր ինձ վկայական, որ ես սովորել եմ քաղաքային դպրոցում։ Գնա և պահանջիր, որ վկայականը անպատճառ տան։ Վկայականի կողքին պէտք է աւելացնեն, որ ես հեռացել եմ դպրոցից իմ յօժար կամքով, որովհետև որոշել էի մտնել գիմնազիա ու համալսարան։

Սիրելի եղբայր Պետր Օնուֆրիչ! Ագրաֆէնան քեզ շատ բարև է ուղարկում և համբուրում սիրով։ Երկուսս էլ առողջ ենք։ Միայն ինձ համար անախորժ է, որ կինս այսքան երկար ժամանակ յղի է մնում։ Այսուհետև ես քեզ մանրամասն կը գրեմ միշտ Կովկասի մասին։ Շատ լաւ երկիր է—չորս կողմդ սարեր։ Սարերի վրայ ամառ-ձմեռ շարունակ ձիւն է լինում։

Այս նամակը կարդա Օնիպկոյի և Արկադի Սաւելիչ Վորոնովի առաջ։ Նրանք էլ թող իմանան, թէ որքան մեծ եռանդով եմ գործում Կովկասի մէջ։ Եւ առհասարակ դու այդտեղ աշխատիր, որ իմ անունը հասնի մինչև պոլիցիայի դեպար-

տամենտի շէֆի ականջը։ Քեզ համար էլ պարծանք կը լինի, երբ ես նշանաւոր մարդ դառնամ։

Քո կրտսեր եղբայր՝ Վլադիկաւկազի կայարանի ժանդարմական բրիգադի ժանդարմ Ֆոմա Օնուֆրիչ Պիրաժկով։

1910 թվի ապրիլի 21. քաղաք Վլադիկաւկազ։

Սիրելի և թանկագին եղբայր! Գիշերս վեց յեղափոխական բռնեցինք մի տան մէջ. մէկը ուսանող է, միւսն էլ ուսուցիչ։ Ես իսկոյն հասկացայ որ նրանք կատարեալ տերրորիստներ են. աչքս հիմա փորձւել է բոլորովին և ես ամեն ինչ իմանում եմ։

Նրանց մէջը մէկը կար, որ լրագիրներ է ծախում կայարանում։ Իմ բարկութիւնս եկաւ ու յետոյ ծիծաղելով ասի մտքիս մէջ. «Լաւ վզակոթ ունի սա, ձեռքս չփորձեմ...»—և այնպէս հասցրի վզակոթին, որ բթամատս ցաւեց։ Լրագրավաճառը, իհարկէ ձայն չհանեց. կարող է համարձակւել որ։ Բայց ուսանողը մէջ ընկաւ՝ «իրաւունք չունէք խփելու» ասաց. ես մի լաւ հայհոյեցի նրան ու ասի. «Շուտով դու էլ կիմանաս իմ բռունցքի նշանակութիւնը...», հա-հա-հա...

Վասիլիչն էլ շատ ծիծաղեց։ Դէ, իհարկէ որ շատ ծիծաղելու բան էր. ախր նրանք տերրորիստներ լինեն և մենք իրաւունք չունենանք նրանց ծեծելու։ Ամերիկայում այդպիսի բան չկայ. օրէնքները ես լաւ գիտեմ։ Տերրորիստներին և յեղափոխականներին կախաղան ենք հանում, չէ՞. ուրեմն նրանց հարկաւոր է ծեծել, որպէսզի մինչև Սիբիր ուղարկւեն՝ բաւական խրատւած լինեն։ Եւ մի՞թէ վատ բան է ծեծը։ Դու յիշում ես. սիրելի եղբայր, որ մեր հանպուցեալ հայրը ամեն օր թակում էր մեզ, որպէսզի յայտնի մարդ դառնանք։

Սիրելի եղբայր, մեր կայարանի մօտ մի հարուստ ձկնավաճառ կայ՝ լաւ խանութ ունի և խանութում ամեն օր թարմ սուդակ ու ասէտրինա է լինում։ Ես մտածեցի, թէ հարկաւոր է նրա հետ բարեկամանալ, որպէսզի տօն օրերին թարմ սուդակ և ասէտրինա գնեմ նրա խանութից։ Բայց ձկնավաճառը վերին աստիճանի կոպիտ, անկիրթ մարդ դուրս եկաւ, այսինքն չուզեց ինձ վրայ ուշադրութիւն դարձնել, որովհետև. կարծում էր, երևի, թէ ես կաշառք եմ կամենում վերցնել..

Ցիմար անձնաւորութիւն է, և ես երկու օր առաջ խիստ ընդհարուեցի հետը։ Դէպքը այսպէս պատահեց, սիրելի եղբայր։

Խանութի մօտով անցնում էի։ Աչքերս չորս կողմ ածելիս՝ տեսայ, որ խանութի առաջին, մայթի վրայ, կեղտոտ ջուր է թափուած։ Իսկոյն ձայն տուի ծառայողին և կտրուկ պահանջեցի.

— Դուք պարտաւոր էք մաքրութիւն պահպանել։

Ինքը ձկնավաճառը կոպիտ-կոպիտ դուրս եկաւ, ձեռքերը դրեց քամակին ու անխօս նայեց վրաս.

— Դո՞ւ ես,—հարցրի,—այս խանութի տէրը—որպէս թէ չգիտէի, որ նա է հէնց տէրը։

Նա պատասխան չտուեց, այլ շարունակեց նայել աչքերիս, կարծես ապուշ լինէր։

— Դո՞ւ ես...—նորից հարցնել ուզեցի. բայց խօսքս փոխեցի և միայն ասի. «Բարի եղէք, պարոն, կարգադրէք, որ...» և այլն՝ ձկնավաճառը ինքնըստինքեան հասկացաւ իմ հրամանը և ես աւելորդ համարելով այլևս խօսել՝ շարունակեցի իմ ճանապարհը։

Այսուհետև ցոյց կը տամ այդ մուժիկ ձկնավաճառին, թէ ինչ է նշանակում այդպէս արհամարհանքով, վերաբերուել ռուս ժանդարմի հարցերին։ Անպիտան վրացիք ու հայերը բոլորն էլ այդպէս են պահում իրենց։ Շատ բարի։ Ես ուշիուշով կը հետևեմ ձկնավաճառին, որովհետև նա անկասկած, յեղափոխականների հետ բարեկամութիւն է անում։ Մի՞թէ ձկնավաճառները հակառակ չեն լինում մեր կառավարութեանը... Իմ կարծիքով, սիրելի եղբայր, երբ աղքատ մարդն է յեղափոխական լինում՝ ուրիշ բան է. բայց երբ հարուստ մարդն է յեղափոխութիւն կատարում և դու նրան բռնում ես —սա արդէն բոլորովին ուրիշ բան է։ Այնպէս չէ՞, սիրելի եղբայր. հարուստը միշտ էլ հարուստ է, այսինքն նա միշտ փող կունենայ. և հարուստ յեղափոխականը կաշխատի փող «ծախսել», որպէսզի ազատուի՝ եթէ որ մենք նրան բռնելու լինենք... Մեր վախմիստր Գէօրգի Գարէնկօն, Վասիլիչի ասելով, տասը հազար ռուբլի ունի բանկում պահած։ Բայց ես կարծում եմ, որ ոչ թէ տասը, այլ քսանուհինգ հազար կունենայ, որովհետև Գէօրգի Գարէնկօն վերին աստիճանի խորամանկ և անամօթ անձնաւորութիւն է։

Սիրելի ու թանգագին եղբայր Պետր Օնուֆրիչ! Ես էլ շարունակ պէտք է խորամանկ լինեմ։ Որքան, օրինակ, շատ բարեկամանամ յեղափոխականների հետ՝ ես այնքան աւելի հեշտ կերպով նրանց բոլոր գաղտնիքները կիմանամ։ Հարկաւոր է մէկ-մէկ այնպէս ձևանալ, իբր թէ ինքս էլ տերրորիստ եմ։ Տերրորիստները վերին աստիճանի նենգամիտ մարդիկ են, նրանք ամեն ինչ ծածուկ են անում, որպէսզի մենք դժուար գտնենք նրանց տեղը։ Բայց ես նրանցից աւելի խորամանկ կը լինեմ ու ամենքին կը խաբեմ։ «Ես ձեզ սիրում եմ, կասեմ, դուք հիանալի մարդիկ էք, կասեմ, եթէ ուզում էք՝ գնանք, կասեմ, մինիստրներին—որ մինիստրին էլ կամենաք—սպանենք, կասեմ։ Համեցէք, ես պարտաւոր եմ կասեմ, ահա և իմ ձեռքը»։ Հա՛-հա՛-հա՛-հա՛։

Գիտես ինչ, սիրելի եղբայր, երեք օր առաջ ես կայարանից Վասիլիչի մօտ գնալիս նկատեցի, որ մի մարդ աֆիշա էր կարդում, կզակը վեր տնկած։ Աֆիշան կարմիր էր և ես անմիջապէս գլխի ընկայ թէ բանն ինչումն է։ Մօտեցայ ու կանգնեցի կողքին, իբրև թէ ես էլ եմ աֆիշով հետաքրքրւում։ Արմունկովս թեթև զարկեցի նրա թևին և իսկոյն ներողութիւն խնդրեցի։

— Ոչինչ, ոչինչ,—ասաց նա ու շարունակեց կարդալ։

Ես աչքի տակով զննեցի նրան ոտից մինչև գլուխ ու մտքիս մէջ ասի՝ «Ե՛կ, հիմա էլ ոտքը կոխեմ ու նորից ներողութիւն խնդրեմ, տեսնեմ ինչ կասի»։

— Ներեցէք խնդրեմ, ձեր ոտքը չցաւեց արդեօք. ներեցէք խնդրեմ,—և այդ ասելով՝ ես իսկոյն բարևի բռնեցի ձեռքս, ինչպէս որ վայել է կրթւած ռուս զինուորականին։

— Ոչինչ, ոչինչ,—ասաց նա կրկին, ու երկիւղով մտիկ տւեց երեսիս և մի քայլ հեռացաւ ինձանից։ Իսկ ես ժպտացի ու աւելի մանրամասն դիտեցի նրա հագուստը։

Երբ Վասիլիչին պատմեցի՝ նա շատ զարմացաւ։ Իհարկէ, սիրելի եղբայր, փոքր նշաններով կարելի է խոշոր տերրորիստական դաւադրութիւնների հետքը գտնել ու երևան հանել։ Ինչու այն մարդը յատկապէս *կարմիր* աֆիշա էր կարդում։ Չէ՞ որ ուրիշ գոյնի աֆիշաներ՝ սպիտակ, կանաչ, կապոյտ, դեղին և այլն նոյնպէս շատ կային։

Սիրելի եղբայր, մեր Վասիլիչը շատ լաւ մարդ է, Աստ-

ւած վկայ։ Նա միշտ ինձ հետ է լինում և ամեն օր միասին լրագիր ենք կարդում, այսինքն նա կարդում է բարձր ձայնով, իսկ ես ականջ եմ դնում։ Եւ յետոյ վիճում ենք իրար հետ, այսինքն Վասիլիչն է ինձ հետ վիճում, որովհետև ես նրանից խելօք եմ, չնայած որ Վասիլիչը աւագ ունտէր-օֆիցէր է վաղուց։

Ահա այսպէս, սիրելի եղբայր, ես օր ու գիշեր աշխատում եմ և յոյս ունեմ շատ առաջ գնալ։ Մեր ռոտմիստրը առանձին ուշադրութիւն է դարձնում ինձ վրայ և ամենագաղտնի գործերը ինձ է միայն վստահանում, որովհետև ես չեղած տեղից էլ բան եմ ստեղծում։

Այս նամակը կարդալու տուր նաև Սիդոր Պրօկօֆիչին և Սերգէյ Միտրօֆանիչին։ Նրանց իմ կողմից շատ բարևներ յայտնիր։ Սիդոր Պրօկօֆիչին ասա՝ թող աշխատի փոխադրուել Կովկաս, շատ հիանալի երկիր է, Աստուած վկայ. այստեղ ռուս ժանդարմներից սարսափելի վախենում են ամենքը, մանաւանդ հայերն ու վրացիք, որովհետև նրանք մեր թշնամիներն են. բայց վախենում են։

Քո կրտսեր եղբայր՝ Վլադիկաւկազի կայարանի ժանդարմական բրիգադայի ժանդարմ Ֆօմա Օնուֆրիչ Պիրաժկով։

Քաղաք Թիֆլիս, 1910 թուի մայիս 12։

Իմ սիրելի եղբայր Պեօտր Օնուֆրիչ! Քեզ նամակ եմ գրում Կովկասի մայրաքաղաքից, որ կոչւում է Թիֆլիս։ Հիանալի քաղաք է։ Քաղաքի միջով հոսում է Կուր գետը, որ սկիզբն է առնում Կազբէկ սարից, և թափւում է Սև Ծովի մէջ։ Տասն օր է ինչ ինձ տեղափոխել են Թիֆլիս և ես արդէն բաւական բան եմ տեսել։ Այստեղ կայ Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի պալատը, որ վերին աստիճանի գեղեցիկ շինութիւն է։ Յետոյ կայ մի մեծ եկեղեցի, որ կոչւում է Զինւորական Տաճար։ Տաճարի բակում մայիսի 6-ին հանդիսաւոր պարագ կատարեցինք, որովհետև այդ օրը, ինչպէս քեզ յայտնի է, Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսր Նիկոլայ II Ալէքսանդրովիչի Ծննդեան օրն էր։

Սիրելի եղբայր, Թիֆլիսում ես ինձ պէտք է բարձր պահեմ՝ աւելի լուրջ, աւելի խելացի, որովհետև Թիֆլիսը մայրաքաղաք է համարւում։ Այստեղ ապրում են վրացիք, հայե-

ը և Թուրքերը։ Վրացիք՝ грузо-голопятый! *հայերը՝* армяшка-соленный! *Թուրքերը՝* татарская башка!

Ես չեմ սիրում ոչ վրացիներին, ոչ հայերին, ոչ Թուրքերին, որովհետև նրանք այլազգիներ են և ոչ Թէ ռուսներ։ Մեր ազգը՝ տէր-ազգ է, իսկ հայերը, վրացիք և Թուրքերը՝ ծառայ ազգեր։ Ինչպէս որ կան ամեն տեղ հարուստ, լաւ մարդիկ և քոստոտ, անպէտք մարդիկ,—այնպէս էլ կան ամեն տեղ հարուստ լաւ ազգեր և անպէտք, յիմար ազգեր։ Հայերի մասին տեղեկութիւններ կուղարկեմ քեզ, սիրելի եղբայր, որովհետև նրանք վերին աստիճանի վտանգաւոր ազգ են և մեզ կարգադրուած է յատկապէս հայ յեղափոխականներին հետևել։ Հայերը ուզում են, որ մի հայ յեղափոխական Թագաւոր լինի Կովկասում։ Հայերը ուզում են ռուսներիս ձեռքից խլել Ռոստովի երկաթուղագիծը և մեզ վրայ իշխել։ Իրենց շար նպատակին հասնելու համար՝ հայերը սպանում են մեր նահանգապետներին և գաւառապետներին։

Զգուելի, գարշելի, անպիտան, վնասակար ժարդիկ են հայերը։ Զարմանում եմ՝ ինչու Աստուած ստեղծել է նրանց։ Ես գոնէ չէի ստեղծի, եԹէ որ ինձ ստեղծելու հրաման տային։ Հայերին հարկաւոր է ուղարկել Սոդոմ-Գոմոր ու յետոյ երկնքից կրակ Թափել գլխներին և կործանել։ Բայց, սիրելի եղբայր, հայերը շատ հարուստ են։ Ես լսեցի, որ մի վերին աստիճանի հարուստ հայ կայ Թիֆլիսում, հարիւր միլիոն ունի, ազգանունը՝ Մանթաշև։ Այս Մանթաշևը հարիւր միլիոն է հաւաքել նրա համար, որ բոլորը տայ հայոց յեղափոխական կոմիտէին։

Հայերն այստեղ երեք մեծ բան ունեն՝ կաթողիկոս, Մանթաշև, յեղափոխական կոմիտէ։ Կաթողիկոսը մեր միտրոպոլիտի նման բարձր հոգևորական է. և վասիլիչն ասում է, որ մեր Թագաւոր Կայսրը կաթողիկոսին մի Թանգագին ադամանդեայ խաչ է ընծայ տուել, որովհետև կաթողիկոսը սուրբ մարդ է։ ԵԹէ ես երբևիցէ տեսնեմ կաթողիկոսին՝ ձեռքը պէտք է համբուրեմ և նրա օրհնութիւնը խնդրեմ։ Սուրբ մարդիկ չեն կարող տերրորիստ լինել, որովհետև սուրբ են։ Իսկ հայերի միւս բանը՝ Մանթաշևը՝ սուրբ մարդ չի, ուրեմն նա յեղափոխական է, որովհետև հայ է։ Ես անպատճառ պէտք է ծանօԹանամ նրա հետ—որոշ ծրագիրներ ունեմ։ Համարձակու-

թիւնը հերոսների ամենագեղեցիկ զարդն է։ Զուր չէր հօ հապա, որ ինձ ու Վասիլիչին փոխադրեցին Թիֆլիս։ Ներքին գործոց մինիստրը Թիֆլիս է ուղարկում ամենաընտիր և ամենահնարագէտ ժանդարմներ և գաղտնի ոստիկաններ։

Սիրելի եղբայր Պեօտր Օնուֆրիչ! Ազատ ժամանակ դըժբախտաբար քիչ եմ ունենում. ապա թէ ոչ ես ուրիշ՝ աւելի կարևոր ու հետաքրքրական բաներ կը գրէի հայերի մասին։ Քեզ համբուրում ենք Ջերմագին՝ ես և Ագրաֆէնան։

Քո կրտսեր եղբայր՝ Ֆօմա Օնուֆրիչ Պիրաժկով։

---

26 մայիսի 1910 թվի, Թիֆլիս քաղաք։

Իմ սիրելի և խիստ թանգագին եղբայր! Մենք այստեղ անթիւ անհամար խուզարկութիւններ ենք կատարում, որովհետև հայոց յեղափոխական կոմիտէն վճռել է ապստամբութիւն առաջ բերել—մենք այդ հաստատ գիտենք։

Հարիւր հազար վինտովկա և մաուզէր ունեն հայ յեղափոխականները, որոնք այստեղ կոչւում են «դաշնացականներ»։ Նրանք կապ ունեն մեր արտաքին թշնամիների հետ՝ Ռուսաստանը կործանելու նպատակով։

Եօթանասուն տերրորիստ զանազան կողմերից գաղտնի կերպով Թիֆլիս են եկել՝ որ ռումբեր պատրաստեն և մեզ ամենքիս տերրորի ենթարկեն։

Ես հիմա ինձ շատ խելացի և զգոյշ եմ պահում՝ փողոցով անցնելիս միշտ դիտում եմ չորս կողմս. որովհետև ինձ առանձնապէս շատ տերրորիստներ են հետևում։ Նրանք իմացել են, որ ես սովորական, հասարակ ժանդարմ չեմ։

Հայոց յեղափոխական կոմիտէն երբ որ սովորական հասարակ ժանդարմ է ուզում սպանել՝ այսպէս է կարգադրում. «Դու, տերրորիստ Կարապետ, դու գնա և ռումբ ձգիր այս ինչ հասարակ ժանդարմի վրայ։ Երկու-երեք հասարակ ժանդարմ միասին սպանիր»։

Իսկ երբ ժանդարմը կարևոր անձնաւորութիւն է լինում, ինչպէս օրինակ ես, այն ժամանակ կոմիտէն նշանակում է տասը, քսան, երեսուն տերրորիստ, որ ամեն տեղ հետևեն ինձ նման ժանդարմներին, գաւառապետներին և նահանգապետներին։

Ես ինքարկէ, բոլորովին չեմ վախենայ։ Հէրն եմ անիծել... չեմ վախենում... Եթէ ուզում են՝ թող սպանեն։ Ես պատրաստ եմ մեռնել մեր պաշտելի թագաւոր Կայսրի համար... Չեմ վախենում, բոլորովին չեմ վախենում։

Սրանից յետոյ ես աւելի պիտի ատեմ հայերին։ Ակն ընդ ական, ատամ ընդ ատաման։ Եթէ որ նրանք լաւ վարուէին ինձ հետ, ես նոյնպէս լաւ կը վարուէի։ Բայց ինչ խօսես հետները. անկիրթ ժլատ մարդիկ են և իրենց օգուտը չեն ըմբռնում՝ մարդու սիրտ շահել չեն իմանում, Աստուած վկայ։ Նրանք կարծում են, երևի, թէ ես, Ֆօմա Պիրաժկով, մեծ-մեծ պահանջներ կանեմ...

Սիրելի եղբայր Պեօտր Օնուֆրիչ! դու վստահ եղիր, որ ես պատուով դուրս կը գամ բոլոր նեղութիւնների միջից։ Ես դեռ պէտք է երկար ապրեմ, որովհետև Աստուած որ ինձ ստեղծել է՝ ստեղծելիս կարգադրել է, որ ես ապրեմ մինչև մահ. և միայն Աստուած իրաւունք ունի հրամայելու, որ հոգիս տամ... այո, միայն Աստուած և ոչ թէ հայոց յեղափոխական կոմիտէն։ Կոմիտէն վճռել է, երևի, ինձ ռումբով սպանել, բայց նրանք չգիտեն միթէ, որ Աստուած այդ տեսակ բաներին խիստ հակառակ է։

Խնդրում եմ, սիրելի եղբայր, աշխատիր որ ինձ յետ ուղարկես կրկին Վլադիկաւկազ կամ աւելի լաւ կը լինի՝ Ռոստով։ Թիֆլիսի կլիման չեմ կարողանում տանել, առողջութիւնս կը փչանայ բոլորովին։

Քեզ վերին աստիճանի սիրող և գնահատող՝ Ֆօմա Օնուֆրիչ Պիրաժկով, կրտսեր եղբայրդ, Կովկասեան մայրաքաղաքի ժանդարմական վարչութեան մէջ ծառայող ժանդարմ։

Թիֆլիս, 31 մայիսի, 1910 թվի:

Սիրելի եղբայր, ուրախ բաներ պէտք է գրեմ քեզ այսօր, որովհետև տրամադրութիւնս շատ բարձր է։

Գիշերս մեր ռոտմիստրի հետ՝ ես խուզարկութիւն կատարեցի մի նշանաւոր հայ յեղափոխականի տանը։ Մեզ հետ կային Զասիպկինը, Պէշկովը, Կամէնսկին, Մարտինովը և ուրիշները (պէտք է ասած, սիրելի եղբայր, որ սրանք բոլորն էլ յիմար, անօգուտ ժանդարմներ են)։

Ուղարկութեան գնալիս, ճանապարհին ռոտմիստրը անունս տուեց թէ՝ «Պիրաժկով!...» և ես իսկոյն հասկացայ որ նա ուզում է կարծիքս իմանալ, որովհետև իմ կարծիքները կարևոր նշանակութիւն ունեն գործի համար։ Ես էլ յայտնեցի կարծիքս... Այսինքն ոչ թէ ուղղակի ռոտմիստրին յայտնեցի, այլ այն ժամանակ երբ ռոտմիստրը ուզում էր հարցնել իմ կարծիքը՝ այն ժամանակ ես արդէն մտքիս մէջ ինքս ինձ պատրաստուել էի, որ ռոտմիստրը կարծիքս հարցնէր թէ չէ՝ ես էլ անմիջապէս կարծիքս պէտք է յայտնէի...

Մտանք հայ յեղափոխականի տունը։ Ինքը՝ հայ յեղափոխականը չէր կարողացել փախչել, որովհետև ես շտապեցի բռնել խոհանոցի դուռը, որպէսզի նա չծլկէր այն կողմով։ Ամբողջ կւարտալը շրջապատուած էր զինուորներով։

Ես սկսեցի խուզարկել եռանդով։ Ճոխ կահաւորուած տուն էր։ Սկզբում ես վերին աստիճանի ապշեցի. բայց յետոյ ուշքի եկայ։ Այնպէս ոգևորուեցի, որ նոյն իսկ բարձերը քրքրելով՝ փետուրը դուրս թափեցի։ Նոյն իսկ գլխարկների աստառը քանդեցի, որովհետև յեղափոխականները սովորութիւն ունեն՝ իրենց հագուստի մէջ յեղափոխական թռուցիկներ պահելու։

Յետոյ գնացի խոհանոց և բոլոր պղինձները փորձեցի, այսինքն՝ մատովս կարկեցի մէկ-մէկ, որպէսզի ձայն դուրս գայ և ես իմանամ թէ կրկնակի պատեր չկան արդեօք պղինձների մէջ։ Հայ տերրորիստները խորամանկօրէն այնպիսի պղինձներ են, երևի, շինել տալիս, որպէսզի գաղտնի արանքներումը բաներ թագցնեն։ Ես լաւ հասկանում եմ նրանց խորամանկութիւնները։

Յետոյ գնացի՝ արտաքնոցը նայեցի մանրամասն կերպով։

Յետոյ ես մի ջլունգ ճարեցի և բերի՝ պատը քանդեցինք մի տեղ, որովհետև կասկածելի թւաց մեր ռոտմիստրին։ Կացնով էլ ջարդեցինք յատակի տախտակները...

Այնպէս տակնուվրայ արինք ամեն բան, կարծես թէ երկրաշարժ եղաւ։ Երեք ամիս էլ հերիք չէ անի, որպէսզի տունը կարգի բերեն նորից։

Խիստ պէտք է վարուել յեղափոխականների հետ։ Շանը որքան թակես՝ նա այնքան կը վախի քեզանից։ Միշտ պէտք է իմաստուն լինել։

Բայց իմ զայրոյթն եկաւ, սիրելի եղբայրս, որ անպիտան արմեաշկան բոլոր ռումբերն ու թուղթիկները փախցրել էր առաջուց և մենք ոչինչ չգտանք։ Իմ ջանքերն ու հեռատեսութիւնը զուր անցան։ Ես ուզեցի որ զայրացած գոռամ հայ յեղափոխականի վրայ թէ՝ «Ծոյց տուր, ասում եմ, ռումբերի տեղը, ապա թէ ոչ քեզ Սախալին կուղարկենք, ասում եմ, իսկոյն...» - Բայց միտքս փոխեցի ու ասի միայն՝ «Ахъ ты армяшка соленный!»... Մէկ ուրիշ խօսք էլ պէտք է ասէի, բայց հայը յանկարծ ինքը բարկացաւ վրաս և մեր ռոտմիստրից պահանջեց թէ. «Խնդրեմ, պրոտոկոլ կազմէք. ոչ ոք իրաւունք չունի իմ ազգային արժանապատուութեանը դիպչելու»։

Ես սկզբում չուզեցի վախենալ, բայց տեսայ որ մեր ռոտմիստրը պատասխանեց նրան թէ. «Հանգստացէք խնդրեմ, ես ինքս կը պատժեմ այս յիմարին»։

«Կը պատժեմ»-ը ինձ էր վերաբերում և իմ տրամադրութիւնը իսկոյն փչացաւ բոլորովին։ Մտքիս մէջ հայհոյեցի երկուսին էլ՝ հայ յեղափոխականին և ռոտմիստրին։ Այնպէս կարծեցի թէ ռոտմիստրն էլ հայի գաւակ է, քանի որ նա պաշտպանեց հայ յեղափոխականին (կարող է պատահած լինել, որ ռոտմիստրի մայրը... և այլն)։

Մինչև խուզարկութիւնը վերջացրինք՝ հոգիս դուրս եկաւ։ Շարունակ մտածում էի թէ ռոտմիստրը ինչ պատիժ է ինձ նշանակելու։ «Ի հարկէ, ասում էի մտքիս մէջ, ոչինչ չգտանք՝ որովհետև ռոտմիստրը կանխապէս իմաց է տուել այս արմեաշկային խուզարկութեան մասին...»—Եւ խիստ բարկանում էի ինքս ինձ մեր այն ռուս կանանց վրայ, որոնք գործ են ունենում հայ տղամարդկանց հետ և ինձ այսպիսի անյարմար դրութեան մէջ են գցում...

Սակայն տէր Աստուած, փոդոց ելանք թէ չէ՝ մեր ռոտմիստրը կանչեց ինձ և բոլոր ժանդարմների ու զինուորների ներկայութեամբ ասաց հետևեալը. «Պիրաժկով, ասաց, եռանդ չափաւորիր, սիրելիս. այդ արմեաշկան յայտնի մարդ է և մեր պոլկովնիկը նրա եղբօրը լաւ ճանաչում է. անախորժութիւն կարող էր ծագել քեզ համար էլ, ինձ համար էլ... Բայց և այնպէս լաւ ասիր, молодецъ!»։

Ես խիստ ուրախացայ. մինչև հիմա դեռ ուրախ եմ վե-

ին աստիճանի. և ուրախությունից մի բանաստեղծություն գրեցի հայ տերրորիստների մասին։ Բանաստեղծությունս կարդացի Վասիլիչին և նա խիստ հաւանեց ու խորհուրդ տուեց, որ տպել տամ մայրաքաղաքի լրագրներում։ Ուղարկում եմ քեզ, որպէսզի դու էլ կարդաս։ Ահա.

Ахъ ты! ахъ ты дурь-армяшка!
Эхъ ты дрянь и картошка!
Ты зачѣмъ, армяшка, хочешь
Бомбу броситъ намъ въ окошко?

Ты опасный террористъ,
Тебѣ любъ самъ антихристъ,
Но нашъ грозный Батька-Царь
Покажетъ вамъ бристъ такъ бристъ!

Ցաղող բանաստեղծություն է, այնպէս չէ՞, թանգագին եղբայր։ Իմ սիրտը զարկում է հրճւանքից։ Բանաստեղծ Պուշկինը երբ Թիֆլիս էր եկել ինձանից քառասուն տարի առաջ, գրել է թէ՝ „Кавказъ подо мною“. Հիմա նոյնը կարող եմ ասել և ես, որովհետև եթէ ես հենց սկզբից բանաստեղծություններով զբաղուէի՝ այժմ արդէն կը լինէի յայտնի բանաստեղծ։

Եթէ ես համալսարանում սովորէի՝ այժմ արդէն բարձր պաշտօն կունենայի, թէև ընդամենը քսանըվեց տարեկան եմ։

Եթէ ես ամուսնացած չլինէի՝ այստեղ կաժուանանայի և լաւ օժիտ կը ստանայի։ Սիրուն և հարուստ օրիորդներ շատ կան Թիֆլիսում, սիրելի եղբայր։ Թէև այլ ազգի են, բայց ունեն գեղեցկություն և փող միաժամանակ։

Եւգէնիյ Օնէգինը երբ մօտենում է Տատիանային, ձեռքը համբուրելով՝ այսպէս է երգում. „Вы мнѣ писали! Вы мнѣ писали!...“ Շատ հիանալի է երգում, Աստուած վկայ։

Ես շատ եմ օրրում, երբ որ թատրոնում փոքրիկ են ներկայացնում... Երկինքը տմպած։ Սև-սև ամպերը մթնացրել են ողջ երկնակամարը։ Ցեռոյ ամպերը զարկւում են իրար և որոտում են սարսափելի կերպով, կարծէս թնդանօթներ լինեն՝ գը՛ռռռ... բում-բում-բում... Գ՛ըռ-ռռ... բում-բում-բում-բում-բում-բում...

Ցգրուքիւն, սիրելի եղբայր։ Ես քեզ միշտ կը սիրեմ, չեմ հպարտանայ երբէք քո առաջ, որովհետև դու իմ մեծ եղբայրն ես և ես պարտաւոր եմ քեզ յարգել, նոյն իսկ եթէ ես պոլկովնիկ դառնամ։

Քո Ֆեոմա Պիրաժկով։

Թիֆլիս, 4 յունիսի 1910 թ.

Սիրելի եղբայր Պեսար Օնուֆրիչ. Այսօր առաւօտից սկսած ես մտածմունքի մէջ էի ուստի գրում եմ քեզ այս նամակը տխուր տրամադրութեամբ։ Ցոյս ունեմ, որ դու, իբրև իմ աւագ եղբայր, ինձ խորհուրդներ կը տաս, թէ ինչպէս պէտք է վարուեմ։

Առաւօտը ժամը 8-ին պոլկովնիկը բարկացած մտաւ ներս և այսպիսի խօսքեր ասաց. «Շատերդ, ասաց, անձնուէր եռանդով չէք ծառայում Թագաւորին և Գահին, ասաց։ Եռանդ, եռանդ։ Հաւատարիմ մարդիկ էք, ասաց, կասկած չունիմ, ասաց, բայց դուք, ասաց, պարտաւոր էք աւելի եռանդով աշխատել։

Այսքանը լաւ էր իհարկէ. և ես մեծ ուշադրութեամբ լսում էի, որպէսզի պոլկովնիկը տեսնէր, որ ես լսում եմ մեծ ուշադրութեամբ։ Բայց յանկարծ պոլկովնիկը ձայնը բարձրացնելով՝ բարկացաւ. «Ձեր մէջ կան անհատներ, ասաց, որ բանաստեղծութիւններ են գրում յիմար յիմար։ Կարուկ կերպով արգելում եմ, ասաց, և այսուհետև չարաչար կը պատժեմ բանաստեղծներին, թէկուզ նրանք Պուշկին ու Լերմոնտով լինեն!»։

Ամբողջ օրը մտածելուց յետոյ՝ ես համոզուեցի, որ անպէտան Վասիլիչն է գործը խառնել։ Դու չգիտես, սիրելի եղբայր, թէ ինչ սրիկայ անձնաւորութիւն է եղել Վասիլիչը։ Նա վերին ատիճանի նախանձում էր, որ ես աւելի առաջ եմ գնում, քան թէ ինքը։ Նախանձից նաև այն բանի համար, որ ես բանաստեղծելու տաղանդով եմ օժտուած, իսկ նա չունի ոչ կրթութիւն, ոչ էլ խելք։ Սորչէնկոն, Պլատովը, Զասիպկինը, Պէշկովը, Մարտինովը՝ բոլորն էլ անկեղծ սրտով հաւանեցին իմ բանաստեղծութիւնը. բայց անպիտանը (այսինքն Վասիլիչը) երեսանց գովեց ու յետոյ գնաց ռոտմիստրին պա-

նազան ափեղցփեղ բաները պատմեց իմ մասին, ռոտմիստրն էլ պոլկովնիկին իմաց արեց։ Ես վաղուց կասկածում էի Վասիլիչի վերաբերմամբ։

Դէ որ այդպէս է, ես էլ այսուհետև թշնամաբար կը վարուեմ նրա հետ։ Նա ինձ շարունակ ծաղրում էր՝ թէ ես գիրք չեմ կարդում բոլորովին. «Դու, Ֆոմա, ասում էր, քիչ բան գիտես աշխարհագրութիւնից և պատմութիւնից...» և այլն։ Իսկ ինքը շատ բան է իմանում—ոչինչ չի իմանում, ոգէտ է վերին աստիճանի։ Այստառակ մարդ... Ամերիկայում այդպիսի մարդ հազիւ թէ ճարես։ Այնտեղ մարդիկ կրթուած են ու վերին աստիճանի քաղաքավարի. մեր ռուս մուժիկների նման չեն։ Մեր ժողովուրդը շատ յետ է մնացել, որովհետև մեր ժողովուրդը կրթութիւն չունի։

Վասիլիչը հիմա կասկածելի է երևում աչքիս, ինքնակար անձնաւորութիւն է, և ես պէտք է զգուշակ հետևեմ նրա գործունէութեանը, որովհետև նա գառնագնստ գայլ է մեր մէջ։

Քո եղբայր Ֆոմա։

Թիֆլիս, 8 յունիսի, այս տարի։

Յարգելի եղբայր Պեսոր! Դեռ մինչև այսօր մտածում եմ մեր պոլկովնիկի ասած խօսքերի մասին։ Ես հնարներ եմ որոնում, թէ ինչպէս անեմ, որ պոլկովնիկը գոհ մնայ ինձանից և այլևս չբարկանայ թէ՝ «Եռանդով չէք աշխատում»։

Պատմեմ քեզ թէ ինչ եմ մտածել և ինչ ծրագրով պէտք է այսուհետև գործեմ։

Իմ կարծիքս այն է, որ յեղափոխականը—յեղափոխական է. և իբրև յեղափոխական նա միշտ որև է տեղ պահած կունենայ կամ ռումբեր կամ թռուցիկներ։ Բայց յեղափոխականները յաճախ այնպիսի ծակերումն են պահում իրենց ամեն բաները, որ սատանաների շէֆն էլ որ ժանդարմ դառնայ և խուզարկի՝ դժուար թէ գտնի։

Ի՞նչպէս վարուել։ Դու, օրինակ, հաստատ գիտես, որ ձրկնավաճառը, Մանթաշևը և այլն և այլն՝ խստական յեղափոխական են. ինչպէս պէտք է վարուես այսպիսի դէպքերում։

Մեր ռոտմիստրը երէկ սրտնեղուեց ու ասաց ինձ. «Իրա-

կան փաստեր, փաստեր բերէք և ոչ թէ գատարկ ենթադրութիւններ։ Գտէք փաստեր, թռուցիկներ գտէք, ռումբեր գտէք բացարձակ ապացոյցներ գտէք»։

Ճիշտ է, ի հարկէ։ Ուստի ինձ թւում է, որ հարկաւոր է խորամանկութիւն բանեցնել։ Բայց շատ եմ խնդրում, սիրելի եղբայր, գաղտնիքս ոչ ոքի մի յայտնի, միայն քեզ եմ գրում։

Ենթադրենք օրինակ, որ ես խուզարկում եմ յայտնի յեղափոխականի բնակարանը, բայց ոչինչ չեմ գտնում։ Եւ որովհետև ոչինչ չեմ գտնում՝ չի՞ կարելի մթթէ, որ ես ինքս որևէ հակակառավարչական թուղթ կամ գիրք՝ ծածուկ կերպով կոխեմ մահճակալի արանքը կամ գցեմ կամոդի արկղը։ Իմ կոխած թուղթը կըգտնի մէկ ուրիշ ժանդարմ. իսկ ուրիշ ժանդարմի կոխած թուղթը՝ ես կըգտնեմ. կամ թէ կարելի է այնպէս անել, որ ինքս թաքցնեմ ու ինքս էլ «գտնեմ»։

Այսպիսով մեծ օգուտ տուած կըլինեմ մեր ընդհանուր գործին։ Դա կը նշանակի, որ յեղափոխականին բռնում եմ տեղն ու տեղը, առանց այլևայլութեան, վճռական հարուածով... Մէկ-երկու-երեք... մարը։

Յեղափոխականը հո չի՞ կարողանայ հաւատացնել, որ թուղթը իրենը չի. ո՞վ կը հաւատայ նրա խօսքերին. փաստը կը ձայ փաստ. «Ահա, կասեմ, ահա ապացոյց, կասեմ, որ դու վտանգաւոր յեղափոխական ես, կասեմ, ահա անհերքելի ապացոյց»։

Հաւանում ես իմ ծրագիրը, սիրելի եղբայր։ Այս գիշեր եթէ որ խուզարկութեան գնացինք՝ կը փորձեմ։ Ես գրպանիս մէջ արդէն պատրաստ ունեմ երկու հատ յեղափոխական գիրք։ Ծածուկ գողացայ ռոտմիստրի կաբինետից, ուր ահագին քանակութեամբ յեղափոխական գրքեր կան հաւաքուած աշխարհի ամեն կողմից։ Մի գիրքը կոչւում է «Ագրարային հարցը Ռուսաստանում», իսկ միւսը «Կոմմունիստական մանիֆեստ»...

«Մանիֆեստ...» չէ՞-չէ՞ մի ոտներ։ Միայն մեր թագաւորը կայսրը կարող է մանիֆեստ արձակել։ Օրինակ, երբ որ պատերազմ է լինում Եապոնիայի հետ, այն ժամանակ թագաւորը կայսրը մանիֆեստ է արձակում։ Օրինակ, երբ թագաժառանգ Ցեսարևիչ Ալեքսէյ Նիկոլաևիչը ծնւեց այն տարին՝ թագաւորը կայսրը մանիֆեստ արձակեց, որպէսզի որքան հին պարտքեր կային՝ բոլորը ջնջւեն։ Օրինակ, երբ որ Ռոմանովների Տան

100-ամեակը եղաւ՝ այն տարին Թագաւոր Կայսրը էլի մանիֆէստ արձակեց և ով որ մարդ է սպանել կամ գողութիւն արել՝ ներումն ստացաւ։ Բայց Յեղափոխականներին չի կարելի ներել։ Մանիֆեստ են ուզում հա, որ չպատժեն։ Ամենքիդ մէկ-մէկ կախաղան կը շնորհենք՝ մէկ-մէկ կախաղան, որպէսզի բոլորդ կախուէք... Армяшки проклятые!

Այո, սիրելի և թանգագին եղբայր, երկաթը պէտք է տաք-տաք ծեծել... Ջերբակալել, շղթայել և աքսորել... Ջերբակալել, շղթայել, աքսորել!..

Յուլիոս Կեսարը միշտ ասում էր. «Եկայ, տեսայ և բռնեցի»... Ջերբակալեցի, շղթայեցի, աքսորեցի։ Ոչ քննութիւն է հարկաւոր, ոչ դատավարութիւն։ Նորից եմ ասում, որ երկաթը տաք-տաք կը ծեծեն. եթէ ուշացնենք՝ կը սառչի։ Սուպը որ սառչում է՝ հաճն էլ կորչում է։ Օրինակի համար, միշտ պէտք է տիկին բարեկամուհիներ ունենաս, որովհետև ամուսնացած կանայք աւելի ևայլ են լինում, քան թէ օրիորդները, որոնք դեռ ամուսնացած չեն։ (Իմ խեղճ Ագրաֆէնան դժբախտաբար այնպիսի վիճակումն է, որ ես ստիպուած եմ խնայել նրան)։

Առայժմ մնաս բարև, սիրելի եղբայր, ես և Ագրաֆէնաս քեզ գրկում ենք և համբուրում՝ ցանկանալով քեզ ամենայն բարիք։

Քո սիրելի եղբայր Ֆոմա Պիրաժկով։

Շատ և շատ սիրելի եղբայր Պետր Օնուֆրիչ Պիրաժկով։

Թանգագին եղբայր! Շտապում եմ յայտնել քեզ, որ ես այսօր ստացայ ս. Աննայի մեդալ՝ «за усердіе»։ Արդէն կըրծքիս կախած՝ ման եմ գալիս։ Ինձ շատ է սազում, որովհետև կուրծքս լայն է։ Շուտով էլի նոր «Աննա» կը ստանամ. յետոյ «Ստանիսլաւ». յետոյ ուրիշ-ուրիշ շքանշաններ։

Բայց խիստ տարօրինակ եմ գտնում, որ Միտինին, Սորչէնկոյին ու Զասիպկինին ևս մեդալներ են տուել։ Չէ՞ որ նրանք անշնորհք և անօգուտ ժարդարմներ են և բոլորովին չպէտք է մեդալ ստանային։ Մեր պոլկովնիկը, երևի, դիտմամբ է այդպէս արել՝ ինձանից վրէժ հանելու համար, որով-

հետև ես մի ժամանակ բանաստեղծութիւններ էի գրում։

Է՛հ, Աստուած վկայ, աշխարհիս երեսին անարդարութիւն շատ կայ։ Մեր պոլկոշնիկը կամաց-կամաց ընկնում է հայ յեղափոխականների ազդեցութեան տակ։ Նա Միտինին որ մէդալ է տուել՝ չգիտէ մի թէ, որ Միտինը հաւատարիմ մարդ չէ։ Նա Սորչէնկոյին որ մէդալ է տուել՝ չգիտէ մի թէ, որ Սորչէնկոն մի հայ աղջիկ է հաւանել և կամենում է ինքն էլ հայերի հաւատքն ընդունել, որպէսզի վերջը հայ յեղափոխական դառնայ և մեր ամենքիս գաղտնիքները դուրս հանի։

Անցեալ օրը ես Սորչէնկոյին կողմնակի կերպով ասի. «Սորչէնկո, Տէր-Պետրոսեանցի խանութը գիտես հո... Հարուստ վաճառական է երևում։ Արի, ես ու դու միասին ռապորտ տանք ռոտմիստրին, որ Տէր-Պետրոսեանցի խանութում՝ շատ զէնք կայ պահուած»... Բայց Սորչէնկոն չհամաձայնուեց, որովհետև հայի աղջիկ է սիրում։

Ես հիմա Սորչէնկոյին անուանում եմ полуармяшка!... Այդպէս էլ հարկաւոր է։

Է՛հ, Աստուած վկայ, աշխարհս անկատար է, մարդկութիւնը դեռ ես չի հասկանում թէ ինչ է հարկաւոր անել, որ խաղաղութիւն հաստատուի արտաքին և ներքին թշնամիների դէմ։ Մեր թագաւոր կայսրը պէտք է խիստ հրաման արձակի՝ բոլոր տները (այսինքն ինչքան տուն որ Ռուսաստանի մէջ կայ) միանգամից խուզարկելու՝ երեք գիշեր անդադար... Եւ այն ժամանակ մենք Ամերիկայից էլ կանցնենք։

Սրանով վերջացնում եմ նամակս։ Այս անգամ վերին աստիճանի կարճ գրեցի, որովհետև ժամանակ չունիմ բոլորովին։ Հայ յեղափոխականները վճռել էին ինձ տերրորի ենթարկել, բայց ես այնպէս խորամանկ տարայ գործը, որ երեսուն ութ դաշնացական բռնեցինք և նրանք հիմա բանտարկուած են նկուղի մէջ՝ մեր ժանդարմական վարչութեան տակին։ Այս գիշեր ձերբակալեցինք և վաղը ուղարկելու ենք Մետեխի բանտը, իսկ այնտեղից՝ մի շաբաթ յետոյ էտապով կաքսորենք Սիբիր և աւելի հեռաւոր երկրներ։

Այնպէս որ, սիրելի եղբայր, ես խիստ զբաղուած եմ։ Պոլկոշնիկը եկաւ տեսաւ մեր ձերբակալած յեղափոխականներին և շատ գոհ մնաց, որ այդքան մեծ գործ ենք կատարել։ «Բայց, ասաց պոլկոշնիկը, շատ նեղուածք է, հարկաւոր է, ասաց, եր-

կու մասի բաժանել սրանց»։ Ես էլ լիովին համաձայնուեցի պոլկովնիկի նկատողութեան հետ, որովհետև նկուղը իսկապէս փոքր է. արմեաշկանները այնպէս են թափուած իրար վրայ՝ ինչպէս որ սելեօդկանները տակառի մէջ։ Ոչինչ, սելեօդկանները աղած են լինում,—նոյնը և բոլոր արմեաշկանները։

Քեզ մի ծիծաղաշարժ բան պատմեմ։

Սրանից հինգ թէ վեց օր առաջ, փողոցում մի փոքրիկ արկղիկ գտայ՝ վարդագոյն թղթի մէջ փաթաթուած։ Արկղիկը բաց արի՝ միջին ինչ որ դեղին փոշի կար, կարծես դեղին աւիւր լինէր։ Ցոյց տուի Զասիպկինին, բայց նա էլ չիմացաւ թէ ինչ բան էր։ «Բատիւշկոյին ցոյց տուր», ասաց նա։ Բատիւշկօն, սիրելի եղբայր, մեր ֆէլդշերն է։

Բատիւշկոյին ցոյց տուի իմ գտած արկղիկը և նա իսկոյն ասաց թէ՝ «դա լուծողական փոշի է. ջրի հետ խառնում-խմում են կամ կերակրի մէջն ածում»։

Ես լուծողականը պահեցի մօտս. «եթէ, մտածեցի ինքս ինձ, մի օր մրսեմ և փորս պնդանայ, ասի, այն ժամանակ կընդունեմ, ասի, որպէսզի առողջանամ»։ Պահեցի մօտս։

Ահա այդ դեղին փոշին այսօր ծածուկ լցրի ամբողջը բորշչի մէջ և այնպէս տարայ՝ բորշչը տուի բանտարկուած արմեաշկաներին, որ ուտեն։ Նրանք էլ կերան, որովհետև խիստ քաղցած էին...

Եւ հիմա, սիրելի եղբայր, հիմա նրանք... Հա-հա-հա-հա... Ուղղակի ծիծաղաշարժ բան է...

Առաւօտն էլ գնացել էի սափրիչի մօտ որ սափրուեմ (ես հիմա աշխատում եմ սափրուել շաբաթական երեք անգամ, որովհետև այդպէս է ինձ վայել)։ Այնտեղ հինգ հոգի հերթի էին սպասում, բայց ես առանց այլևայլի առաջինը նստեցի ու պատուիրեցի՝ «Շուտ, երեսս ածիլէք, ասի, ծառայութեան եմ գնում, ասի, շուտ արէք»։

Սափրիչը թէ՝ «Հերթ պէտք է պահէք, ասաց. ձեր հերթը յետոյ է»։ Ես այնպէս նայեցի վրան, որ նա իսկոյն վախեցաւ և ներողութիւն խնդրեց։ Նրան պատժելու համար՝ ես էլ ոչինչ չվճարեցի... Թող իմանան ռուս ժարդարմի պատիւը։ Սովորական մարդ չեմ հօ. իմ ձեռքին հազար տեսակ գործ կայ։ Ուզենամ կը մատնեմ, ուզենամ կը ծածկեմ։ Ամեն ինչ կախուած է ինձանից։

Իմ առողջութիւնը շատ լաւ է, սիրելի եղբայր. Առհասարակ, ես հիմա լաւ եմ ապրում. ինչ որ սիրտս տալիս է՝ առնում եմ, որովհետև եկամուտս աւելանում է օրէցօր։ Երէկ, օրինակ, մեր տանը այսպիսի ճաշ ունէինք. առաջին տեսակը՝ կանաչ շչի, по молороссійски, թարմ սմէտանով. երկրորդ տեսակը՝ լաւ հիւթալից կատլէտներ՝ տապակած գետնախնձորով և թթու վարունգով. երրորդ տեսակն էլ՝ կիսէլ։ Գինին մեր տանը առատ է—իսկական Կախէթի գինի։ Ցաճախ քէֆեր ենք անում և վերին աստիճանի ուրախ ենք։

Հետևեալ անգամ ես քեզ մանրամասն կը գրեմ ամեն բանի մասին։

Վաղը ամսի 20-ն է. թէև մենք ռոճիկներս պէտք է ստանանք, բայց ես բոլորովին չեմ մտածում, որովհետև դրամի առանձին կարիք չեմ զգում։ Ես կարող եմ նոյն իսկ տոկոսով փող տալ մէկ-երկու տարի ժամանակով, եթէ որ քեզ հարկաւոր լինի։

Քո կրտսեր եղբայր՝ ժանդարմական
ունտէր-օֆիցէր Ֆօմա Պիրաժկով։

19 յունիսի, քաղաք Թիֆլիս:

1910 թ. յունիս ամիս 30, քաղաք Թիֆլիս։

Շատ սիրելի և ամենաթանգագին եղբայր Պետր Օնուֆրիչ!

Այսօր ամբողջ քաղաքը վաղ առաւօտեանից զարդարուած է դրօշակներով, որովհետև այսօր Նորին Կայսերական Բարձրութիւն Թագաժառանգ Ցեսարևիչ Ալէքսէյ Նիկոլաևիչի ծնընդեան օրն է։ Երեկոյեան բոլոր փողոցներում կը լինի մեծ հրավառութիւն և կը լինի մեծ ցնծութիւն։

Չորս օր է ես քաղաքում մեն եմ գալիս սովորական մարդու՝ շտատակի հագուստով, այսինքն՝ սև շլեապա ունեմ, պինջակ և ընդհանրապէս այն ամենը, ինչ որ սովորաբար հագնում է սովորական ամեն մի մարդ, որ ոչ զինուորական է, ոչ էլ ժանդարմ։ Պաւել Կորսակովն ևս հագել է շտատակի, եւ թերևի նրան էլ մեր ռոտմիստրն է այդպէս կարգադրել, որովհետև ինձ ռոտմիստրն է այդպէս կարգադրել։

Ես իմ նոր շորը հագած պէտք է ամեն տեղ մտնեմ ու չորս կողմս շարունակ ականջ դնեմ թէ ինչ են ասում մարդիկ իրար մէջ։ «Լաւ ականջ դիր, ասաց մեր ռոտմիստրը, ականջներդ լաւ սրիր, ասաց, չորս կողմդ լաւ դիտիր, ասաց»։

Ի հարկէ, ես շատ լաւ ականջ եմ դնում։ Ոչ ոք չի կարողանում ենթադրել, թէ ես ոչ թէ հասարակ մարդ եմ, այլ իսկական ժանդարմ եմ։ Բայց եթէ մի հասարակ մարդ որև է չար նպատակով ուզենայ ժանդարմի շոր հագնել, որ մեզ խաբի,—ես անմիջապէս կիմանամ, կը հասկանամ որ դա սուտ է, կեղծիք է և իսկոյն կը ձերբակալեմ այդ տեսակ գառնազգեստ գայլերին։ Իսկ ինձ ոչ ոք չի կարող հասկանալ թէ ժանդարմ եմ, և ոչոք իրաւունք չի ունենայ ինձ ձեռնամուխ լինելու։

Լաւ բան է եղել ուրիշների խօսելուն գաղտուկ ականջ դնելը։ Այս երեք օրւայ մէջ ես շատ հետաքրքրական նորութիւններ իմացայ։

Երկու հայ ռուսերէն խօսում էին տրամւայի վագոնում։ Ես էլ նստած էի նրանց կողքին։ Դիտմամբ նրանց կողքին նստեցի, որովհետև առաջին իսկ հայեացքից կասկածելի երեւացին։

— Այսօր երեկոյեան,—ասաց երկու հայերից մէկը, որ երկար սև մօրուք ունէր ու կապոյտ ակնոցներ,—այսօր երեկոյեան հանդիպենք անպատճառ։

— Ի հարկէ, ի հարկէ, ես անպատճառ կը գամ,—պատասխանեց երկրորդը, որ մօրուք չունէր, այլ միայն ակնոցներ, բայց ոչ նոյնպէս կապոյտ, այլ սովորական ակնոցներ։

Եւ յետոյ երկուսն էլ իսկոյն լռեցին։ Մօրուքաւորը ծածուկ արմունկով հրեց անմօրուքին և ինչ որ բան ասաց իրենց լեզուով։ Ես գլխի ընկայ ու մտքիս մէջ ասի. «Շանորդիք իմացան, որ ես սովորական մարդ չեմ»։

Բայց ես իսկոյն երեսս շուռ տուի՝ որպէս թէ բոլորովին չեմ հետաքրքրւում նրանց խօսակցութեամբ, և սկսեցի մտիկ տալ աջ կողմս՝ փողոցի խանութներին ու ցուցանակներին։

Ականջներս լարած պահեցի։ Նրանք մկների պէս՝ ակնոցների տակից նայում էին ինձ վրայ. իսկ ես կատուի նման հանգիստ՝ քթիս տակ մրմռում էի Եւգէնի Օնէգինի եղանակով. «Ахъ ты, ахъ ты дурь-армяшка, ахъ ты дрянь и картошка!...»

Հասանք Երևանեան հրապարակ։ Նրանք երկուսն էլ շտապով իջան վագոնից և ուզեցին անյայտանալ աչքիցս։ Բայց ես արծուի հայեացքով հետևում էի նրանց։ Եւ որպէսզի չկորցնեմ նրանց, գնացի ու կանգնեցի բաւականի մօտիկ՝ իբրև թէ սպասում եմ ուրիշ վագոնի։

— Этотъ шпикъ слѣдитъ за нами,— ասաց անմօրուքը և մատով ցոյց տուեց դէպի ինձ։ Ես ուզեցի բարկանալ, բայց զսպեցի ինձ։ Անգամը երես առաւ իմ լռութիւնից ու բարձր կանչեց ինձ. «Шпикъ, шпикъ, шпикъ!... пади ко мнѣ, поди ко мнѣ!»... Շուն կանչելու ձևեր արեց։

Ես նրանց շուն ցոյց կըտամ։ Նրանց դէմքերը լաւ յիշում եմ, կը գտնեմ մի օր։

Եթէ մէկ ուրիշ ժանդարմ լինէր իմ տեղակ՝ չէր համբերի ի հարկէ և աղմուկ պէտք է ծագէր։ Բայց ինչ օգուտ կը ստացուէր աղմուկից—ոչ մի օգուտ։ Մինչդեռ ես ինձ սառը պահեցի, որովհետև կամքի մեծ ոյժ ունեմ։ Մարդ կարող է բարկանալ, եթէ ուզենայ բարկանալ, և կարող է չբարկանալ՝ եթէ ուզենայ չբարկանալ։

Օրինակ, իմ բարկութիւնս հիմա գալիս է ոչ թէ այն պատճառով, որ երկու արմեաշկաները ինձ անպատուեցին ու փախան վախկոտ նապաստակների պէս, այլ ես բարկացած եմ դեռ ևս սաստիկ՝ Վասիլիչի դէմ... Սրիկան դիտմամբ եկել-կանգնել էր տրամայի վագոնների մօտ և մեծ բաւականութեամբ լսեց արմեաշկայի հայհոյանքը։ Պէտք է ասեմ քեզ, սիրելի եղբայր, որ Վասիլիչն էլ շրջում է քաղաքում սովորական մարդու հագուստով։ Այս մասին նամակիս սկզբում չգրեցի, որովհետև ընդհանրապէս չեմ ուզում խօսել Վասիլիչի անձնաւորութեան մասին։ Նա այժմ ինձ համար մի ոչնչութիւն է՝ մի կենդանի դիակ, որի հոտից մարդ պէտք է քիթը հուպ տուած պահի շարունակ։

Հաստատ համոզուած եմ, որ Վասիլիչը հայ յեղափոխականների հետ գաղտնի ընկերութիւն է անում։ Դրա համար նա ինձանից աւելի շատ բաներ գիտէ յեղափոխականների կեանքից։ Առաջ ես ուղղակի զարմանում էի թէ որտեղից նա այնքան մանրամասն տեղեկութիւններ էր հաղորդում։

Ուստի ես երկու օր առաջ գաղտնի ռապորտ ներկայացրի մեր ռոտմիստրին հետևեալ բովանդակութեամբ. «Պատիւ ու-

նեմ տեղեկացնելու ի գիտութիւն Вашего Высокоблагородія, որ Ձեր ստորագրեալ ծառայող՝ վախմիստր Աֆանասի Վասիլևիչ Մէշկովը բարեկամական կապեր ունի հայ յեղափոխական կոմիտէի անդամների հետ, և նրանցից մեծ գումարներ է ստանում իբրև կաշառք։ Նրա այս տեսակ գործունէութիւնը ճնաս է բերում Գահին և Հայրենիքին։

Ռոտմիստրը կարդաց իմ ռապորտը և յետոյ իսկոյն գնաց պոլկովնիկի մօտ, պոլկովնիկն էլ, հեռագիր ուղարկեց, կարծեմ, ներքին գործոց մինիստրին։

Ի՞նչ արած թէ Վասիլիչը իմ և քո հին ծանօթն է։ Ես աչքի առաջ ունեմ նախ և առաջ մեր ընդհանուր Հայրենիքի շահը՝ և եթէ դու էլ, սիրելի եղբայր, երբևիցէ հակառակ գնալու լինես (օրինակի համար եմ ասում, ի հարկէ) գոյութիւն ունեցող կարգերին՝ այն ժամանակ ես օրհասական կռիւ կը մղեմ նաև քո դէմ։

Ամենից առաջ՝ եռանդ և հաւատարմութիւն... կեցցէ մեր պանծալի Թագաւոր Կայսրը!

Կեցցէ Մեծ Ռուսաստանը! Թող կործանուի հայ յեղափոխութիւնը! Թող կործանուեն բոլոր հայերը, վրացիք և Թուրքերը! Կեցցէ մեր պոլկովնիկը!

Ֆ. Պիրաժկով։

Թիֆլիս քաղաք, 22 յուլիսի 1910 թվի։

Իմ եղբայր Պեսոր Օնուֆրիչ Պիրաժկովին յարգալի և սիրով բարևներ։

Յարգելի եղբայր, քո նամակը ստացել եմ երկու շաբաթ առաջ։ Բայց հիմա եմ պատասխանում, որովհետև գործերս թոյլ չեն տալիս ինձ՝ զբաղուելու կողմնակի հարցերով։

Իմ հաւաքած ամենաճիշտ տեղեկութիւնների հիման վրայ, պոլկովնիկը կարգադրեց խուզարկել մի հայ դերձակի արհեստանոց, որ գտնուում է հայոց դպրոցի հենց կողքին։ Խուզարկութիւնը տուեց կարևոր արդիւնք. արհեստանոցում գտնուել են՝ հրացանի ու ատրճանակի փամփուշտներ մեծ քանակութեամբ և յեղափոխական թռուցիկներ՝ նոյնպէս մեծ քանակութեամբ։

Պոլկովնիկը վերին աստիճանի գոհ է ինձանից։ Թոտ-

միստրն էլ, իհարկէ, նոյնքան գոհէ. բայց ես հիմա նրա կարծիքներին այլևս արժէք չեմ տալիս։ Շատախօս յիմար մարդ է, իրէն ծանը պահել չի իմանում՝ շարունակ գոռգոռում է մեր միւս ժանդարմների վրայ։

Ցարգելի և սիրելի եղբայր, այն բանաստեղծութիւնները, որ մի ժամանակ ուղարկել եմ քեզ, բարի եղիր՝ դէն գցիր, հարկաւոր չեն, որովհետև ես այլևս չեմ գրում բանաստեղծութիւններ։ Գրում են միայն ծոյլ ու պարապ մարդիկ։

Մեր նորածինը վերին աստիճանի առողջ, կայտառ և մեծ ապագայ խոստացող երեխայ է։ Անդրանիկները սովորաբար հօրն են նմանում։ Արդէն կնքել ենք երեխային և մեծ ընթրիք պատրաստեցինք այդ առթիւ։ Տղայիս անունը դրինք Բորիս (մեր պոլկովնիկին ի պատիւ)։

Ընդունիր իմ խորին յարգանքի զգացմունքներս. քո եղբայր՝ ժանդարմական ունտէր-օֆիցեր Ֆ. Օ. Գիրաժկով։

Ք. Թիֆլիս, 15 օգոստոսի 1910 թ.

Սիրելի եղբայր! Հաճոյքով կատարում եմ քո խնդիրը և ուղարկում եմ քեզ պատճէնը այն ռապորտի, որ ես ներկայացրի Բորիս Պաւլովիչին (մեր պոլկովնիկը)՝ հայոց յեղափոխական կոմիտէի անդամներին միանգամից ձերբակալելու համար։ Դու թէև ուրիշ տեղեկութիւններ ես խնդրել ինձանից՝ այստեղի տաք բաղանիների մասին և այլն. բայց անշուշտ, քո վերջին նամակդ գրելիս՝ դու իմացած չես եղել իմ ռապորտի մասին. ուստի և հիմա որոշեցի անմիջապէս ծանօթացնել քեզ նրա բովանդակութեան հետ։

Իսկ ինչ վերաբերում է այստեղի տաք բաղանիներին և այլն, պէտք է քեզ ասեմ, սիրելիս, որ ես կանոնաւոր կերպով, ամեն երկու շաբաթը մէկ, գնում եմ բաղանիս՝ կամ Ագրաֆէնայի հետ միասին, կամ բոլորովին առանձին։ Երբ Ագրաֆէնան հետս է լինում՝ այն ժամանակ մեր երկուսիս համար յատուկ համար ենք վերցնում և մի ժամ լողանում։

Բայց ճիշտն ասած, ես այնքան էլ չեմ ուզում, որ Ագրաֆէնան հետս լինի։ Ես աւելի գերադասում եմ ընդհանուր տղամարդկանց լողարանը մտնել (իսկ Ագրաֆէնային հօ չեմ տանի այնտեղ), որովհետև զանազան մարդկանց հանդիպելու,

ծանօթանալու առիթներ են լինում։ Չէ՞ որ յեղափոխականները նա լողանալու կարիք են ունենում։ Բաղանիսում նրանք իրենց ապահով են զգում, որովհետև մերկ են և այնպէս են համոզված թէ ոչ ոք չի հետևում նրանց։ Նրանք ազատ կերպով լողանում ու խօսում են՝ բարձրաձայն երգում են, իրար վրայ կատակով ջուր շաղ տալիս և առհասարակ իրենց լուրջ չեն պահում։

Թէև նրանք հայերէն են խօսում (որովհետև ռուսերէն չեն իմանում. հայ յեղափոխականները վերին աստիճանի հակառակ են ռուսաց լեզուին). այնուամենայնիւ նրանց շարժումներից կարելի է շատ բան հասկանալ։

Ինչևիցէ. ես չեմ կարող, ի հարկէ, քեզ հիմա մանրամասն նկարագրել թէ ինչպէս եմ հասկանում նրանց գաղտնի մտքերն ու ծրագրները։ Չնայած որ դու իմ հարազատ եղբայրն ես, բայց և այնպէս կան որոշ կարևոր գործեր և ծրագրներ, որոնց մասին քեզ չեմ կարող յայտնել։ Օրինակ, միթէ ներքին գործոց մինիստրը ուրիշներին կըպատմի իր գաղտնի ծրագրների մասին։ Ի հարկէ չի պատմի, որովհետև խելօք, լուրջ հեռատես ու վերին աստիճանի զգոյշ մարդ է։

Հարցը համարում եմ փակված։

Ստորև կցում եմ իմ ռապորտի պատճէնը։ Քեզ իրաւունք եմ տալիս ցոյց տալու ռապորտս քո պաշտօնակիցներին ու մեծաւորներին։

Ագրաֆէնայի առողջութիւնը լաւ է։ Նա իմանալով որ քեզ եմ նամակս գրում խնդրեց բարևել քեզ իր կողմից։ Ընդունիր միաժամանակ նաև իմ բարևները։

Սղմում եմ ձեռքդ։ Քո եղբայր՝ Ֆօմա։

Պատճէն. Նորին Բարձրաբարեծնութիւն Թիֆլիսի ժանդարմական վարչութեան պարոն գլխաւորին. ժանդարմական կրտսեր ունտէր-օֆիցէր Ֆօմա Պրաժկովից։

ՌԱՊՈՐՏ

Ձերդ Բարձրաբարեծնութիւն! Հաւատարմութեամբ և անձնուէրութեամբ ծառայելով Գահին ու Հայրենիքին և չխնայելով իմ եռանդը, առողջութիւնը, խելքս ու գիտութիւնս և պատրաստ լինելով այսուհետև էլ աշխատել նոյն ոգով և բնաւ

չունենալով որև է անձնական ակնկալութիւն՝ շքանշաններ ստանալու, ենկատի առնելով մեր ընդհանուր գործի շահն ու նպատակը,—ես թոյլ եմ տալիս ինձ ամենախոնարհաբար զեկուցանելու Ձերդ Բարձրաբարեծնութեան՝ հայոց յեղափոխական կոմիտէի բոլոր անդամներին, որոնք յանցաւոր գործունէութիւն են վարում գոյութիւն ունեցող կարգերի դէմ, ձերբակալելու մասին։

Հայ ժողովուրդը վերին աստիճանի ապերախտ է դէպի Ռուսական Գահը և այդ պատճառով էլ հայերի մէջ առաջ է եկել տերրորիստների չարամիտ կազմակերպութիւնը, որ նպատակ ունի շարունակ մահացնել՝ Գահի ու Հայրենիքի համար անձնուէր կերպով աշխատող բոլոր կարևոր ռուս պաշտօնեաներին։ Հայոց յեղափոխական կոմիտէն անցել է Կովկաս Թիւրքիայից և Եապոնիայից, որովհետև Թիւրքական և եապոնական Թագաւորները, որոնք խիստ հակառակ են մեր Ռուսաստանին և դեռ չեն ուզում խրատուել մեր ուած մահացու հարուածներից, ահա այդ Թագաւորները ահագին գումարներ և մեծ քանակութեամբ զէնք են տալիս հայ յեղափոխական կոմիտէի անդամներին և շարունակ գրգռում են հայերին, որ նրանք ապստամբեն մեր դէմ։

Երկար ժամանակ, օր ու գիշեր, յաճախ անքուն մնալով, ամենուրեք ու ամենքին հետևելով՝ ես հսկայական ջանքեր եմ թափել և ահա այժմ ի վիճակի եմ ամենաստոյգ և ամենակարևոր տեղեկութիւններ հաղորդել հայոց յեղափոխական կոմիտէի գաղտնի որոշումների ու ծրագրների վերաբերմամբ։

Կոմիտէն արել է հետևեալ որոշումները.

1. Պայթեցնել դինամիտով ժանդարմական վարչութեան ամբողջ գլխաւոր շէնքը՝ իր բոլոր ֆլիգէլներով։

2. Պայթեցնել դժոխային մեքենաներով Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի պալատը։

3. Պայթեցնել Ձիւնորական Տաճարը։

4. Ցարձակումներով գրաւել արսենալի կազարմանները։

5. Իրենց Կաթողիկոսին Թեհրանից բերել Թիֆլիս և Թագաւոր յայտարարել։

6. Մի շարք ուրիշ որոշումներ, որոնք երկրորդական նշանակութիւն ունեն։

Այս որոշումների իրագործումը մեծ դժբախտութիւն կը լինի ամենքիս համար. ուստի անհրաժեշտ է հիմիկուանից այնպիսի միջոցներ ձեռք առնել, որոնք կտրուկ լինելով՝ մահացու հարուածների պէս իջնեն հայ յեղափոխութեան գլխին։ Օրինակ, հարկաւոր է մեր ժանդարմական վարչութեան տակին՝ գետնի մէջ մի լայն ծակ փորել ու հեռախօս սարքել։ Հեռախօսի մօտ միշտ մի հերթապահ պէտք է նստած լինի, որպէսզի վտանգի մասին իսկոյն իմաց տայ, որովհետև հայ տերրորիստները նրպատակ ունեն՝ գետնի միջով անցկացնել դինամիտը։

Յետոյ ամենից առաջ հարկաւոր է կարգադրել, որ բոլոր լուսանկարիչները երկու օրը մէկ անգամ կանոնաւոր կերպով ուղարկեն ժանդարմական վարչութեանը՝ իրենց մօտ նկարուող մարդկանց պատկերները, ազգանունները և բնակարանի հասցէները։ Դէմքերից միշտ էլ կարելի է իմանալ, թէ ո՞րն է իսկապէս տերրորիստ։

Աւելի կարևոր են հետևեալ միջոցները.

1. Հայերի բոլոր տպարանները փակել, որովհետև յեղափոխական թռուցիկները նրանք են տպում։

2. Փակել հայոց դպրոցները. ուսուցիչներին ուղարկել ուրիշ քաղաքներ, իսկ վարժուհիներին կարելի է պահել։

3. Բոլոր հայ դերձակների արհեստանոցները խուզարկել իւրաքանչիւր շաբաթ ու չորեքշաբթի օրերը, գիշեր ժամանակ։

4. Բոլոր նամակները, որ հայերի հասցէով կլինեն, բացանել և մանրամասն կերպով կարդալ։

5. Բոլոր հայ ճանապարհորդներին խուզարկել, որպէսզի ռումբեր չանցկացնեն գաղտնի կերպով։

6. Ձերբակալել բոլոր կասկածելի հայերին ու առժամանակ ուղարկել ներքին նահանգները։

7. Հայերի հարսանիքներին ու թաղումներին գաղտնի ոստիկաններ կանգնեցնել։

Ձերդ բարձրաբարեծնութեան խոնարհ ծառայ և սատրապ՝ Ալեաբ՝ կրտսեր ունտէր-օֆիցէր և ս. Ննայի 4-րդ աստիճանի շքանշանի կաւալէր՝ Ցօմա Պիրաժկով։

Յ. Գ.—Պէտք է քեզ նախապէս ասեմ, եղբայր Պեսար, որ Բոլիս Պաւլովիչը ինձ հետ համարեա թէ ընկեր է դարձել։ Նա արդէն այցելում է ինձ։ Երէկ օրինակ առաջին անգամ ե-

կաւ մեզ մօտ, նստեց երկար ժամանակ և շատ ուրախ անցկացրինք երեկոն։ Ես էի, Բորիս Պաւլովիչը և Ագրաֆէնա Պաֆնուտնան. և ուրիշ ոչ ոք։ Բորիս Պաւլովիչը հիանալի անէկդոտներ պատմեց և ես սաստիկ ծիծաղեցի։

Հրաշալի մարդ է և վերին աստիճանի խելօք ու զարգացած։ Ես կարծում եմ, որ նա շուտով կը դառնայ ներքին գործոց մինիստր։

Երէկ նա Ագրաֆէնա Պաֆնուտնայի համար երկու ֆլակօն ընտիր օդէկոլօն բերեց նուէր։ Թանգագին բաներ են։ Իսկ այսօր էլ՝ յատուկ մարդու ձեռքով ուղարկեց մի ծաղկեփունջ։

Ես և Ագրաֆէնան անկեղծ սրտով յարգում ենք Բորիս Պաւլովիչին, որ նա կարողանում է յաջող ընտրութիւն անել իր ստորադրեալների մէջ։

Ֆ. Օ. Պ.

---

22 սեպտեմբերի, Թիֆլիս։

Սիրելի եղբայր Պետր Օնուֆրիչ! Ես ստացայ աւագ ունտէր-օֆիցէրի աստիճան և պագոններիս վրայ երեք շերտիկ եմ կրում։

Ագրաֆէնան շատ գոհ է և օրէցօր աւելի է գեղեցկանում անպիտանը։ Ես հպարտանում եմ, որ նրա պէս գեղեցկուհի կին ունեմ։

Բորիս Պաւլովիչը խոստացել է՝ ներկայացնել ինձ ս. Աննայի 3-րդ աստիճանի շքանշանի։ Ես այսուհետև արագ քայլերով առաջ կերթամ, ինչպէս որ շոգեմեքենան՝ սկզբում կամացկամաց է շարժւում ու յետոյ արագացնելով-արագացնելով... փուհ-փուհ-փուհ՝ վշշալով ու դղրդալով՝ սլանում է դէպի դաշտերը, լեռները և այլն։

Բորիս Պաւլովիչին պատմել եմ քո մասին, որ դու իմ եղբայրն ես և դեպարտամենտի մէջն ես ծառայում։

Աւագ ունտէր-օֆիցէր՝ Ֆ. Օ. Պ. (այսինքն՝ Ֆ. Օ. Պ.-բաժկով)։

---

3 հոկտեմբերի, Թիֆլիս։

Թանգագին եղբայր, կարող եմ յայտնել քեզ, որ ես ստացայ այսօր առաւօտեան ս. Աննայի 3-րդ աստիճանի շքանշանը։

Ի՞նչպէս է քո թանգագին առողջութիւնը, ինչպէ՞ս են ընթանում գործերդ, հետաքրքրական է իմանալ։ Յոյս ունեմ, որ

դու կը պահես քեզ արժանաւոր կերպով և իմ անունիս վրայ ստուեր չես ձգի։ Աշխատիր լինել միշտ զգոյշ, հեռատես և անձնուէր։

Ագրաֆէնա Պաֆնուտիևնային հաղորդեցի քո ուղարկած բարևները. նա շնորհակալութիւն յայտնեց։

Ընդունիր իմ կողմից ամենաջերմագին և ամենաանկեղծ բարևներ։

Աւագ ունտէր-օֆիցէր և ս. Աննայի 4-րդ և 3-րդ աստիճանի շքանշանների կրկնակի կաւալէր՝ Ֆոմա Օնուֆրիեւիչ Պիրաժկով։

---

15 հոկտեմբերի, 1910 թ.

Նամակներդ ստացել եմ, սիրելի եղբայր, բայց չեմ կարող քո խնդիրը կատարել։

Ներկայումս զբաղուած ենք հայ յեղափոխականների դատով։ Ձերբակալած ունենք երկու հազարից աւելի մարդ։ Գլխաւոր մեղադրողներից մէկը ես եմ։

Նոր բնակարան ենք վարձել՝ երեք սենեակ, խոհանոց և ուրիշ շատ յարմարութիւններ։ Բորիս Պաւլովիչն ինքը ջոկեց՝ իրա ճաշակով։

Ագրաֆէնա Պաֆնուտիևնան համարեա իւրաքանչիւր ամիս նոր հագուստ է կարել տալիս և միշտ թատրոն է գնում։

Բորիս Պաւլովիչը իմ մասին յատուկ զեկուցում է ուղարկել ներքին գործոց մինիստրին և խնդրում է օֆիցերական կոչում տալ ինձ։

Աւելորդ եմ համարում մանրամասն գրել իմ գործունէութեան մասին. կարծում եմ, որ ամեն ինչ պարզ պէտք է լինի քեզ համար։

Յամենայն դէպս դու կարող ես, եթէ ուզենաս, ինձ նամակներ ուղարկել. ես սիրով կը կարդամ։ Բայց միայն լուրջ բաներ գրիր, որպէսզի Ագրաֆէնան ևս կամենայ հաճոյքով կարդալ։

Պատրաստում եմ մէկ ընդարձակ և փաստաւոր զեկուցում՝ հայ յեղափոխական շարժումի նպատակների վերաբերեալ։ Զեկուցումը կուղարկուի Պետերբուրգ, որպէսզի տպուի։

Եղբայրդ։

Վ. ՎԱՂԱԴԵԱՆ

148

ՀԱՐԱՒԻ ԾԱՂԻԿՆԵՐ

I

* * *

Ես էլ աղօթել չեմ կարող,
Տաճարի ճամբան եմ մոռացել.
Իմ գիտցած ճամբի վրայ
Խոտ ու մացառն է բուսել.

Իմ տեսածներից ո՛չ մէկը
Աստուծոյ նման չէ,
Միայն քո գունատ դէմքն է,
Որ ինձ աղօթք կը ներշնչէ
Իմ աղօթքները և սաղմոսները բիւր.
Քեզ է միայն, քեզ, որ կը կանչէ։

II

Միայն ինձ համար

Երբ որ փակում ես աչերդ ծաւի,
Գիտե՞ս, որ այնտեղ թաղում ես դու ինձ,
Ո՛վ ոճրագործ...

Երբ որ բանում ես կոպերտ յստակ.
Գիտե՞ս, որ դու ինձ նոր կեանք ես տալիս,
Ո՛վ դու իմ Աստուած։

Ա՛խ, իմ թաղումն ու յարութիւնը
Քո ծով աչերում, եղեմ ինձ համար,
Միայն ինձ համար...

Սար-Ցով

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱԼՄԱՆԱԽ

* * *

Թող ես մոռանամ ընկեր ու ծանօթ,
Ապրեմ երազը, խորհուրդն աշխարհի,
Քաղաքի կեանքին չլինեմ ես մօտ,
Օթևանս անեմ լեռներն ամայի։

Եւ մինչև ասողոտ, պայծառ իրիկուն
Անցնեմ հանդ ու գիւղ, շէներ շարէշար,
Վանք ու սրբավայր՝ լեռների գոգում,
Ոսկեծուփ արտեր, ճամբայ, գետ ու սար։

Կամ հսկայ հօտով ոչխարս լինի
Իրիկնամուտին որոճի նստած,
Մայրունին ձուլեմ մեղեդիս ի մի,
Ունկնդիր լինեն կանաչները թաց։

Թող ես մոռանամ ընկեր ու ծանօթ,
Քաղաքի կեանքին չլինեմ ես մօտ։

Պահարէ

* * *

Մանուկ, միամիտ մանուկ էի հեզ,
Ծովի եզերքին խխունջը առնում,
Աւազը ոսկի նախշում էի ես.
Ալիքը գալիս աւազին զարնում
Ու ջնջում էր իմ նախշերը պէս-պէս...
Եւ այսօր թէև էլ մանուկ չեմ ես,
Բայց նոյնն եմ անում...

Մանուկ, միամիտ մանուկ էի հեզ,
Ու ձեռքս դէպի աստղն էի պարզում,
Որ բռնեմ իսկոյն, ներքև բերեմ ես,
Բայց աստղը հեռու՝ ձեռս չէր հասնում.
Ու լալիս էի, ո՜հ, ինչպէս, ինչպէս...
Ու թէև այսօր մանուկ չեմ էլ ես,
Բայց նոյնն եմ անում...

Եղիա Տէր-Հայրապետեան

ՅՈՒՍԱԼՔՈՒՄ

Pauvre âme, c'est cela!
Paul Verlaine

Կուզես փոթորկուիր, կուզես գազազիր,
Կնոջ գրկին մէջ լոկ թոյն կայ զազիր...
Սիրտ, կուզես մեռիր, կուզես գազազիր։

Ոչ ոք չունեցար, որ քեզ յոյս մը տար,
Զուր կնոջ հոգու ներսերը մտար...
Սիրտ, ոչինչ չկար, որ քեզ յոյս մը տար։

Եւ երազեցիր հոգեկան մի սէր,
Բայց սէրը կնոջ պատրանք ու միս էր...
Սիրտ, չկայ, չկայ հոգեկան մի սէր։

Կուզես փոթորկուիր, կուզես գազազիր,
Կնոջ գրկին մէջ լոկ թոյն կայ զազիր...
Սիրտ, կուզես մեռիր, կուզես գազազիր։

Ազատ Վշտունի

ԿԵՑՑԷ ԿԵԱՆՔԸ

Դրամա 3 գործողութեամբ

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ Ա.

Ուռեկլեանի առանձնասենեակը՝ ժուգ-բորդօ գոյնի պաստառով, ճաշակով զարդարուած։ Պատից կախուած նշանաւոր գրողների նկարներ՝ շրջանակներում։ Երկու իւղաներկ պէյզաժ։ Գրասեղանի վրայ Շէքսպիրի բիւստը։ Պահարանի մէջ երևում են փառաւոր գրքերի կողերը։ Օճեակը ընդհանրապէս շատ կոկ ու հաճելի տպաւորութիւն է թողնում։ Մուտքը աջից։ Դիմացի դուռը տանում է ննջարան։ Ձախ՝ երկու պատուհան, որոնք նայում են դէպի փողոց։ Ննջարանի ձախ կողմում կաւիճ։ Առաւօտեան ժամը 11-ին մօտ։

Վարագոյրը բացւելիս Ուռեկլեանը նստած գրասեղանի առաջ լրագիր է կարդում։ Կամինի մօտ՝ ճօճաթոռի մէջ ընկղմած ընթերցանութեան մէջ նստած է Շահումեանը։ Մի քաւի վայրկեան լռութիւն։

ՈՒՌԵԿԼԵԱՆ.—Առողջ, գեղեցիկ դէմքով 45-ի մօտ։ Պէնանէի տակից երևում են նրա խոշոր ու սև ս չքերը. քունքի մազերը սկսել են ճերմակել։ Նա շուտ-շուտ ցնցում է գլուխը և ետ ձգում ճակատին թափուած մազերը, որ չխանգարի. բացի ս յդ՝ նա ինչ որ գեղեցկութիւն է տեսնում գլխի ս յդ շարժման մէջ։ Հագնուած է ճաշակով։

ՇԱՀՈՒՄԵԱՆ.—36 տարեկան։ Հագնուած է պարզ ու մաքուր։ Նիհար է. մի փոքր հաստ շրթունքներն ու կալճատես աչքերը չեն խանգարում դէմքի գրաւիչ և հետաքրքիր լինելուն։ Ցանկարծ դադարում է ճօճուել ու ոտքի է ելնում։

ՈՒՌԵԿԼԵԱՆ—(Գլուխը մի վայրկեան բարձրացնելով) Դէ... Ի՞նչ կասես։

ՇԱՀ.—Տաղանդաւոր բան է։

ՈՒՌԵԿԼ.—(Թեթեւ հեգնանքով) Այդպէս մի անգամ ի՞նչ։ Դու, ըստ սովորութեան, կարծեմ էլի չափազանցնում ես։

ՇԱՀ.—Գուցէ։ Ես չեմ պնդում, որ նա անթերի մի բան է, բայց շնորհքը անպայման է։ Մեր թատրոնական գրականութիւնը ոտք է դնում իր իսկական, ուղիղ ճանապարհի վրայ։

ՈՒՌԵԿԼ.—Ճաշակի խնդիրներում չեն վիճում։

ՇԱՀ.—Ոչ, սա արդէն ճաշակի խնդիր չէ։ Ես գիտեմ. ձեզ վախեցնում է ամեն մի նորութիւն... Բայց բաւական է, մի քիչ աւելի լայն սիրտ ունեցէք։ Ես չեմ հաւատում, որ դուք իսկապէս չէք հաւանել. ոչ, մի ներքին վախ ձեզ ստիպել է փակել ձեր աչքերը։ Դու հոտառութիւնից զուրկ չես և չէիր կարող չնկատել, որ մի ինչ-որ նոր, թարմ բան կայ նրա մէջ, որ արժէր խրախուսել հեղինակին, բայց ոչ, մերժել էք, որովհետև նեղ սիրտ մարդիք էք, չէք ուզում խոստովանել, որ ձեր երգը երգուած է, որ ինչ կաք, այն էլ կը մնաք։ Ձեզանից բան դուրս չեկաւ։

ՈՒՌԵԿԼ.—Ես ուղղակի ապշած եմ. դու յիմար չես, բայց առանց կարմրելու կարողանում ես այդպիսի յիմարութիւններ դուրս տալ։

ՇԱՀ.—Ինչպէս երևում է՝ ինձ լաւ չես ճանաչում. յիմար եմ։ Թողէք այդ նեղսրտութիւնը։ Դիմաւորենք գրկաբաց, որպէս զի գոնէ նրանք կարողանան լայն տարածել իրենց թեւերը և կուչ չգան անկիւններում։ Դուք այլևս ոչինչ չունիք ասելու։ Առանց վախի, որ կը նսեմանաք, լսենք թէ ինչ են ասելու սրանք։

ՈՒՌԵԿԼ.—Վա՜խ... Կարծեմ դու սկսում ես ինձ մեղադրել, որ ես նախանձում եմ այդ Սարումեանին։ Դու չափազանց վատ կարծիքի ես իմ մասին։ Ինձ զարմացնում է քո այդ ինքնահաւան տոնը. կարծես Սինա լեռան բարձունքներից ես խօսում մեզ, միջատներիս հետ, կարծես ինչ-որ անհերքելի պատգամներ ես բերել քեզ հետ արտասահմանից։ Եթէ մենք, ինչպէս դու ես ասում, վախենում ենք ամեն մի նորութիւնից, դու էլ տարուում ես ամեն մի նորութեամբ։ Վերցնենք հենց այս պիէսը (Վերցնում է ու կրկին ծգում սեղանի վրայ). ինչն է քեզ այնպէս նոր, տաղանդաւոր թւացել, որը մենք չենք հասկացել։ Դու տեսար մի նորութիւն և այն բոլորը, ինչ առաջ տաղանդաւոր ես համարել, ոչնչացան, անտաղանդ դարձան և միայն սա մնաց, և ոգևորութիւնդ հասնում է անհեթեթութեան...

ՇԱՀ.—Ընդհանրապէս ես չեմ հասկանում, ինչ է նշանակում առաջ... Շատ յիմարութիւններ եմ ասել ու գրել առաջ. դա դեռ չի նշանակում, թէ պէտք է պինդ-պինդ բռնեմ այդ յիմարութիւնների փէշերից, որովհետև մի ժամանակ ասել եմ։

Դեռ դպրոցական նստարանի վրայ էի, որ ռէցէնզիաներ էի գրում, հասկանում էի, չէի հասկանում՝ այդ միևնոյն էր. առանց կարմրելու կրկնում էի այն, ինչ լսում էի. ով որ տաղանդաւոր էր ճանաչուած, նրան էլ ես տաղանդաւոր էի համարում։ Բայց այժմ մեծացել եմ, աչքերս բացուել են. պէտք է ամեն մէկին իր տեղը տալ։ Նայիր մեր շուրջը, ովքեր են առաջ անցել. նրանք, որոնք գտել են յաջողութեան կարճ ճանապարհը։ Այժմ ես անխնայ կը ջախջախեմ այն ամենը, ինչ արհեստական միջոցով է բարձրացել. պէտք է մաքրել մեր կեանքը այդ ռէկլամի հերոսներից. պէտք է մի քիչ թարմացնել ճահիճը։

ՈՒՌԵԿԼ.—Արդեօք չափազանց ծանր բեռ չե՞ս առնում ուսերիդ։ Տես, որ կէս ճանապարհին չմնաս։

ՇԱՀ.—Իմ ընկած տեղից կը գտնւի մի ուրիշը, որ կը շարունակի առաջ տանել այդ բեռը...

ՈՒՌԵԿԼ.—Թողնենք այս խօսակցութիւնը։ Մենք սկսել ենք իրար չհասկանալ։ (Մօտենում է պատուհանին)։ Արտասահմանն էլ քեզ մարդ չդարձրեց, միշտ նոյն ֆանտազիաները, միշտ նոյն ոգևորուողը... (Նայում է պատուհանից դուրս)։

ՇԱՀ.—(Մի քիչ լռութիւնից յետոյ) Քեզ մօտ մարդ է գալու։

ՈՒՌԵԿԼ.—Այո։

ՇԱՀ.—Մի բաժակ սուրճ տուր և ես կերթամ, իսկ եթէ շուտ գայ, սուրճ էլ չեմ խմի։

ՈՒՌԵԿԼ.—Դու մեզ չես խանգարի։

ՇԱՀ.—Ով գիտէ։ Թերևս աւելորդ լինեմ։

ՈՒՌԵԿԼ.—(Անցնում է խողքը, բենզին է լցնում բենզինկայի մէջ, վառում է ու սրճամանը դնում կրակի վրայ։ Զանգ)։

ՇԱՀ.—Նա է։

ՈՒՌԵԿԼ.—Երևի։

ՇԱՀ.—Ինչպէս երևում է ստիպուած կը լինեմ կաֆէ գնալ։

ՈՒՌԵԿԼ.—Ցիմարութիւն...

ԼԻԶԱ.—(Դուռը քաղխում է) Կարելի՞ է։

ՈՒՌԵԿԼ.—Ի հարկէ։ (Մի քանի քայլ ընդառաջ)։

ԼԻԶԱ.—(25-ի մօտ։ Գնդցիկ, նիհար. լաւ կազմուածքով։ Հագնուած է մեծ ճաշակով։ Լայնեզր գլխարկ)։ Ես երևի ձեզ խանգարեցի... Բարև։

ՇԱՀ.—Մենք սկսել էինք ձանձրանալ, սպասում եմ մի բաժակ սուրճի ու պիտի գնամ։

ԼԻԶԱ.— Շուտով այստեղ է գալու Լուսիկը։

ՇԱՀ.—Օ... Այդ դէպքում ինձ թոյլ տուեք սպասել նրան այստեղ...

ԼԻԶԱ.—Բայց ո՞վ է ձեզ դուրս անում այստեղից։

ՇԱՀ.—Մի՞թէ կարիք կայ, որ ասեն՝ «Դուռ այստեղ աւելորդ ես». այդ ամեն մարդ ինքը պէտք է հասկանայ։

ԼԻԶԱ.—(Կատակով սպառնում է մատով)։ Պարոն Շահումեան։ (Դառնալով Ռոեկվեանին)։ Ես եկել եմ ձեզ մի լաւ յանդիմանելու։

ՈՒՌԵԿԼ.—(Ժպտալով) Սկսենք։

ԼԻԶԱ.—Ես կատակ չեմ անում։

ՈՒՌԵԿԼ.—Օ՜, ես գիտեմ, որ դուք կատակներ չէք սիրում։ (Մօտեցել է եւ օգնում է նրան վերարկուն հանելու։ Կամաց) Ես վախենում էի, որ դուք իսկապէս կը կատարէք ձեր խօսքը...

ԼԻԶԱ.—Եւ չեմ գա՞յ... Ես դեռ կարծեմ սիրում եմ ձեզ։

ՈՒՌԵԿԼ.—Դեռ...

ԼԻԶԱ.—Ինչո՞ւ երէկ չեկաք։

ՈՒՌԵԿԼ.—Դուք առանց ինձ էլ բաւականաչափ երես էք տալիս այդ պարոնին։ Շահումեանը գտնում է, որ նա միակ տաղանդաւոր մարդն է մեր գրականութեան մէջ։

ՇԱՀ.—Ես այդպիսի բան չեմ ասել։ Բայց որ տաղանդաւոր է, ասել եմ։

ԼԻԶԱ.—Ճշմարիտ չէ՞... Ա՜յ, երեկ ես կարդացի նրա մի պատմուածքը. մի փոքրիկ բան է, բայց ինչքան շատ բան է կարողացել ասել։ Հերոսը մի երիտասարդ է. բոլոր տեսակները կան տաղանդաւոր լինելու, բայց նա չի հաշտւում ոչ կեանքի հետ, ոչ ինքն իր հետ։ Միջավայրը նրան սառուցեալ նեղ է թւում. նա ուզում է կամ բոլորը, կամ ոչինչ, և որովհետև համոզուած է, որ այդ միջավայրը նրան չի թողնի հասնելու գագաթնակէտին, աւելի լաւ է համարում մեռնել և սպանում է իրեն, որ կարողանայ հպարտ մեռնել, որ ստիպուած չլինի ցածանալ մինչև այդ շրջապատը, որտեղ միջակութիւնից այն կողմ ոչ ոք չի անցել։

ՈՒՌԵԿԼ.—(Սեղանի վրայից վերցնում է ծեռագիրը) Ահա այդ տաղանդաւոր մարդու մի ուրիշ գործը. Շահումեանը հիա-

ցած է։ Նա գտնում է, որ ինչ մինչև այժմ լոյս են տեսել, յիմար և անշնորհք բաներ են։ Մենք քիչ առաջ նրա մասին էինք խօսում։

ԼԻԶԱ.—Շատ հետաքրքրական մարդ է. դու անպատճառ պէտք է ծանօթանաս նրա հետ։

ՈՒՌԵԿԼ.—Յոյս ունեմ դեռ այստեղ է և ոչ մի տեղ չի գնում այդ շատ հետաքրքրական մարդը. չենք ուշանայ։

ՇԱՀ.—(Մի գիրք էր թերթում. թողնում է գիրքը) Ձեր սուրճն էլ ուշացաւ, նա էլ. ես գնացի։

ԼԻԶԱ.—Նա ուր որ է, կը գայ։

ՈՒՌԵԿԼ.—Ջուրն իսկոյն կեռայ։ (Մօտենում է խորքի սեղանին)։

ՇԱՀ.—Երբ նա գայ, ասացէք, որ սպասեցի, սպասեցի և գնացի։ Նա ինձանից վերցրել է Մարքսի «Կապիտալը», թող անպատճառ այսօր բերի. հարկաւոր է։

ԼԻԶԱ.—Կարծեմ դա շատ հին պատմութիւն է։

ՇԱՀ.—Այո, վաղուց է, երէկ էլ յիշեցրի։

ԼԻԶԱ.—Բայց սպասիր, նրա ձեռքին կարծեմ մի շատ հաստ գիրք կար։

ՈՒՌԵԿԼ.—Զարմանում եմ. ախր ինչ կնոջ կարդալու բան է. Մարքս ու կին։ Այդ յիմար թէօրիաները հազիւ թէ մտնեն Լիւսիի փոքրիկ, սիրուն գլուխը։

ԼԻԶԱ.—Այո, ինչպէս կարող ենք հասկանալ։

ՈՒՌ.—Դուք բարկացաք։

ԼԻԶԱ.—Ամենևին։

ՈՒՌ.—Այո, մի քիչ... խոստովանեցէք։ Ես սիրում եմ, երբ դուք բարկանում էք։

ԼԻԶԱ.—Եւ միշտ աշխատում էք բարկացնել։

ՈՒՌ.—Ոչ, երբեմն... (Զանգ)։

ԼԻԶԱ. Նա է... Օ՜յ, ջուրը եռում է. հանգցնեմ։ (Հանգցնում է)։

ԼՈՒՍԻԿ.—(Դրան ետեւից) Կարելի՞ է։

ՈՒՌ.—Ի հարկէ։

ԼԻԶԱ.—Մտիր, մտիր։ Այստեղ քեզ անհամբեր սպասում են։

ԼՈՒՍԻԿ.—Ուրախ, աշխոյժ, վարդագոյն այտերով ու փայլուն աչքերով. մօտ 22 տարեկան, հագնուած է ճաշակով։ Բարև։ Օհօ... Դուք էլ այստեղ էք։

ԼՈՒՍԻԿ.—Առէք ձեր գիրքը. հոգիս դուրս եկաւ մինչև տեղ հասցրի։

ՇԱՀ. Ի հարկէ՝ չկարդացած։

ԼՈՒՍԻԿ. - Այդ ինչո՞ւ։

ԼԻԶԱ.—Սա էր բամբասում, որ դու ի հարկէ չես էլ մտածում կարդալ, որ այդ յիմար թէօրիաները քո սիրուն գլուխը չի մտնի և աւելացնում էր, թէ առհասարակ ինչ կնոջ կարդալու բան է։ Մարքս՝ ու կին...

ԼՈՒՍԻԿ.—Այո, նա գտնում է, որ կինը ինչքան յիմար է, այնքան աւելի գրաւիչ է։

ՈՒՌ.—Հա՜, հա՜, հա՜... Օրիորդները ինձանից լուրջ նեղացել են։ Բայց դուք միք աղաւաղի իմ՝ ասածի իմաստը։ Ես ասում եմ՝ «Կինը պիտի մնայ կին, այն ինկօգնիտօն, որ մենք...»

ԼՈՒՍԻԿ.—Լսել ենք, հազար անգամ լսել ենք. անցեալ օրն էլ Սաֆարեանի հետ էինք վիճում։ Աւելի լաւ է սուրճ տուէք... Կա՜յ... (Մօտենում է խորքի սեղանին)։

ՈՒՌ.—Իսկապէս, բոլորովին մոռացանք։

ԼՈՒՍԻԿ.— Դուք էլ չէ՞ք խմել։

ՇԱՀ.—Դեռ ոչ. ես մի քիչ էլ կը մնամ և մի բաժակ սուրճ կը խմեմ։

ԼՈՒՍԻԿ.— Դուք ուզո՞ւմ էիք դնալ։

ՇԱՀ.—Այո, բայց դուք եկաք և ես մնում եմ։

ԼՈՒՍԻԿ.—Խնդրեմ առանց հաճոյախօսութիւնների. այդ ձեզ չի սազում։ Նստեցէք. ես ձեզ բոլորիդ համար էլ կը լցնեմ։ Այս ի՞նչ է, դեռ սուրճ էլ չի գցած։ (Նորից վառում է եւ սկսում սուրճ պատրաստել) Ամբողջ ճանապարհը գալիս էի և չէի կարողանում ծիծաղս զսպել։ Աղջիկները երևի յիմար կը կարծէին։

ԼԻԶԱ.—Ի՞նչ է պատահել։

ՈՒՌ.—Երևի մի նոր հաճոյախօսութիւն է լսել մի երիտասարդ պարոնից՝ վարդագոյն այտերի կամ աչքերի մասին։ Մենք լսում ենք։

ԼՈՒՍԻԿ.—(Ձեռքով բացասական նշան է անում)։ Ոչ, ոչ, ոչ... Երևակայեցէք գալիս եմ, գլուխս կախ, ինքս էլ չգիտեմ ինչ եմ մտածում. յանկարծ փողոցի անկիւնում առաջս է դուրս գալիս մի երկու ձի լծած օտօմոբիլ... (ծիծաղում է)։

ՇԱՀ.—Լաւ, ի՞նչ թուլանալու բան կայ, երևի կոտրուել է, մի

տեղը փնասել է և այդպէս են տանում... Թէև իսկապէս որ ծիծաղելի է։

ԼՈՒՈՒԿ.—Դուք պէտք է տեսնէիք։ Բոլորը կանգնել և ծիծաղում էին քսաներորդ դարու այդ մեծ հրաշքի վրայ... Այո, հեշտ է այդպէս արագ եզրափակել՝ կոտրուել է, փչացել է և տանում են ձիերով... Բայց ծիծաղելի է, երբ աչքով տեսնում ես... (Զանգ) Հա՜, ո՞վ կարող է լինել։

ՈՒՌ.—Ո՞վ կարող է լինել. երևի էլի մի գրող է, որ իր դրաման է բերել. հիմա մոդա է. բոլորն էլ դրամաներ են գրում։ Զանձրացրին. շուտով. կարծեմ, կը փախչեմ քաղաքից։

ԼՈՒՈ.—Ձեր օրինակը վարակիչ է... Օ՜, դժուար է մեծ մարդ լինել. ամեն մէկը ցանկանում է իմանալ՝ ինչ կասէ Ուռեկլեանը... Պէտք է ներողամիտ լինել։

ՈՒՌ.—Խնդրում եմ առանց իրոնիայի։ (Մտնում է աղախինը)։

ԱՂԱԽԻՆ.—Մի պարոն ցանկանում է ձեզ տեսնել։

ՈՒՌ.—Ո՞վ է։

ԱՂԱԽԻՆ.—Չգիտեմ. ես նրան երբէք չեմ տեսել։

ՈՒՌ.—Խնդրեցէք։ (Աղախինը գնում է. մի քիչ անց մտնում է Սարումեանը)։

ՍԱՐՈՒՄԵԱՆ—(Մօտ 37 տարեկան, հագնուած է հասարակ։ Գունատ, նեարդային շարժումներով, թախծոտ աչքերով։ Դռներում) Ներէցէք... Կարո՞ղ եմ տեսնել պարոն Ուռեկլեանին։

ՈՒՌ.—Խնդրեմ։

ԼԻԶԴ.—Պարոն Սարումեան... (Մօտենում է)։ Որքան ուրախ եմ. սա ինչ զուգադիպութիւն է... Դուք ծանօթ չէ՞ք. Գէորգ, ծանօթացիր. պարոն Սարումեան, Ուռեկլեան։

ՍԱՐՈՒՄ.—(Ձեռք է տալիս Ուռեկլեանին, Շահումեանին եւ գլխով հեռից Լուսիկին)։

ԼԻԶԴ. (Ներկայացնելով) Օրիորդ Բարսամեան։

ՍԱՐ.—(Մի քանի քայլ դէպի Լուսիկը)։

ԼՈՒՍ.—Ներեցէք. ես սուրճ եմ պատրաստում և ձեռքերս ապատ չեն... Շատ ուրախ եմ. ես ձեր մասին այնքան շատ եմ լսել...

ՍԱՐ.—Յուսով եմ, բոլորն էլ անհնազանդ չեն։

ԼՈՒՍ.—Ընդհակառակը, մեծ մասը հնազանդաւոր։

ՍԱՐ.— Զափազանց ներողամիտ մարդիկ են ձեզ իմ մասին պատմողները։ (Դառնալով Ուռեկլեանին)։ Ես եկել եմ ձեզ մօտ մի փոքրիկ գործով։

ՈՒՌ.—(Ամօթ է առաջարկում)։ Խնդրեմ, ինչով կարող եմ օգտակար լինել։

ՇԱՀ.—Մենք չե՞նք խանգարի։

ՍԱՐ.—Ոչ, ոչ, գաղտնիքներ չեն, որ պիտի ասեմ պարոն Ուռեկլեանին։

ԼԻԶԱ.—Պարոն Սարումեան, մինչ դուք կը սկսէք գործի մասին, ասացէք ինձ որտեղ ենք մենք հանդիպել. ձեր դէմքը այնքան ծանօթ է թւում։

ՍԱՐ.—Մենք ծանօթ ենք եղել սրանից երեք տարի առաջ... Դուք ինձ ի հարկէ մոռացել էք, իսկ ես մի րոպէ անգամ չեմ դադարել ձեզ յիշել։

ԼՈՒՍ.—Դա արդէն սիրոյ խոստովանութիւն է, պարոն Սարումեան։

ՍԱՐ.—Թէկուզ...

ԼԻԶԱ.—Ո՞րտեղ։

ՍԱՐ.—Ամարանոցում. այն ժամանակ ես խենթի պէս սիրահարուած էի... Ես պատրաստ էի ձեր մի քմահաճոյքի համար մեռնել, բայց դուք այդ չէիք էլ նկատում։ Ես ընդհանրապէս գոյութիւն չունէի ձեզ համար։ Ես այդ նկատում էի, գիտէի և լռում էի։ Իսկ այժմ այդ բոլորը անցել են և առանց կարմրելու այսքան մարդու մօտ խոստովանւում եմ։

ԼՈՒՍ.—Դուք էլ սիրահարուած էք եղել Լիզայի վրայ, հա, հա, հա։

ՍԱՐ.—Այո, բայց ինչու էք ծիծաղում։

ԼՈՒՍ.—Երջանիկ մարդ է Լիզան. բոլորը սիրահարւում են նրա վրայ. մէկը մինչև անգամ իրեն թունաւորեց, բայց չմեռաւ։

ԼԻԶԱ.— Լուսիկ...

ԼՈՒՍ.—Ի՞նչ, սուտ է... Իսկ ինձ ոչ ոք չի սիրում, մենակ սա է (ցոյց է տալիս Շահումեանին) մի քիչ սիրահարուած, դրան էլ ես չեմ հաւատում։ Արտասահմանում ով գիտէ քանիսին է գլխից հանել. մի մարդ, որ վեց լեզուով գիտէ խաբել, ինչ կարելի է սպասել նրանից։

ՇԱՀ.—Ուղիղ 12-ը։

ԼՈՒՍ.—Իսկ ինձ հրէական դիւժինը լրացնելու համար է սիրում։ Դա ինչ սէր է. այնպէս չէ՞ պարոն Սարումեան... Երեք գդալ բաւական է... Դէ լաւ, սա էլ թող աւել լինի (Մի գդալ սուրճ էլ է գցում)։

ՈՒՌ.—(Ժպտալով)։ Պարոն Սարումեան, ինչո՞վ կարող եմ օգտակար լինել... Դուք երևի եկել էք ձեր պիէսի՞ համար։

ՍԱՐ.—Ես մտայ գրասենեակ, այնտեղ ինձ ասացին, որ ձեզ մօտ են գտնուում պիէսները, որոնք ներկայացուած են ժիւրիին։

ՈՒՌ.—Այո, ինձ մօտ են։

ՍԱՐ.—Կարո՞ղ եմ ետ ստանալ իմը։

ՈՒՌ.—Ի հարկէ։ Գիտէք պարոն Սարումեան, իմ կարծիքը ձեր գրուածքի մասին դրական էր, բայց...

ՍԱՐ.—(Ընդհատելով)։ Խնդրեմ, խնդրեմ, ինձ այդ բոլորովին հարկաւոր չէ գիտենալ, չէ՞ որ դա ձեր ժիւրիի գաղտնիքն է. ինչի՞ս է պէտք, թէ ինչ էք մտածում դուք կամ մի ուրիշը։ Իմ գրուածքը հաւանութիւն չի գիտել, խնդրում եմ վերադարձնել։

ՈՒՌ.—(Զոր)։ Խնդրեմ։ (Տալիս է ձեռագիրը)։

ՇԱՀ.—Պարոն Սարումեան, գուցէ ձեզ համար անախորժ է, որ առանց ձեր թոյլտուութեան կարդացի ձեր գրուածքը... Բայց ներեցէք անկեղծութեանս, դուք դեռ շատ միամիտ էք։ Ժիւրիի մէջ ոչ մի բարեկամ չունիք և յանկարծ մրցանակի էք ներկայացնում ձեր գրուածքը...

ՍԱՐ.—Դուք սխալուում էք։ Ես այնքան էլ միամիտ չեմ. բայց ծայրայեղ փողի կարիք ունէի, իսկ այդպիսի դէպքերում մարդ մի քիչ յիմարանում է։ Ես միշտ արհամարհել եմ գանազան ժիւրիների կարծիքը և յանկարծ գրուածքս տալիս եմ գնահատութեան. սոսկալի հակասութիւն է, և ինձ ներել չեմ կարողանում։ (Դնում է ձեռագիրը ծոցի գրպանը)։ Ներեցէք, ես ձեզ անհանգստացրի։ (Ուզում է գնալ)։

ԼՈՒՍ.—Ես ձեզ համար սուրճ եմ պատրաստում։

ՍԱՐ.—Ոչ, շնորհակալ եմ. ես պէտք է գնամ։ (Դլխով լուռ բարևում է ու գնում)։

ԼՈՒՍ.—Ի՞նչ տարօրինակ մարդ է։

ՈՒՌ.—Մեծամիտ ու անկիրթ... Բայց չարժէ խօսել... Օր. Լուսիկ, սուրճ լցրէք։

ԼՈՒՍ.—Շաքարը շատ։

ՈՒՌ.—Բերէք, ով որքան կուզենայ՝ ինքը կը գցի։ (Մի պահ լռութիւն)։

ՈՒՌ.—Տէր Աստուած, ինչ յանդուգն են դարձել մարդիկ. գոնէ մի քիչ համեստութիւն. ինչ են իրենց երևակայում։

ՇԱՀ.—Թող։ Օր. Լուսիկ, ինչ եղաւ։

ԼՈՒՍ.—(Բերում է երկու գաւաթ, մէկը Ուռեկլեանին, միւսը Շահումեանին)։

ՈՒՌ.—Իսկ օր. Լիզային։

ԼՈՒՍ.—Մի վախենաք, նրան էլ կը հասնի։

ՇԱՀ.—(Խառնելով սուրճը) Դուք հրաշալի տանտիկին կը լինէք։

ԼՈՒՍ.—Այո, մայրս էլ նոյն կարծիքին է, բայց արդէն պառաւել եմ, իսկ ոչ ոք չի ուզում ինձ հետ ամուսնանալ։ Երևի կարծում են, որ շատ եմ թեթևսոլիկ և հաւատարիմ չեմ լինի, բայց հաւատացնում եմ՝ ես շատ կը սիրեմ իմ ապագայ ամուսնուն։ (Բերում է էլի երկու բաժակ Լիզայի և իրեն համար)։

ՈՒՌ.—(Նեարդային է, բայց աշխատում է զսպել եւ բռնազբօսիկ կերպով ծիծաղում է)։

ԼԻԶԱ.—Նորից սկսեց յիմարութիւնները դուրս տալ։ Ինչ որ անհասկանալի բան կայ այդ Սարումեանի մէջ...

ՇԱՀ.—Թողէք, տեսնում էք որ այդ նիւթը Ուռեկլեանի նեարդերին է դիպչում։

ՈՒՌ.—(Նեարդային)։ Շահումեան, գիտես որ կատակդ անտեղի է և յիմար։

ՇԱՀ.—Ես կատակ չեմ անում։ Մի ինչ-որ Սարումեան յանդգնում է ձեզ վրայ արհամարհանքով նայել, չընդունել ձեր հեղինակութիւնը։ Չէ՞ որ դուք սովոր էք, որ ձեզ շրջապատողների համար ձեր խօսքը սրբութիւն սրբոց լինի... Չէ՞ որ դուք կարող էք մի հարուածով ոչնչացնել նրանց, որոնք գլուխները բարձր են պահում... Լաւ, լաւ, մի նեարդայնանալ. ես վերջացրի ու գնում եմ։ (Խմում է վերջին ումպը եւ ոտի ելնում)։ Դուք, օր. Լուսիկ, կը ճնա՞ք, ես ուրախութեամբ մի պտոյտ կանէի ձեզ հետ։

ԼՈՒՍ.—Սպասեցէք տուրճս վերջացնեմ։

ՇԱՀ.—Լաւ։ Միայն շուտ, ոչ այդպիսի փոքրիկ ումպերով, այլ միանգամից. տեսնեմ ես ինչ արագ վերջացրի։

ԼՈՒՍ.—(Սկսում է աւելի արագ խմել) Դէհ, ես վերջացրի։ (Դնում է երկու դատարկ գաւաթները խորքի սեղանի վրայ եւ հագնում վերարկուն)։ Գնանք։

ՇԱՀ.—Յաջողութիւն։

ԼՈՒՍ.—Յաջողութիւն։

ՈՒՌ.—Յաջողութիւն։ (Դնում են)։

(Սրանց գնալուց յետոյ Լիզան անցել է պատուհանի մօտ եւ աննպատակ դուրս է նայում։ Պաուզա)։

ՈՒՌ.—(Մօտենում է նրան, բռնում է ձեռքը եւ լուռ համբուրում)։

ԼԻԶԱ.—(Անտարբեր կանգնած է)։

ՈՒՌ.—Լիզա, քեզ ի՞նչ է պատահել։

ԼԻԶԱ.—Ի՞նձ. ոչինչ։

ՈՒՌ.—Դու քիչ առաջ ասացիր, որ դեռ սիրում ես. ասա, մի՞թէ կը գայ ժամանակ, երբ կը դադարես։

ԼԻԶԱ.—Զգիտեմ, ինձ այս բոպէիս էլ թւում է, որ եկել է այդ ժամանակը... որ մեր սէրը մի ինքնախաբէութիւն է եղել։

ՈՒՌ.—Լիզա, լուիր, մի խօսիր այդպէս։

ԼԻԶԱ.—Մի՞թէ սա սէ՞ր է։ Սէրը կեանքի ոյժն է, որ երկու սիրող էակների առաջ է մղում, այն խթանը, որ հարթել է տալիս բոլոր խոչընդոտները... Գէորգ, ինձ թւում է, որ ես այլ ևս չեմ սիրում։

ՈՒՌ.—Լիզա...

ԼԻԶԱ.—Գէորգ, ես այլ ևս չեմ ուզում խաբել ոչ ինքս ինձ, ոչ քեզ։ Ես քեզ երբէք չեմ սիրել։

ՈՒՌ.—(Գունատ, մի քայլ ետ է գնում, բայց ինքն իրեն զսպելով, ժպտում է), Իսկ ես քեզ միշտ սիրել եմ և կը սիրեմ մինչև կեանքիս վերջը։ (Սեղմում է ձեռքը շրթունքներին։ Պաուզա)։

ԼԻԶԱ.—(Ընդհատելով լռութիւնը)։ Լսիր Գէորգ, դու թոյլ կը տա՞ս, որ խղճալով սիրեմ քեզ։

ՈՒՌ.—Ոչ։

ԼԻԶԱ.—Ի՞նչ կանէիր, եթէ ես ասէի համաձայն եմ, որովհետև խօսք եմ տուել, խղճում եմ։ Դու կընդունե՞ս այդ ողորմութիւնը։

ՈՒՌ.—Ես անկարող եմ ապրել առանց քեզ։

ԼԻԶԱ.—Դու կը վերցնե՞ս այդ շպրտած ողորմութիւնը։ Դու թոյլ կը տա՞ս, որ խղճալով սիրեմ քեզ... Ես կարհամարհեմ

այդպիսի սէրը, կատեմ այդ ժուրացկանութիւնը... Ես կարող եմ խղճալ նրանց, որոնց ատում, արհամարհում եմ, բայց խղճալով սիրել՝ ոչ, ես չեմ կարող։

ՈՒՌ.—Լիզա, ես քառասուն և հինգ տարեկան եմ. այդ սէրը իմ կեանքի օազիսն է, վերջին փայլուն կէտը, որ տեսնում եմ իմ կեանքի ճանապարհին, իմ հանգիստը։

ԼԻԶԱ.—Ամբողջ կեանքիս ընթացքում ես փնտրել եմ մէկին, որ մի քիչ բարձր կանգնած լինի միւսներից. ինձ երբեմն թւացել է, թէ ահա գտայ. բայց շատ չանցած՝ ես պարզ տեսել եմ, որ դա էլ նոյն խմորից է և նոյն շաբլոնները գլխում... Ես քեզ սիրեցի...

ՈՒՌ.—Իսկ այժմ, ինչպէս երևում է, իմ գարունն անցել է։

ԼԻԶԱ.—Ես միշտ փնտրել եմ մարդիկ, որոնց գարունը յետոյ պիտի գայ... Առաջ միշտ աշնան օրեր, յետոյ ձմեռ, իսկ վերջը՝ գարուն, և այդ գարունը անթառամ, միշտ հոտաւէտ։

ՈՒՌ.—Մեզ ետ տաղանդը մի որոշ սահման ունի. երբ անցաւ այդ կարճ ճանապարհը, կանգ է առնում, և էլ ոչ մի քայլ. սկսում է ապրել անցեալ փառքով։ Մեր միջավայրը չի կարող բարձր տաղանդներ ստեղծել։ Դժբախտաբար մի խեղճ, թշուառ, մի բուռը ժողովուրդ ենք, կուլտուրապէս չափազանց ետ մնացած։ Վերջ ի վերջոյ ամեն մէկը, որոշ տարիների հասնելուց յետոյ, ստիպւած է հաշուել միջակութեան հետ։

ԼԻԶԱ.—Ատում եմ քո այդ համոզւած տոնը... Դու խելօք ես, ամեն բան գիտես, բայց վերջ ի վերջոյ ձանձրալի են այդ համոզւած ու խելօք մարդիկ. մի ժողովուրդ, քանի դեռ շնչում է, կարող է տալ իր իսկական տաղանդները։

ՈՒՌ.—Բայց դու մոռանում ես, որ մենք ծերացած ազգ ենք և գնում ենք դէպի գերեզման։

ԼԻԶԱ.—Ոչ, ոչ, դա սուտ է։ Սա մի անցնող ժամանակ է. կը գայ մի աւելի լաւ, պայծառ շրջան. մի տաղանդ կարող է ցնցել, այս թմրութիւնը ալեկոծել և կեանքը կը սկսի նորից եռ գալ, մտքերը կը պարզւեն և այս զզւելի անտարբերութիւնն էլ կանցնի։ Ես հաւատում եմ Շահումեանին. գարունը մօտենում է. դուք այդ չէք նկատում։

ՈՒՌ.—Նա կատարեալ երեխայ է. յիմար չէ, բայց ամէն մի նորութիւնից խելքը թռցնում է, ինչպէս մի պճնասեր կին։

ԼԻԶԱ.—Նա հաւատում է իր ներքին ձայնին. ինչ թելադրում է այդ ձայնը, այն էլ ասում է։ Ես գնահատում եմ նրա այդ ոգևորութիւնը, այդ անկեղծութիւնը։

ՈՒՌ.—Բայց երբ պէտք է աւելի մնայուն ժամքեր յայտնի. այսօր այս է դուրս տալիս, վաղը մի ուրիշ բան. հօ չի՞ կարելի օրը տասը դաւանանք փոխել։

ԼԻԶԱ.—Այսինքն կանգ առնել, էլ առաջ չգնալ։ Ինձ թըւում է, որ այդպէս համոզուած մարդիկ ձանձրալի են, չկան որոնումներ։ Շահումեանը դրանցից չէ. նա շարունակ որոնումների մէջ է և բնականաբար նրա հայեացքներն էլ ենթարկւում են փոփոխութիւնների։

ՈՒՌ.—Նայած քամին որ կողմից է փչում։

ԼԻԶԱ.—Ո՛չ, նա երբէք չի հետևել քամու ընթացքին. նա ազնիւ է և անկեղծ։

ՈՒՌ.—Դժուար է մարդկանց ճանաչել... Լիզա, կեանքի վրայ պէտք է նայել, ինչպէս որ նա կայ։ Մենք բոլորս էլ սովորական մահկանացուներ ենք... Ես վաղուց եմ փշրել իմ վարդագոյն ակնոցները և այժմ կեանքը մերկ կանգնած է իմ առաջ... Սիրենք իրար և այդ սիրոյ մէջ փնտրենք մեր երջանկութիւնը, մեր հանգիստը։

ԼԻԶԱ.—Դու աւելի ես փոքրանում իմ աչքում քո այդ անդրդուելի համոզմունքներով... Երբէք կանգ մի առնիլ, միշտ վեր... Դէպի բարձունքները... Հաւատա...

ՈՒՌ.—Առանց քեզ կտրուած են իմ թևերը։

ԼԻԶԱ.—Միշտ ուրիշների օգնութեամբ։ Մենակ թռիր։

ՈՒՌ.—Միասին, միշտ միասին. ես սիրում, պաշտում եմ քեզ, սիրում եմ...

ԼԻԶԱ.—(Անթարթ նայում է տարածութեան մէջ) Առանց ուրիշների օգնութեան, մենակ, մենակ թռիր...

ՎԱՐԱԳՈՒՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ Բ.

Մարումեանի սենեակը. սիր պատուհանով, երկու դուռ՝ ճակատին և ձախից։ Պատի տակ մահճակալ, պատուհանի մօտ հասարակ սեղան, որը գրասեղանի տեղ է ծառայում։ Մահճակալից քիչ հեռու, պատի տակ, չեմոդան, երեք սթոռ, պատից կախուած է լուցարան։ Պարզ օր է, բայց սենեակում ղգացւում է լոյսի պակասութիւն։ Պատուհանի դէմ

բարձրանում է հարևան բարձր պատը, որը և խանգարում է լոյս ի ներս թափանցելուն։

Վարագույրը բացելիս Շահուժեանը նստած է սեղանի մօտ. Սարուսմեանը սեղանի միւս կողմը, ձեռքերը ծնկների վրայ, գլուխը կախ՝ ծխում է։

ՇԱՀ.—(Շարունակում է ընդհատուած խօսակցութիւնը) Երջանկութիւնը տափակութիւնների բաժինն է. մեծութիւնը միշտ ապրել է մենակութեան և տանջանքների մէջ։

ՍԱՐ.— Ես նախանձում եմ նրանց, ինչ անուն էլ որ տալու լինես։ Կեանքում ապրելու և երջանիկ լինելու համար ուրիշ տեսակի մարդ պէտք էր ծնուել։

ՇԱՀ.—Այսինքն կարողանալ բոլորին ժպտալ, խմբագրութիւնից խմբագրութիւն վազվզել։

ՍԱՐ.—Եւ այդ, և ուրիշ շատ բան։ Յաջողութիւնն էլ ունի իր գաղտնիքը։ Եթէ յոյսդ դնես քո ընդունակութիւնների վրայ, այն ժամանակ պէտք է տասնեակ տարիներ ապրես, երիտասարդ՝ ամենալաւ տարիներդ մաշես զրկանքների մէջ, մինչև մարդիկ կը տեսնեն։

ՇԱՀ.—Վերջ ի վերջոյ կը տեսնեն, չեն կարող չտեսնել։

ՍԱՐ.—Բայց արդէն ճերմակած կը լինես։ Ամեն բան լաւ է իր ժամանակին։ Իմ կեանքս անցել է անգոյն, զրկանքների մէջ, շարունակ մտածել եմ՝ մի կտոր հացի համար։ Գրականութիւնը ինձ համար եղել է երկրորդական բան. հաց պէտք էր աշխատել, և ես քարշ եմ տուել իմ կեանքը, իսկ այժմ ձանձրացել եմ, յոգնել. յոգնել եմ դեռ կեանքից բան չհասկացած։ Ես այժմ ոչինչ չեմ կարողանում անել. կեանքը բթացրեց, շրջապատը բթացրեց ինձ, իսկ այժմ ուրիշ ոչինչ չի ՏՏում, բացի... Ես ձանձրացել եմ մի կտոր հացի համար ապրելուց, իսկ առանց հացի ոչինչ չի ստեղծուում։ Ես արհամարհում եմ Ուռեկլեանի նմաններին, բայց նախանձում եմ։

ՇԱՀ.—Նա կը մեռնի՝ երբ կը չորանայ նրան անունդ տուող ծառը. պարագիտները արմատներ չեն ձգում։ Ինչ ողորմելի կեանք է. ապրել ուրիշների անունդով և մեռնել, երբ մեռնի այդ ուրիշը։

ՍԱՐ.—Բայց տեսել ես այդ պարագիտներին, որոնք իրենց

փոքրիկ ատաճեերով մեխուում են մի ծառից, ինչպէս թարմ են ու կայտառ։ Ինչ անենք, որ յետոյ, երբ կը չորանայ ծառը, նրանք էլ կը մեռնեն։ Գոնէ ունեն իրենց լաւ շրջանը։ Դա աւելի լաւ է, քան ամբողջ կեանքում երբէք չժպտալ, չունենալ մի պայծառ յիշողութիւն։

ՇԱՀ.— Անմիտ բաներ մի ասի։ Եթէ կեանքը մինչև հիմա խորթ մայր է եղել ձեզ համար, այժմ նա ժպտում է ձեզ... Ես արհամարհում եմ այն մարդուն, որը չի կարող համարձակ նայել կեանքի ճակատին, արհամարհել նրա բոլոր խոչընդոտները և յաղթող դուրս գալ կռուից. փոքրոգութիւն է յուսահատուել և ցած դնել զէնքերը։ Յիշեցէք բոլոր հսկաներին իրենց տանջանքներով։ Տանջանքների մէջ մեծացան և կանգնեցրին իրենց արձանը։ Տաղանդի առաջ ամեն բան խոնարհել է։ Տաղանդը Աստծոյ օրհնութիւնն է։

ՍԱՐ.— Կեանքը մի մեծ սարդ է, որ երկրագնդի ամեն մի անկիւնում հիւսել է իր ոստայնը և սպասում է որսի. վայ նրան, ով խճճուեց այդ ցանցի մէջ։ Ինչպէս սարդը ծծում է իր ցանցն ընկած թշուառ միջատին, ես էլ ընկել եմ կեանքի ոստայնը և կը թփրտամ, մինչև վերջին կաթիլ արիւնը դուրս կը գայ երակներից և կոչնչանամ. ինձ հետ կոչնչանայ և իմ տաղանդը... (*Բարձրանում եւ մօտենում է պատուհանին. մի քանի վայրկեան գլուխը ձեռքերի մէջ, յենուած է պատուհանի փեղկին*)։

ՇԱՀ.— Դէհ, ամօթ է. չպէտք է այդքան փոքրոգի լինել. պէտք է արհամարհել կեանքի բոլոր այդ փոքրիկ յաջողութեամբ շփացած մարդկանց. պէտք է կռուել, պէտք է նայել կեանքի վրայ համարձակ, ուղիղ նրա աչքերին և ոչ թէ նախանձել միջակ մարդկանց փոքրիկ յաջողութիւններին...

ՍԱՐ.— Ես տաղանդով միշտ էլ բարձր եմ եղել Ուռեկլեանից էլ, շատ-շատերից էլ, բայց կեանքը միշտ շոյել է նրանց, իսկ ինձանից երես դարձրել։ Իմ հպարտութիւնը թոյլ չէր տալիս անել այն, ինչ նրանք էին անում... Գուցէ ես մեծամիտ եմ, գոռոզ... Ես աւելի շուտ կը մեռցնեմ իմ մէջ ամեն ինչ, քան կը բարձրանամ այն ճանապարհով։ Արհամարհանքով երես կը դարձնէի ինքս ինձանից, եթէ հոգուս խորքում զգայի, որ ինձ ուզում են։ Ես չէի ցանկանայ, որ ծափահարեն, իսկ հոգուս խորքում գիտակցէի, որ բոլորը սուտ են, կամ Տարասկոնցի Տարտարէնի պէս ինքս էլ հաւատայի տարածուած սուտին։ Կը գայ

մի օր. չէ՞ որ վերջ է վերջոյ դու պիտի զգաս քո հոգու դատարկը։ Աւելի լաւ է անյայտութեան մէջ սատկել, ինչպէս մի ապուն, քան մի օր զգալ, որ ոչ թէ ընդունակութիւններիդ, այլ բարեկամներիդ ես պարտական։

ՇԱՀ.—Այո, մեր հասարակութիւնը ոչ խելք ունի, ոչ ճաշակ. նա դեռ չգիտէ սևը սպիտակից զանազանել։ Նրան շատ բան պէտք է հասկացնել, պէտք է կուռել, տոկալ. եթէ չեն հասկանում՝ կը հասկանան։

ՍԱՐ.—Կեանքը իր երկաթէ ճանկերով սղմում է։ Որ ես խոնարհեմ գլուխս, ցածանամ, գիտեմ այն ժամանակ կը շատանան իմ բարեկամները... Ոչ, թող նա ինձ ճմլի իր երկաթէ ճանկերում, թող ես ոչնչանամ, բայց չեմ թեքի գլուխս... Ինձ շատ տաղտկալի է թւում այս կեանքը։ Եթէ հնարաւոր լինի հաւաքել բոլորը, ինչ գրել եմ մինչև այժմ, մինչև վերջին օրինակը, որ ինձնից յետոյ ոչ ոք չյիշէր և իմ անունը... Ես ատում եմ մարդկանց, բոլորին, ամեն ինչ... Ես ինձ վաղուց սպանած կը լինէի, բայց ամաչում եմ ինքս ինձանից... Մեռնել արհամարհուած, ոչ ոքից չճանաչուած, այդ ինձ սարսափելի էր թւում. ես վախենում էի, որ խղճան ինձ... Ահա ինչն էր արգելում ձեռք բարձրացնել և մի հարուածով ոչնչացնել այս որդի կեանքը... Բայց այժմ ես հաստատակամ կանեմ այն, ինչ մինչև այսօր դժւարանում էի։ (Դուռը բաղխում են)։

ՍԱՐ.—Ո՞վ է... Մտէք։

ԼՈՒՍ.—(Դռներում, թեթեւ բարկութեամբ) Լսիր, դա արդէն անքաղաքավարութիւն է. կէս ժամից աւելի է, որ պատրաստ սպասում եմ... Բարև, պարոն Սարումեան։

ՍԱՐ.—(Լուռ գլխով բարեւում է)։

ՇԱՀ.—Ներեցէք, խօսքի բռնեցինք։

ԼՈՒՍ.—Ձեզ թողնեն խօսէք... Շան հացը կը կտրէք։

ՇԱՀ.—Օ՛յ, օ՛յ, օ՛յ. ինչ չարացած էք։

ԼՈՒՍ.—Դէհ, վեր կացէք։ (Դուռը բաղխում են)։

ՍԱՐ.—Ո՞վ է։

ԼԻԶԱ.—(Դռներում) Կարելի՞ է։

ԼՈՒՍ.—Օհ՛օ, Լիզա, այդ ո՞ւրտեղից դուրս պրծար։ Մտիր, ինչու՞ ես կանգնել։

ԼԻԶԱ.—(Առաջ գալով) Բարև ձեզ։ Ներեցէք պարոն Սարումեան, որ առանց ձեր թոյլտուութեան եկայ. դուք կարծեմ այնքան էլ չէք սիրում հիւրերը...

ՍԱՐ.—Խնդրեմ. ես շատ ուրախ եմ, բայց իմ սենեակը այնքան փոքրիկ է ու խեղճ, որ նա սովոր չէ ձեզ պէս հիւրերի։

ԼԻԶԱ.—Ուռեկլեանը խնդրեց ձեզ տալ... (Մեկնում է մի փոքրիկ ծրար)։

ՍԱՐ.—(Զարմացած) Ի՞նչ բան է։

ԼԻԶԱ.—Կարծեմ տոմսակ։

ՍԱՐ.—(Ընդունելով) Շնորհակալ եմ. նա չափազանց բարի է։

ԼԻԶԱ.—Բայց նա ուզեցել է ձեզ պատուել, պարոն Սարումեան։

ՍԱՐ.—Թէ՞ ողորմութիւն անել։ Եթէ ես ուզենամ՝ ինքս կարող եմ գնել։

ԼՈՒՍ.—Ինչ վատն էք պարոն Սարումեան. նա, իբրև արուեստակցի, իր նոր պիէսի ներկայացման տոմսակ է ուղարկում... Դա սիրալիրութիւն է նրա կողմից. դուք իրաւունք չունիք մերժելու։

ՍԱՐ.—(Մի քիչ լռութիւնից յետոյ) Լաւ, շնորհակալ եմ։

ԼԻԶԱ.— Ձեզ հետ շատ զգոյշ պէտք է լինել։ Ձեզ կարելի է վիրաւորել ակամայ, անգիտակցաբար։

ՍԱՐ.—Մանկութիւնից ես անհաշտ եմ, կոպիտ. ես չգիտեմ ձեր այդ նուրբ քաղաքավարական ձևերը։

ԼՈՒՍ.—Մենք ուշանում ենք։

ՇԱՀ.—Գնանք։ Դուք տանն էք լինելու։ Ես նորից կը գամ... Պէտք է տպարան մտնեմ։

ԼԻԶԱ.—(Սարումեանին) Ես ձեզ չե՞մ խանգարի։

ՍԱՐ.—Ոչ։

ԼՈՒՍ.—Պարոն Սարումեան, դուք հետաքրքրական մարդ էք. նման չէք, այ, սրանց։ (Ցոյց է տալիս Շահումեանին)։

ՍԱՐ.—Ծաղրեցէք, ծաղրեցէք...

ԼՈՒՍ.—Սա ծաղր չէ, այլ կոմպլիմենտ (Գնում են։ Երբանց գնալուց յետոյ Սարումեանը կանգնում է պատուհանի մօտ, Լիզան՝ սեղանի մօտ. երկուսն էլ լուռ են եւ կարծես չգիտեն ինչից սկսել)։

ՍԱՐ.—(Ընդհատելով լռութիւնը, մեղաւորի պէս) Եթէ այս պատը չլինէր, սենեակը այսպէս մութ, մռայլ չէր լինի։ Առաւօտները չգիտեմ որտեղից մի ճառագայթ գողի պէս մտնում է այստեղ,

մի քանի վայրկեան թրթռում ու նորից գողի պէս դուրս փախչում։

ԼԻԶԱ.—Նա ասաց, որ դուք նման չէք նրանց։ Ես էլ գտնում եմ, որ դուք նման չէք նրանց։

ՍԱՐ.—Չգիտեմ ինչպէս հասկանալ։ Դուք սիրում էք նրանց, իսկ եթէ ես նման չեմ նրանց, նշանակում է, չէք սիրում ինձ։ Շատ ցաւում եմ, որ նման չեմ նրանց։

ԼԻԶԱ.—Նրանց մէջ էլ մենք ընտրում ենք այնպիսիներին, որոնց կարծում ենք թէ նման չեն նրանց։ Կնոջ լեզուով, նման չլինել ուրիշներին, դա առաւելութիւն է։

ՍԱՐ.—Ես այնպէս վատ եմ հասկանում կանանց լեզուն։

ԼԻԶԱ.—Նա սիրում է այն ամենը, ինչ հազուագիւտ է և օրգինալ՝ սկսած մարդկանցից, մինչև գնդասեղը։ (Պաուզա)։ Պարոն Սարումեան, դուք կը կարդա՞ք ձեր այն պիէսը. Շահումեանը այնքան խօսել է, գովել։

ՍԱՐ.—Ոչ, այլևս ոչ ոք չի կարդայ։

ԼԻԶԱ.—Ես ձեզ չեմ հասկանում։

ՍԱՐ.—Այրել եմ։

ԼԻԶԱ.—Ինչպէ՞ս։

ՍԱՐ.—Կամաց-կամաց կտրում եմ ինձ կեանքի հետ կապող թելերը։

ԼԻԶԱ.—Ի հարկէ, դուք կատակ էք անում։

ՍԱՐ.—Այո, ի հարկէ... Բայց չեմ կարդայ։ Ես որոշել եմ կոտրել գրիչս, այլևս ոչինչ չգրել... Այսինքն կը գրեմ, ինձ համար, իմ բաւականութեան համար, իսկ երբ ձանձրացայ, այդ տրամադրութիւնը անցաւ, կը պատռեմ, կայրեմ, իսկ մարդկանց հետ ես գործ չունիմ։

ԼԻԶԱ.—Դուք անկեղծ չէք պարոն Սարումեան. դա ինչ անմիտ աշխատանք է։

ՍԱՐ.—Կեանքը մաշել է նշանակում։ Եթէ ես փող ունենայի, կը նետէի կեանքի հեղեղատի մէջ և թող տանէր, ուր ուզում է. բայց ես հազիւ եմ օրւայ պարէնս հայթայթում։ Ամեն մարդ մի բանով խաբում է իրեն. ես էլ դրանով կը լցնեմ իմ կեանքի դատարկը։

ԼԻԶԱ.—Պէտք է մաքառել, կռուել, տոկալ անվերջ։ Իսկ կեանքը ինքը իրեն կը ժաշի... Պատմեցէք ինձ ձեր մասին. ո՞ւր էիք, ի՞նչ էիք անում և այլն և այլն ..

ՍԱՐ.—Տաղտկալի պատմութիւն է։

ԼԻԶԱ.—Ես խնդրում եմ։

ՍԱՐ.—Հինգ տարի նստած էի Մոսկվայում, եղբօրս հաշւով, պատրաստւում էի հասունութեան վկայականի քննութիւն տալու, բայց չտւի, ձանձրացայ. մի քանի տարի էլ ուսուցիչ եմ եղել գաւառներում, էլի ձանձրացայ, այս տարի էլ այստեղ եմ՝ էլի կը ձանձրանամ և այդպէս մինչև կը հնչի վերջին ժամը... Հա՜, հա՜, հա՜...

ԼԻԶԱ.—(Լորգինից յետոյ) Դուք երբեք սիրել էք։

ՍԱՐ.—(Անթարթ նայում է նրան եւ չի պատասխանում)։

ԼԻԶԱ.—Սիրե՞լ էք։

ՍԱՐ.—Այո... Չեպ։

ԼԻԶԱ.—Ինձ սիրել էք ամառը, ամարանոցում, ոչ աւելի լուրջ։

ՍԱՐ.—Ես միայն մի անգամ եմ սիրել, այն էլ ամառը։

ԼԻԶԱ.— (Լորգինից յետոյ խօսքը փոխելով) Դուք այսօր կը լինէք թատրոնում, այո՞... Անպատճառ։ Դուք նստած կը լինէք ինձ մօտ։

ՍԱՐ.—(Գլխով համաձայնութեան նշան է անում եւ շարունակ անթարթ նայելում է նրան)։

ԼԻԶԱ.—Ինչո՞ւ էք այդպէս նայում... Մի՛ք նայի։

ՍԱՐ.—Դուք Ուռեկլեանի նշանածն էք... Դուք... Դուք...

ԼԻԶԱ.—(Խռոտափելով) Ես կարդացի ձեր գրուածքները. առաջ երբէք չէր ընկել ձեռքս։ Չէ՞ որ մենք կարդում, հետաքրքրւում ենք այն բանով, ինչի մասին թմբուկ են զարկում։

ՍԱՐ.—Այո, ես դժբաղդաբար թմբկահար չեմ ունեցել։

ԼԻԶԱ.—Դուք ինչո՞ւ չունիք ձեր երկերի ժողովածուն։

ՍԱՐ.—Որովհետև... Որովհետև, պարզ է. աւելորդ փող չեմ ունեցել։

ԼԻԶԱ.—Գիտէ՞ք ես ինչու եմ եկել ձեզ մօտ։

ՍԱՐ.—Ուռեկլեանն էր ուղարկել։

ԼԻԶԱ.—Ոչ։ Բացի այդ՝ ես եկել եմ առաջարկելու տալ մեզ հրատարակելու ձեր երկերի ժողովածուն։ Մենք մի փոքրիկ հրատարակչական ընկերութիւն ունենք։

ՍԱՐ.—Ես պէտք է այրեմ բոլորը։

ԼԻԶԱ.—Անմիտ բաներ մի ասէք։ Չէ՞ որ յանցանք է թողնել թափթփւած այս ու այն լրագրում կամ կոպէկանոց գրքերում։

ՍԱՐ.—Այդպէս, մի գրքում, մի հատ ու շքեղ հրատարակութիւն և լուսանկարս... Հա՜, հա՜, հա՜... Եւ հները և նորերը... Ոչ, ոչ, ինչ եմ ասում, երկու, երեք գրքում. նորերը այնքան շատ են։

ԼԻԶԱ.—Այո՛. դուք համաձայն էք։

ՍԱՐ.—(Դառը ծիծաղ) Դուք ձեռք էք մեկնում խեղդուողին. դուք ինձ խղճում էք... (Ցանկարծ անընական, բարձր) Հարկաւոր չէ, ուշացել էք... Բոլորդ էլ ուշացել էք, հեռացէք, թողէք ինձ...

ԼԻԶԱ.—(Զարմացած, զուսաւոր, ոտքի է ելնում)։

ՍԱՐ.—Ո՞ւր էիք դուք, ուր էի՞ք, երբ ես դեռ ապրում էի, երբ կանչում էի. այլևս ոչ ոք, ոչինչ պէտք չէ. ոչ խրախուսանք, ոչ սէր, ոչինչ, ոչինչ. գնացէք, հեռացէք, դեռ ոչ ոք չի տեսել իմ արցունքները... Ես խեղդեցի, ճմլեցի այն որդը... Կեանքը ուժեղներինն է, իսկ ես պէտք է ոչնչանամ... Ես յաղթուած եմ ձեզանից։

ԼԻԶԱ.—Պարոն Սարումեան։

ՍԱՐ.—Ես կտրեցի այն օղակը, որ օձի պէս փաթաթուել էր վզովս, խեղդում էր... Ես այրեցի բոլորը... Այժմ ես համարձակ կանեմ այն, ինչ այսքան երկար տարիների ընթացքում վախենում էի։ Ես չէի ուզում սատկել ինչպէս մի ճիճու։ (Արագ գնում է դէպի վառարանը եւ քանում) Նայեցէք, բոլորը, ամբողջ կեանքս, ամբողջ կեանքս... (Ընդհատում է այլեւ անկարող խօսելու. մի բան կարծես խեղդում է կոկորդը)։

ԼԻԶԱ.—Դուք ցնորուել էք։

ՍԱՐ.—Ո՞վ էք դուք, ի՞նչ էք ուզում, ինչո՞ւ էք այստեղ։

ԼԻԶԱ.—Պարոն Սարումեան, ուշքի եկէք, հանգստացէք...

ՍԱՐ.—(Լուռ նստած էր, յանկարծ ծիծաղում է) Եւ դուք հաւատացիք... Ես դեռ չեմ խելագարուել։ Ճիշտ է, այրել եմ, բայց սևագրութիւնները, ամբողջ մի կոյտ։ Երբ այրուում էին այդ տարիներով հաւաքուած թղթի կտորները, ինձ թւաց, թէ իմ կեանքն է այրուում, որ բոցավառուում, կարմրում ու մոխիր է դառնում. ես քիչ մնաց սարսափից ճչայի. ինձ թւաց, թէ ես սխալմամբ, գայրոյթի բոպէին սևագրութիւնների հետ միասին բոլորն էլ կրակն եմ լցրել... Հա՜, հա՜, հա՜... Ծիծաղելի չէ՞... (Ընդհատելով ինքն իրեն) Այդպէս, թատրոնում նստած կը լինենք միասին և կը նայենք Ուռեկլեանի նոր և մրցանակի արժանացած պիէսը... Դուք շատ էք սիրում նրան։

ԼԻԶԱ.—(Չի պատասխանում)։

ՍԱՐ.—Ոչ մի կանացի ձեռք չի շոյել իմ գլուխը, բացի մորից։ Երբ ես տանն էի լինում, գիւղում, պառկում էի, գլուխս դնում մօրս գոգին և խնդրում էի, որ շոյի այնքան, մինչև քնեմ... Շոյանքի կարօտը...

ԼԻԶԱ.—Ձեր նեարդերը հիւանդ են։ Հանդարտուէք, մի խօսէք։ Նստեցէք, ահա, այստեղ. (Ջուր է լցնում) խմեցէք։

ՍԱՐ.—(Խմում է նրա ձեռքից) Շնորհակալ եմ. ինձ թւում է, թէ ես ժահամերձ հիւանդ եմ և դուք մի պահապան հրեշտակ էք, որ ուղարկուած էք վերևից և ես, նախ քան յաւիտեան փակեմ աչքերս, գիտակցութեան եմ եկել...

ԼԻԶԱ.—(Շոյում է նրա գլուխը) Այժմ լաւ էք...

ՍԱՐ.—(Բռնում է նրա ձեռքը, թեքում գլուխը եւ երկար համբուրում)։

ԼԻԶԱ.—(Անշարժ կանգնած է)։

ՍԱՐ.—(Արցունքներից խեղդուելով) Իմ երազը... Տարիների ցնորք... Ասուած... Ասուած... Շնորհակալ եմ, շնորհակալ...

ԼԻԶԱ.—Ի՞նչ էք ասում։

ՍԱՐ.—Լուռ։ Թող երկար տևէ այս ինքնամոռացումը... Թող անվերջ շարունակուի այս երազը... Կեանքիս երազը... Դուք շոյեցիք իմ գլուխը... Եթէ ես այժմ մեռնեմ... Եթէ այսպէս քնած էլ մեռնեմ... Մեռնեմ այս երազի մէջ... Ես ձեզ միշտ սիրել եմ. դուք միակ կինն էք, որի պատկերը, երբէք, երբէք չի հեռացել իմ մտքից... Ինձ միշտ թւացել է, որ լեռ ձեզ կը հանդիպեմ իմ կեանքի ճանապարհին... (Մի քիչ ուժգնից յետոյ, կամաց) Ես ձեզ կը խլեմ նրանից։

ԼԻԶԱ.—Ի՞նչ։

ՍԱՐ.—(Աւելի ուժեղ) Ես ձեզ կը խլեմ նրանից... Եւ այն ժամանակ ես կը վերածնուեմ, կապրեմ... Ես ուզում եմ ապրել... Նորից կը սկսեմ. թող կորչի վհատութիւն. ես կը կռուեմ, ես ճանկերով կը կորզեմ ինձ հասանելիքը... Ես ուզում եմ ապրել. անցեալը այրուել է... Նոր կեանք կը սկսեմ, նոր, նոր, առողջ, պայծառ մի կեանք...

ԼԻԶԱ.—Այո, այո... Եւ դուք կը տեսնէք ինչ հեշտ կը լինի հարթել կեանքի բոլոր խոչընդոտները... Պէտք է լարել ոյժերը, իսկ տաղանդը կանէ իր անելիքը... Դուք կատակ աբիք, չէ՞, ասելով որ այրել էք... Դուք կատակ արիք...

ՍԱՐ.—Այո, ի հարկէ, ես դեռ չեմ խելագարուել... Ամբողջ կեանքը դեռ առաջս է... Ես դեռ ուզում եմ ապրել, ստեղծագործել...

ԼԻԶԱ.—Տուէք ինձ ձեր ձեռքը... Այդպէս... Մի քիչ եռանդ, մի քիչ աշխատանք և կը տեսնէք, որ յաղթանակը ձերն է։

ՍԱՐ.—Դուք հաւատո՞ւմ էք ճակատագրին։

ԼԻԶԱ.—Ոչ։

ՍԱՐ.—Ես հաւատում եմ։ (Դուռը բաղխում են)։

ՍԱՐ.—Մտէք։ (Մտնում են Շահումեանը եւ Լուսիկը)։

ԼՈՒՍ.—Նայեցէք ինչ հրաշալի ծաղիկներ են։ Կարծես գարուն լինի։ (Ցրում է օդի մէջ ձեռքի ծաղիկները) Այնպէս դուրեկան ցուրտ է, արև կայ, բայց չի տաքացնում։ Այնքան լաւ է շրջել նրա ճառագայթների տակ...

ՇԱՀ.—Ի՞նչ էք տանը նստել... Հրաշալի եղանակ է։ Մտայ տպարան, շարում են, մի քանի օրից լոյս կը տեսնի։ Քանի գլուխներ են ցնցելու։

ՍԱՐ.—Ճակատագրից չես փախչի. այդ պոռնիկը ամեն տեղ մեզ հետ է և նա կասէ իր ասելիքը։

ՇԱՀ.—Մարդ իր ձեռքով է փորում ճակատի այդ գիրը։

ՍԱՐ.— Պարոններ, ես արդէն վերջացնում եմ իմ մի նոր դրաման. դա իմ գլուխ գործոցն է լինելու։

ԼՈՒՍ.—Այո՞, ճշմարիտ, կը կարդաք։

ՍԱՐ.—Ուրախութեամբ, երբ վերջացնեմ, իսկ այժմ խընդրում եմ թողէք ինձ մենակ... Հա՜... Հա՜... Հա՜... Ինչպէս բանաստեղծները ասում են՝ «մուսաս եկել է», շուտով պատրաստ կը լինի իմ վերջին դրաման։

ՇԱՀ.—Կը հանդիպենք թատրոնում։

ՍԱՐ.—Այո։

ՇԱՀ.—Կուզես մտնեմ, միասին գնանք։

ՍԱՐ.—Ոչ, դու ինձ կարող ես խանգարել։

ԼՈՒՍ.—Դէ՜... Գնանք, ցտեսութիւն։ (Ծիծաղելով) Դուք չմոռանաք, որ մեզ դուրս արիք։

ՍԱՐ.—(Ժպտում է)։

ԼԻԶԱ.—(Բռնել է նրա ձեռքը եւ նայում է ուղիղ աչքերին)։

ՍԱՐ.—Դուք դեռ կասկածում էք, ի հարկէ, կատակ էր... Մի քանի օրից օրիորդ Լիզան լինելու է տիկին Ուռեկն լեան։

ԼՈՒՍ. —Այո, և մենք մի լաւ քէֆ կանենք նրա հարսանիքին։

ՍԱՐ.— Իսկ եթէ չհրաւիրեն։

ԼՈՒՍ.— Խօսք եմ տալիս։

ՍԱՐ.—(Լիզային) Թատրոնում... Ուռեկլեանը երևի զբաղուած կը լինի կուլիսներում. մենք նստած կը լինենք իրարմօտ... Բայց ով գիտէ. ես ամեն կերպ կաշխատեմ գալ, բայց եթէ մուսաս չթողնի ինձ, գուցէ չգամ. ով գիտէ, այնքան աներես են լինում այդ մուսաները։

ԼՈՒՍԻԿ.— (Բարձր ծիծաղելով) Անեբես մուսա։

ՇԱՀ.— Յաեսութիւն։

ԼԻԶԱ.— Յաեսութիւն։ (Գնում են)։

ԼՈՒՍ.—(Դրսից) Պարոն Սարումեան, մի մտրակ պահէք մօտներդ։

ՍԱՐ.—Ինչու։

ԼԻԶԱ.—Որ եթէ ուշացնի ձեզ այդ անեբես մուսան, ծեծելով փախցնէք։ (Ծիծաղելով հեռանում են)։

ՍԱՐ.—(Փակում է դուռը, մօտենում է գրասեղանին, մի վայրկեան լուռ կանգնած է գրասեղանի մօտ, ինքն էլ չգիտէ ինչու: Յանկարծ ուշքի է գալիս, արագ մօտենում է վառարանին, ընկնում է մօտիկ աթոռի վրայ եւ լուռ նայում վառարանի ներսը)։

ՎԱՐԱԳՈՅՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ Գ.

Լիզայի մօտ։ Հնդունարան։ Ամեն տեղ նկատւում է կիրթ ճաշակ։ Անկիւնում դաշնամուր։ Պատերից նկարներ, արձաններ՝ պատերից կախուած պատուանդանների վրայ։

Վարագոյրը բացւելիս սկսում է մթնել։ Լիզան նստած դաշնամուրի մօտ մեքենաբար մի ձեռքով ինչ որ նւագում է։ Լուսիկը նստած պատուհանի մօտ կարդում է։

ԼՈՒՍ.—(Մի քանի անգամ նայում է Լիզայի կողմը, բայց ոչինչ չի ասում։ Համբերութիւնը հատած ընդհատելով ընթերցումը). Այդ ի՞նչ ես անում։

ԼԻԶԱ.—Հա՜, ինչ։

ԼՈՒՍ.—Այդ ի՞նչ ես անում։

ԼԻԶԱ.— Նւագում եմ։

ԼՈՒՍ.—Արդեօք չի՞ կարելի, որ չնւագես։

ԼԻԶԱ.—(Լուռ բարձրանում է տեղից, մօտենում է գահա-

տրակին եւ կիսապառկում՝ գլուխը ետ ձգած) Այսօր տեսա՞լ ես Սարումեանին։

ԼՈՒՍ.—Ոչ։ (Շարունակում է կարդալ)։

ԼԻԶԱ.—Նրան չի կարելի մենակ թողնել... Ես ուղղակի վախենում եմ. նա ամեն բանի ընդունակ է... Լուսիկ։

ԼՈՒՍ.—Հա...

ԼԻԶԱ.—Գնա նրա մօտ... Իմացիր ի՞նչ է անում, ինչպէ՞ս է։

ԼՈՒՍ.—(Վերջացնելով եւ ծալելով գիրքը) Ոչ ոքի չի ընդունում։ Շահումեանը երէկ եղել է նրա մօտ, նոյն իսկ նրան դուռը բաց չի արել... Աշխատում է։

ԼԻԶԱ.—Գիտե՞ս, պէտք է լուրջ մտածել։ Նրան լուրջ բժշկութիւն է հարկաւոր։ Նեարդերը վերջնականապէս քայքայուած են։ Զրկանք, նեղութիւններ, կեանքի վատ պայմանները նրան բոլորովին ուժասպառ են արել։ Այժմ նա այնպէս յուսահատուած է. նա կորցրել է հաւատը դէպի մարդիկ, դէպի ինքն իրեն. վախենում է, որ այլեւս գրել չի կարող։

ԼՈՒՍ.—Մինչեւ այժմ նա բարեկամներ չի ունեցել, միշտ մենակ է եղել... Այժմ մենք նրան մենակ չենք թողնի։ Շահումեանը ուղղակի հիացած է նրա այն պիէսով, որը պարոն Ուռեկլեանի ժիւրին ոչնչացրել է։

ԼԻԶԱ.—Ես նրան մի քանի անգամ խնդրել եմ, որ կարդայ և ամեն անգամ մերժել է. ասում է այրել է. չգիտեմ՝ լուրջ է, թէ չէ, բայց ես վախենում էմ. նա ընդունակ է նման յիմարութիւնների։

ԼՈՒՍ.—Նա իսկապէս սիրահարուած է եղել քեզանից։

ԼԻԶԱ.—Ինչո՞ւ ես դուրս տալիս։ Ամարանոցում երեւի մի քանի օր գրաւուած է եղել, և այդքան... Քանի՞ տարի է անցել։

ԼՈՒՍ.—Իսկ եթէ ոչ, եթէ նա այժմ էլ սիրում է։

ԼԻԶԱ.—Յեռոյ ինչ...

ԼՈՒՍ.—Իսկ դո՞ւ։

ԼԻԶԱ.—Ես ոչ ոքի չեմ սիրում։

ԼՈՒՍ.—Եթէ քո Ուռեկլեանը լսի։

ԼԻԶԱ.—Նա մի քանի անգամ լսել է, իսկ այսօր վերջնականապէս կը կտրուի այդ կապը։

ԼՈՒՍ.—Ինչպէ՞ս։

ԼԻԶԱ.—Ես նրան վաղուց է, որ դադարել եմ սիրել և իսկապէս չգիտեմ էլ սիրել եմ, թէ ինքնախաբէութիւն է եղել իմ այդ սէրը կոչուածը։

ԼՈՒՍ.—Ի՞նչպէս. դու կատակ չե՞ս անում։

ԼԻԶԱ.—Ամենևին։ Ես նրան գրել եմ, երևի շուտով կը գայ։

ԼՈՒՍ.—Ես չէի ուզենայ հանդիպել նրան քեզ մօտ։

ԼԻԶԱ.—Դեռ շուտ է։ Դէ, ասա, ինչպէս հաւանեցիր Շահումի քննադատութիւնը։

ԼՈՒՍ.—(Ժպտալով) Իսկապէս լաւ է, չէ՞։

ԼԻԶԱ.—Ես երկու անգամ կարդացի և ամեն անգամ աւելի էի համոզւում, որ ուղիղ է։ Գուցէ հնարաւոր լինի շարժել այս ճահիճը, ուր ամեն բան նեխւել է ու ճնացել, ուր մարդ շնչարգել է լինում. պէտք է թարմացնել, պէտք է հարուածել անխնայ և Շահումեանը այդ առաջին քայլն անում է։

ԼՈՒՍ.—Երևակայում եմ ինչ վայնասուն են բարձրացնելու նրանք... Նրանք ի հարկէ չեն լռի, կը յարձակւեն, ոչ մի բանի առաջ կանգ չառնելով, միայն թէ տապալեն իրենց հակառակորդին։

ԼԻԶԱ.—Թող, թող սկսի այդ փրկարար պայքարը, թող մարդկանց ուղեղները մի քիչ շարժւեն... Վաղուց ժամանակ է։ Պէտք է ամեն մէկին իր բարձին նստացնել։

ԼՈՒՍ.—Ճպուռը թող ճռռայ, շունը թող մռռայ... Ես հը պարտանում եմ, որ Շահումեանը սիրում է ինձ։

ԼԻԶԱ.—Դու կատարեալ իրաւունք ունես։ Տե՛ս, սիրիր, փայփայիր, նա արժանի է, որ նրան շատ, շատ սիրեն։

ԼՈՒՍ.—Իսկ դու կարծում ես, ես նրան քիչ եմ սիրում։ Ես գուցէ չեմ կարողանում այնպէս արտայայտել, ինչպէս ուրիշները, բայց սիրում եմ շատ, և օր օրի վրայ աւելի ու աւելի։ Ես հարբածի նման եմ։ Նրա ներկայութեամբ այնպէս եմ փոքրանում. ինձ թւում է, թէ ես դեռ փոքրիկ աղջիկ եմ։ Առաջ, երբ նոր էի ծանօթացել, այդպէս չէր, ընդհակառակը ուզում էի իշխել, հրամայել, բայց կամաց-կամաց խեղճացայ, սարկացայ...

ԼԻԶԱ.—Այդպէս է սէրը. մէկն ու մէկը սարկանում է, կամ դու, կամ նա... (Զանգ)։

ԼՈՒՍ.—Նա՞ է։

ԼԻԶԱ—Երևի։

ԼՈՒՍ.—Ես կերթամ։

ԼԻԶԱ—Լաւ։ Աշխատիր տեսնել Շահումեանին, յետոյ մըտէք Սարումեանի մօտ և եթէ յաջողուի, երեքով միասին եկէք։ Փանի օր է, ես նրան չեմ տեսել։

ԼՈՒՍ.—Լիզա, դու սիրահարուած ես։

ԼԻԶԱ—Յիմարութիւններ ես ասում... Ես գնահատում եմ նրա ընդունակութիւնները և վախենում, որ ուշացել ենք։ Վախենում եմ, որ կեանքը նրան բոլորովին ճմլել է։ (Դուռը բաղխում են) Մտէք։

ՈՒՌ. -(Դռներում) Օր. Լուսիկ, բարև։ Դուք գնո՞ւմ էք։

ԼՈՒՍ.—Ինձ կը ներէք... Ես ժամադիր եմ... Չկարծէք, որ ձեզանից եմ փախչում։

ՈՒՌ.—Դուք առիթ չունիք ինձնից փախչելու։

ԼՈՒՍ.—Դէ, ի հարկէ։ Այնպէս չէ՞։ Ցտեսութիւն (Գնում է)։

ՈՒՌ.—(Համբուրում է ձեռքը եւ ասանց ձեռքը քաց թողնելու նայում է նրան)։

ԼԻԶԱ.—(Ոչ կոպիտ կերպով խլում է ձեռքը եւ վառում է եղէբտրական լոյսը)։

ՈՒՌ.—Ի՞նչացու է։

ԼԻԶԱ—Աբդէն մութ է։ (Մօտենում է սեղանին, որի վրայ դրուած է ամսագրի 1-ին հատորը եւ նստում) Խնդրեմ։

ՈՒՌ. -(Մօտենում է, բայց չի նստում) Ինձ կանչե՞լ ես։

ԼԻԶԱ—Խօսելու բան ունիմ։

ՈՒՌ.—Բայց ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես այդպէս մռայլ։

ԼԻԶԱ—Դատարկ բան, ոչինչ էլ չի պատահել, տրամադրութիւնս մի քիչ լաւ չէ։

ՈՒՌ.—Առհասարակ ի՞նչ է կատարուում քեզ հետ՝ չգիտեմ, չեմ հասկանում, դու բոլորովին փոխուել ես։

ԼԻԶԱ.—(Ցոյց տալով ամսագիրը) Կարդացի՞ր։

ՈՒՌ.—Աչքի եմ անցրել։

ԼԻԶԱ—Իսկ Շահումեանի քննադատութիւնը։

ՈՒՌ.—Աւելի լաւ է չխօսենք այդ մասին։ Վաղը կը լինի իմ եւրիշ յօդուածները, թէ Շահումեանի և թէ առհասարակ ամսագրի մասին։

ԼԻԶԱ—Երևակայում եմ, թէ ինչ կատաղի յօդուածներ...

ՈՒՌ.—Գիտես, ուղղակի աննեբելի է Շահումեանի այդչափ թեթևամտութիւնը։ Նա կարծում է մի հարուածով կարող

է ոչնչացնել ամեն բան, այն ինչ տարիներով է կառուցած՝ մի օրում չեն քանդուի։ Աւելի լաւ է թողնենք, խօսենք ուրիշ բանից...

ԼԻԶԱ—Լաւ, չխօսենք։

ՈՒՌ.—(Քիչ լռութիւնից յետոյ) Անկեղծ եղիր Լիզա և ասա՝ ինչ է պատահել քեզ, գուցէ դու այդ չես նկատում. բայց քեզ դժուար է ճանաչել։

ԼԻԶԱ—Այո, այսօր ես միանգամայն անկեղծ կը լինեմ։

ՈՒՌ.—Այդպէս չէր առաջ։ Երբ խաղում էին իմ մի պիէսը, դու ինձանից աւելի էիր յուզւում, իսկ այն օրը դու ոչ մի անգամ չհետաքրքրուեցիր, չանցար կուլիսները. ճշմարիտ դա ինձ այնպէս վիրաւորեց։ Անկարելի է, որ դա իր պատճառները չունենայ։

ԼԻԶԱ—Անկեղծ... Գիտես, ինձ դուր չեկաւ և աւելորդ համարեցի գալ ու երեսիդ ասել՝ «ինձ դուր չեկաւ»։ Ինձ թւում է, որ դա նորութիւն չէ, որ արդէն մի անգամ տեսել եմ, դա կրկնութիւն է քո նախկին գրուածքների։ Դու սկսել ես ինքդ քեզանից գողանալ. դա լաւ չէ, դա սնանկութեան վերջին կէտն է...

ՈՒՌ.—Այո։

ԼԻԶԱ—Այո։ Ես կամաց-կամաց համոզւում եմ, որ դու արդարացի էիր, ասելով որ «մեզ մօտ տաղանդը մի որոշ տեղ ունի գնալու, յետոյ կանգ է առնում և էլ ոչ մի քայլ սկսում է ապրել անցեալ փառքով»... Եւրոպայում 40—45 տարեկան հասակում են մարդիկ սկսում իրենց իսկական տաղանդի արտադրութիւնները տալ, իսկ մեզ մօտ 40 տարեկան արդէն ծերանում են, սպառւում...

ՈՒՌ.—(Վիրաւորուած) Դէ, ինչ արած, Աստծոյ տւածից, մարդ իր ուսերից վեր չի կարող թռչել... Բայց հասարակութիւնը գոհ մնաց։

ԼԻԶԱ—Հասարակութիւնը...Հասարակութիւնը արդէն պատրաստ էր ծափահարելու։ Զուր չէին բարեկամներդ չորս ամիս թմբուկ զարկում։

ՈՒՌ.—Հասարակութիւնն ունի իր աչքերը, գլուխը, նա ոչխարի հօտ չէ, որ ուր ուզէք քշէք։

ԼԻԶԱ—Դժբաղդաբար նա ոչխարի հօտ է, և տեսնում է ձեր աչքերով։ Դուք այդ լաւ գիտէք։

ՈՒՌ. –(կծու) Իսկ ինչ էր ասում Սարումեանը. նա շարունակ քեզ հետ էր. երևի նոյնը՝ ինչ դու։

ԼԻԶԱ—Ոչ, աւելի վատ։ Նա չկարողացաւ մինչև վերջը նստել։ Երրորդ գործողութիւնից յետոյ, որ այնպէս բուռը կերպով ծափահարում էին քեզ, նա գնաց։

ՈՒՌ.—«Նախանձը մի կանաչ-աչքանի հրէշ է», —ասում է Եագոն։ Ի հարկէ, հասկանում եմ...

ԼԻԶԱ—Նախանձ... Նա նախանձում է քեզ, հա՛, հա՛, հա՛...

ՈՒՌ.—(Վիրաւորուած) Լիզա...

ԼՈՒՍ—Ի՞նչ։

ՈՒՌ.—Դու չես սիրում ինձ... Նոյն իսկ հեգնում ես։

ԼԻԶԱ—Ես արդէն մի քանի անգամ ասել եմ և էլի կրկնում եմ՝ ապարդիւն կը լինի խօսել դրա մասին. դա անդառնալի է։ Այսօր ես կանչել եմ քեզ, որ վերջնականապէս պարզենք մեր յարաբերութիւնները։ Կարիք չկայ ձգձգել։

ՈՒՌ.—Դու անգութ ես Լիզա... Աւա՜ղ, որ կատակ ես անում։

ԼԻԶԱ—Ես միանգամայն լուրջ եմ ասում։

ՈՒՌ.—Բայց ինչու, ինչ է պատահել։

ԼԻԶԱ.—Հաւատայ, որ ոչինչ չի պատահել։ Ես երկար մըտածել եմ, քրքրել եմ հոգուս խորքերը և այնտեղ ոչ մի կայծ, սիրոյ ոչ մի նշոյլ... Ես այնքան անտարբեր եմ դէպի քեզ. քո ներկայութիւնը ինձ չի յուզում։ Այլևս չեմ սիրում, և այդքան։ Նոյն իսկ չգիտեմ, արդեօք սէր էր այն, ինչ ես զգում էի. թող լինի սէր, սիրել եմ բայց էլ չեմ սիրում... Առանց մեծ-մեծ խօսքերի կը բաժանուենք և կը մնանք բարեկամներ։ Եւ ինչ լաւ է, որ այսպէս վերջացաւ, քանի դեռ ուշ չէ։

ՈՒՌ.—Իսկ եթէ մենք արդէն ամուսնացած լինէինք...

ԼԻԶԱ.—Աւելի վատ՝ թէ քեզ, և թէ մանաւանդ ինձ համար։ Ես այն ժամանակ էլ կասէի՝ Գէորգ, ես դադարել եմ քեզ սիրել։

ՈՒՌ.—Բայց ինչու... Ի՞նչ է իմ յանցանքը։

ԼԻԶԱ.—Ախ, ինչ յանցանք... Դու դարձեալ նոյնն ես, ես էլ չեմ փոխուել, բայց իմ զգացմունքները փոխուել են։

ՈՒՌ.—Անկարելի է, որ առանց մի պատճառի, առանց ոչ մի դրդող պատճառի...

ԼԻԶԱ.—Այն օրը երբ ես ասացի սիրում եմ, դու ինձ չհարցրիր՝ ինչու... Ինչու սիրեցի՝ չգիտեմ, ինչու չեմ սիրում, նոյնպէս չգիտեմ։

ՈՒՌ.—Մենք գիմնազիստի աշակերտները չենք, Լիզա, մենք պէտք է կարողանանք մեզ հաշիւ տալ մեր իւրաքանչիւր քայլի համար։

ԼԻԶԱ—Այ, հենց այդ ես չեմ կարող, որովհետև ինքս էլ չգիտեմ թէ ինչու չեմ սիրում։

ՈՒՌ.—Դա շատ անգութ վերաբերմունք է։ Ես շնչել եմ, շնչում եմ քեզանով, առանց քեզ կեանքը կը կորցնի իր արժէքը... Ես... Ես... Չգիտեմ... Ինչպէս կարող եմ բաժանուել, չտեսնել...

ԼԻԶԱ—Այ, արդէն... Ես ասացի, որ մեծ-մեծ, փքուն խօսքեր չասենք. ի՞նչացու են։ Ես երեխայ չեմ և նախ քան որոշել քեզ ասելը, շատ եմ տանջուել, մտածել... Եւ եթէ որոշել եմ ասել, նշանակում է այդ որոշումը մի բոպէական տրամադրութեան արդիւնք չէ, այլ լուրջ մտածուած մի քայլ, միանգամայն գիտակցօրէն կատարած։ Դու ի հարկէ այնքան անմիտ չես, որ գնաս ու քեզ սպանես... Այդ յիմարութիւնն անելու համար դու չափազանց լուրջ ես, և ծիծաղելի կը լինէր... Կանցնի մի ժամանակ, դու կը սիրես մի ուրիշը և դուցէ աւելի բաղդաւոր լինես քան ինձ հետ։ Ինձ հետ միևնոյն է դու բաղդաւոր չէիր կարող լինել։ Մենք սկսել ենք իրար այնպէս վատ հասկանալ... Մեկնենք իրար մեր ձեռքը, մնաք բարով ասենք և բաժանուենք իբրև բարեկամներ։

ՈՒՌ.—Լիզա, Լիզա, ես ցնորուում եմ, ինձ թուում է, որ սա մի վատ երազ է... Լիզա, աղաչում եմ մի քանդիր իմ տաճարը, մի խորտակիր իմ տարիների փայփայածը...

ԼԻԶԱ—Մի թոյլ տաք, որ ես ձեզ խղճամ. դա շատ է ստորացնում մարդու... Ես ձեզ չեմ սիրում...

ՈՒՌ.—Դուցէ սիրում էք մի ուրիշին։

ԼԻԶԱ - (Մեղմ) Այդ ձեզ չի վերաբերում։

ՈՒՌ.—(Հանարեա ճչալով) Դուցէ նրան... Այն ողորմելի անյաջողակին, որն իրեն Աստուած գիտէ թէ ինչ է երևակայում, այդ մանիա-գրանդիոզայով բռնուած ներուատենիկին... Ես նրան կոչնչացնեմ, կը սատկացնեմ. այդ ճիճուն, այդ որդը... Սիրում էք նրան, ասացէք, այո՞, այո՞... Հա՜, հա՜, հա՜...

ԼԻԶԱ.—(Արհամարհական հայեացքով նայում է ուղիղ նրա աչքերին, դանդաղ բարձրանում է ու լուռ դիմում աջ դէպի սենեակը)։

ՈՒՌ.—Ներիր, ներիր... Ես ինքս էլ չգիտեմ ինչ եմ ասում Լիզա... (Զանգ)։

ԼԻԶԱ.—Դուք մուրացիկ էք։ Չեմ սիրում մուրացկաններին։ (Գնում է)։

ՈՒՌ.—(Դանդաղ մոտենում է դաշնամուրի մոտ դրված աթոռին, ընկնում է, գլուխը ձեռների մէջ։ Մի քանի վայրկեան մնում է այդ դրութեան մէջ, ապա, կարծես խոր քնից արթնացածի պէս, ոտքի է ելնում, նայում է շուրջը եւ գիտակցելով, որ այլեւս այդտեղ ոչինչ չունի անելու, արագ դիմում է դէպի ելքի դուռը. դռներում հանդիպում է Սարումեանին։ Մի վայրկեան կանգ է առնում՝ չափում նրան ոտից մինչեւ գլուխ) Օրիորդ Լիզայինն էք ուզում, համեցէք, նա իսկոյն կը գայ։ (Կծու քրքիջով արագ դուրս է գնում)։

ՍԱՐ.—(Նայում է նրա ետեւից)։

ԼԻԶԱ—(Ներս գալով) Պարոն Սարումեան. վերջապէս այս ուր էք կորել։

ՍԱՐ.—(Լուռ նայում է դռներին, որտեղից դուրս եկաւ Ուռեկլեանը) Պարոն Ուռեկլեանն էր։

ԼԻԶԱ.—Այո։

ՍԱՐ.—Ի՞նչ, գնա՞ց նա։

ԼԻԶԱ—Նա այլեւս ոչինչ չունէր անելու այստեղ։ (Բռնում է նրա ձեռքը) Ասացէք, ուր էիք, ի՞նչ էիք անում այս քանի օրս, փակւել էք, ոչ ոքի չէք ընդունում։ Գրո՞ւմ էք։

ՍԱՐ.—Նա այնպիսի տարօրինակ աչքերով նայեց ինձ ու ծիծաղեց։ Նա ծաղրում է իմ սէրը, իմ խեղճ ու աղքատ սէրը։ Նա երեւի գիտէ, որ ես ձեզ սիրում եմ և ծաղրում է... Եւ այնպէս վախենում եմ մարդկանցից. ես չեմ սիրում նրանց, բոլոր մարդկանց մէջ միմիայն ձեզ եմ սիրում... Սիրում եմ ձեզ, հա՛, հա՛, հա՛... Ինչ դառը ծաղր, իսկ դուք սիրում էք նրան, սիրում էք մի խլուրդի, մի չեչոտ խլուրդի։ Սիրեցէք նրան, շատ սիրեցէք, որ ես կարողանամ ատել ձեզ. դուք դեռ կապում էք ինձ կեանքի հետ, իսկ ես պէտք է կտրեմ բոլոր կապերը, վերջին կապն էլ...

ԼԻԶԱ.—(Նրա ձեռքից բռնած մոտենում է, նստում գահատոռակի վրայ։ Սարումեանը մնում է կանգնած) Նստեցէք։ Ասացէք, կարդացի՞ք Շահումեանի քննադատութիւնը։

ՍԱՐ.—Ես վերջացրի իմ վերջին դրաման։ Երեք օր է մտածում եմ ինչ վերնագիր դնել։ Վերջապէս գտայ։

ԼԻԶԱ. - Այո՞. ի՞նչ է։

ՍԱՐ.—«Կեցցէ Կեանքը»։

ԼԻԶԱ.—«Կեցցէ Կեանքը»։ Դուք խոստացել էք կարդալ։ Դէ՛, ՝ըրբ...

ՍԱՐ.—Այսօր, վաղը. երբ կուզէք։

ԼԻԶԱ—Ի հարկէ այսօր. շուտով Շահումեանը և Լուսիկն էլ կը գան։ Ես խնդրել եմ նրանց, որ մտնեն ձեզ մօտ, ձեզ էլ վերցնեն։

ՍԱՐ.—Իսկ ես արդէն այստեղ եմ։ (Մի քիչ լուռ, ապա յանկարծ ոտքի է ելնում, մի քանի վայրկեան նայում է Լիզային, ուզում է մի բան ասել, բայց տատանւում է։ Վշտելով) Վերցրէք այս մատանին յիշատակ, նէր ինձանից։ Սա իմ մօր միակ հարստութիւնն էր։ Մահւան մահճում, մի քանի րոպէ մեռնելուց առաջ, հանեց մատից և տուեց ինձ, որ տամ նրանում սիրեմ։ Ինչին բան է... Պատահել է օրերով քաղցած եմ եղել, բայց այս մատանին պահել եմ աչքիս լոյսի պէս։ Ահա, վերցրէք, սա ձեզ է պատկանում... Մի մերժէք... Դուք ինձ այնպէս կուրախացնէք... Իմ ինչին է պէտք. եթէ դուք չընդունէք, միևնոյն է, գետը կը նետեմ. ինձ այլևս պէտք չէ... Ծիծաղելի կը լինի եթէ մատս դնեմ. իսկ գրպանում շարունակ վախենում եմ կորցնել... Դուք չէ՞ք մերժում... Շնորհակալ եմ, շնորհակալ...

ԼԻԶԱ- Ուրախութեամբ։ Այս մատանին խօսք եմ տալիս երբէք չհանել մատիցս։

ՍԱՐ.—Եթէ Ուռեկլեանը չուզենայ, դժգոհ լինի... Ասացէք... Վերջապէս դուք մի ասէք, թէ ումից է, և վերջ։

ԼԻԶԱ—Հանգիստ եղէք, ոչ ոք չի կարող ինձ արգելել անել այն, ինչ ուզում եմ։ Ես ոչ ոքի պարտաւոր չեմ հաշիւ տալու իմ արածների համար։

ՍԱՐ.—Ես այնպէս երջանիկ եմ, այնքան երջանիկ, որ քիչ է մնում լամ։ Դուք մի ծաղրէք ինձ, հա երբէք ինձ այսպէս բաղդաւոր չեմ զգացել, գուցէ ձեզ համար այդ անհասկանալի լինի... Հասկանում էք, ոչ մի պայծառ յիշողութիւն... Թոյլ տուէք համբուրել ձեր ձեռքը... Ձեր ձեռքը... (Հազիւ զրպարելով իրեն, ընկնում է նրա առաջ եւ սղմում ձեռքը շրթունքներին. կարծես սթափւելով) Ներեցէք ինձ, ինքս էլ չգիտեմ ինչ եմ անում... Ես եկել եմ միայն բարև ասելու...

ԼԻԶԱ—Դուք գնո՞ւմ էք։ Ո՞ւր...

ՍԱՐ.—Ո՞ւր. ինքս էլ չգիտեմ...

ԼԻԶԱ—Ես ձեզ չեմ թողնի։

ՍԱՐ.—Ես չեմ ուզում տեսնել ձեզ նրա կինը դարձած...

ԼԻԶԱ—Ես երբէք նրա կինը չեմ լինի։ Նա այսօր վերջին անգամն էր այստեղ և էլ երբէք չի գայ։

ՍԱՐ.—Դուք մերժեցիք նրան։

ԼԻԶԱ—Այո։

ՍԱՐ.—Ինչու։

ԼԻԶԱ—Որովհետև չեմ սիրում։

ՍԱՐ.—Ձէք սիրում... Ձէք սիրում... (Կարծես չհասկանալով)։

ԼԻԶԱ—Չեմ սիրում... Դուք ճնում էք... Դուք ոչ մի տեղ չպիտի գնաք. այո՛, այո՛. դուք չէք գնայ (Նրա ձեռքերը բռնելով) Դուք չէք գնայ, ես ձեզ չեմ թողնի...

ՍԱՐ.—Օրիորդ Լիզա, օրիորդ Լիզա... (Ոչինչ չի կարողանում ասել)։

ԼԻԶԱ—Եթէ սիրում էք ինձ, դուք ոչ մի տեղ չպէտք է գնաք։

ՍԱՐ.—Ձեր ինչի՞ն է պէտք իմ սէրը... Դուք գիտէք, որ սիրում եմ... Բայց պէտք է գնամ, և որքան կարելի է հեռու... Մի գուցէ մոռանամ։ Կամ գոնէ չտեսնեմ ձեզ և մտածեմ, որ դուք չկաք, որ դուք մի երազ էիք, որ ձեզ տեսայ ես երազում և այդ երազը ես մոռանալ չեմ կարողանում ու կը սիրեմ ինչպէս մի երազ... Ինչպէս մի երազ... Դուք ինձ երբէք չէք սիրելու... Արդէն պէտք էլ չէ, որ ինձ սիրէք...

ԼԻԶԱ—Ես սիրում եմ։

ՍԱՐ.—Մի ծաղրէք ինձ, օրիորդ Լիզա, գուցէ յետոյ զղջաք, որ ծաղրեցիք...

ԼԻԶԱ—Ինչու՞ էք կարծում, որ սա ծաղր է։

ՍԱՐ.—Ինձ, չի կարելի սիրել։

ԼԻԶԱ—Ցիմար, յիմար երեխայ... Իսկ եթէ ես ձեզ սիրում եմ, եթէ սիրում եմ...

ՍԱՐ.—(Կարծես չհաւատալով լսածին) Ի՞նձ, ի՞նձ... Հա՜, հա՜, հա՜...

ԼԻԶԱ—Ես մերժեցի Ուռեկլեանին. ես ազատ եմ... Ես սիրում եմ ձեզ...

ՍԱՐ.—(Գունատ օրօրւում է կանգնած տեղը, մազերն է շոյում, խոր քնից սթափւածի պէս) Օր. Լիզա, օր. Լիզա...

ԼԻԶԱ.—Ասացէք, սիրում էք։

ՍԱՐ.—(Լուռ է. միաժամանակ ուզում է ե՛ւ ծիծաղել, ե՛ւ լալ, ե՛ւ ճչալ)։

ԼԻԶԱ.—Մի խօսք և ես ձերն եմ... Կամ գուցէ այլևս չէք սիրում... Գուցէ անցել է և այն, ինչ զգացել էք մի ժամանակ, ամարային թեթև մի զգայմունք է եղել...

ՍԱՐ.—Դուք տանջում էք ինձ, դուք չէք կարող երևակայել, թէ ինչպէս էք տանջում... Եթէ դուք գիտենայիք, եթէ դուք գիտենայիք...

ԼԻԶԱ.—Ի՞նչ։

ՍԱՐ.—Ոչինչ, ոչինչ... Թողէք ինձ. ես խելքս կորցնում եմ... Ես անկարող եմ... (Չկարողանալով շարունակել, ընկնում է աթոռի վրայ եւ հեծկլտում)։

ԼԻԶԱ.—(Գրկում է նրա գլուխը) Իմ սիրելի, իմ խեղճ մանկիկ. դու կը տեսնես ինչ լաւ է կեանքը, և իմ սէրը մոռացնել կը տայ անցեալ բոլոր դառնութիւնները. դու կը հանգստանաս իմ գրկում։ (Համբուրում է գլուխը)։

ՍԱՐ.—(Վեր ցատկելով տեղից եւ համարեա ճչալով) Ոչ, ոչ... Ինչո՞ւ էք ասում, ինչո՞ւ էք թմրեցնում իմ միտքը հրաշալի նարկոզով... Եթէ դուք իմանաք, թէ ի՞նչ եմ արել։

ԼԻԶԱ.—(Վախեցած) Ի՞նչ։

ՍԱՐ.—Մի քանի օր առաջ ես ասացի. այրել եմ բոլորը։

ԼԻԶԱ.—Բայց դա կատակ էր։

ՍԱՐ.—Այրել եմ բոլորը։ Օր ու գիշեր նստած աշխատում էի վերականգնել այն, ինչ մոխիր է դարձել... Անցեալը, անիծեալ անցեալը մոխիրների միջից կմաղքացած նայում էր և հրհռում իմ բոլոր ճիգերի վրայ։ Նա մեկնում է ինձ իր ոսկրացած ձեռքերը, սղմում է կոկորդս. ես շնչարգել եմ լինում, խեղդւում եմ... Ես գլորւում եմ դէպի անդունդը. բոլոր մացառները, դուրս ցցւած քարերը, որոնց բռնում եմ ճանապարհին, փլւում են և գլորւում ինձ հետ... Անկարելի է առաջն առնել, ետ պահել... Անդունդի յատակում կը հանգստանայ իմ անհոգի մարմինը... Անկարելի է վերականգնել այն, ինչ արդէն մոխիր է դարձած, իսկ սկսելու ես ոյժ չունեմ... Մնաք բարով... Զխղճաք ինձ... Միայն յիշեցէք, որ կար մի մարդ, որը խելագարի պէս սիրել է ձեզ...

ԼԻԶԱ.—Սարումեան, դուք կատարեալ երեխայ էք. հաւատացէք, որ այդ բոլորը կանցնի, որ մենք միասին քամուն կը տանք բոլոր անցած տառապանքների մոխիրը... Երջանիկ կը լինենք և դուք նորից կը սկսէք աւելի մեծ թափով. . Սիրում եմ ձեզ. իմ սիրով ես կը բուժեմ ձեր վէրքերը... Ամօթ է այդքան փոքրոգութիւն... Նա, որին ես սիրում եմ. պէտք է միշտ բարձր պահի իր գլուխը... Թողէք այդ մտքերը։ Կեանքը

լաւ է, կեանքը մի մեծ պարգև է, բնութեան պարգևը. պէտք է օգտուել այդ պարգևից և ոչ թէ թունաւորել նրան։

ՍԱՐ. — Այդ պարգևը արդէն խլուած է ինձանից։ Ձեր առաջ կանգնած եմ ես իբրև կենդանի դիակ, անհոգի, անշունչ։ Ես քարշ եմ տուել մինչև այստեղ այդ պարգևը, այլևս անկարող եմ առաջ տանել։

ԼԻԶԱ — Դուք չէք սիրում։

ՍԱՐ. — Ձեմ սիրում... Հա՜, հա՜, հա՜...

ԼԻԶԱ — Եթէ սիրէիք, դուք կը կարողանայիք թափ տալ ձեր գլուխը, կը շարժէիք ձեր թևերը և դուրս կը լողայիք ջրի երեսը։ Իսկ այնուհետև ձեռք-ձեռքի տուած, երկուսս միասին, գլուխները բարձր, առաջ կերթայինք և կը կատուցանէինք մեր սիրոյ տաճարը... Դուք կը սկսէք ստեղծագործել... Ում Աստծուց տրուած է՝ նա չի սպառուի։

ՍԱՐ. — Իսկ եթէ ոչինչ տրուած չէ՞, կամ շատ քիչ է տրուած, և այդ քիչն էլ կեանքի ձեռքին մաղուել է։ Գլխումս այնպիսի դատարկութիւն է տիրում։ 37 տարի տանջուել եմ, մաքառել, կեանքը քամել է իմ լաւագոյն ոյժերը, իսկ այժմ ինչպէս անպէտքացած մի իր, ինձ ափն է նետում... Ես անկարող եմ այլևս կուել։

ԼԻԶԱ — Թողէք այդ յիմարութիւնները. դուք կը կուէ՞ք և յաղթող դուրս կը գաք այս կուից։ Ես ձեզ հետ կը լինեմ, միշտ ձեզ հետ և դուք կը տեսնէք ինչ հեշտ կը լինի յաղթող լինել... Ձեր նեարդերը հիւանդ են, պէտք է կազդուրուել, իսկ այնուհետև հեշտ է։ Ձեզ դեռ սպասում են ձեր լաւագոյն գործերը։

ՍԱՐ. — (*Կարճ, նեարդային ծիծաղ*)։

ԼԻԶԱ — Այսօր դուք կը կարդաք ձեր նոր դրաման և...

ՍԱՐ. — Ի՞նչ դրամա...

ԼԻԶԱ — Այն, որ վերջացրիք. ձեր նոր դրաման՝ «Կեցցէ կեանքը»։

ՍԱՐ. — Հա՜, հա՜, հա՜. նոր դրաման. գուցէ ուզում էք ասել իմ վերջին դրաման (*Մօտենում է Լիզային, բռնում է նրա ձեռքը*)։ Բոլորը այրուեց։ Ինձ թւում էր, թէ հնարաւոր է նատել և կրկին գրել։ Բոլորը յիշում եմ, բայց ուղեղս յամառութեամբ անշարժ է, երբ նատում եմ սեղանի առաջ։ Ցամաքել է ոգեւորութեան աղբիւրը։ Է՜հ, չարժէ խօսել իմ մասին...։ Օր. Լիզա, ինչո՞ւ ուշացաք... Դուք կարող էիք փրկել ինձ, ինչո՞ւ չեկաք... Երբ դեռ ուշ չէր։

ԼԻԶԱ — Դեռ ուշ չէ։

ՍԱՐ. — Ուշ է։ Ես արդէն հասել եմ իմ հանգրուանին։ Շնորհակալ եմ, դոնէ վերջալոյսին կեանքը ժպտաց ինձ և ժպիտը դէմքիս ես կը թողնեմ այս տառապանքի աշխարհը... Այնպէս կշտացել եմ կեանքից, բնութեան այդ մեծ պարգևից... Շնորհա-

կալ եմ, դուք իմ կեանքի վերջին լուսատու պայծառ աստղ։ Ցիշեցէք ինձ, բայց չխղճաք... Դուք մի ժամանակ մի երգ էիք երգում։ Ես միշտ լսում եմ. այդ եղանակը շարունակ հնչում է հոգուս մէջ, բայց խօսքերը, եղանակը մոռացել են։ Ես գիտեմ, երբ հասնի վերջին վայրկեանը, ես կրկին կը լսեմ այդ երգը... Եւ այդ երգի հնչիւնների տակ, անդորը ու խաղաղ կը բաժանուեմ այս աշխարհից։ Մնաք բարով։ (*Ուզում է գնալ*)։

ԼԻԶԱ—Ո՛չ, դուք չպէտք է գնաք... Ոչ մի տեղ... Ես ձեզ արգելում եմ... Ես սիրում եմ ձեզ...

ՍԱՐ.—Ես պէտք է գնամ. թէ ուր, ինքս էլ չգիտեմ. ես ձեզ կը գրեմ... Օր. Լիզա, շուտով գարունը կը բացուի. գարնան առաջին մանուշակներին իմ վերջին ողջոյնը... Այ, ես լսում եմ այն երգը... Լսում եմ, նա կանչում, հմայում է, կանչում է... (*Արագ գնում է*)։

ԼԻԶԱ—(*Մի քանի վայրկեան ատաած է տեղում. ապա արագ անցնում է դէպի պատուհանը, այնտեղից էլ միւս սենեակը: Բեմը դատարկ է, մի քիչ անց ներս է մտնում Լիզան զլխարկով ու հագնելով վերարկուն, արագ դիմում է դէպի դուռը, բայց զանգի ձայնի վրայ կանգ է առնում, քիչ անց ներս է մտնում Լուսիկը*):

ԼՈՒՍ.—Սարումեանը քեզ մօտ էր։

ԼԻԶԱ—(*Վախեցած*) Այո. ի՞նչ կայ։

ԼՈՒՍ.—Ոչինչ, ոչինչ. ինչու այդպէս վախեցար։

ԼԻԶԱ—Նա նոր գնաց. գնաց... հասկանում ես. ես նրան չպէտք է թողնէի։

ԼՈՒՍ.—Մենք նոր հանդիպեցինք նրան. նա մեզ չնկատեց, կանչեցինք. պատասխան չտուեց. այնպէս արագ էր գնում, կարծես ոչինչ չէր տեսնում։

ԼԻԶԱ—Իսկ ո՞ւր է Շահումեանը։

ԼՈՒՍ.—Նա գնաց նրա ետևից։ Մենք մի ժամ առաջ գնացինք նրա մօտ. սանտիկինը ասաց, որ կէս ժամ առաջ դուրս է եկել... Նա ասում է, որ երեք օր է ոչ կերել է, ոչ խմել, փակուած է սենեակում, իսկ թէ ինչ է անում՝ ոչ ոք չը գիտէ։

ԼԻԶԱ—Նա այնպիսի աչքերով էր նայում... Ես վախենում եմ...

ԼՈՒՍ.—Հանգստացիր, ի՞նչ կայ յուզելու... Շահումին ասել եմ, որ շուտով գայ և մի լուր բերի...

ԼԻԶԱ—Վատ, վատ լուր կը բերի նա, ես գիտեմ... Գիտեմ։

ԼՈՒՍ.—Ի՞նչեր ես դուրս տալիս։

ԼԻԶԱ—Կը տեսնես... Գնանք, մենք էլ գնանք նրա մօտ, գնանք, չթողնենք։

ԼՈՒՍ.— Ի՞նչ չթողնենք։

ԼԻԶԱ—Նա այրել է բոլորը... Այժմ նա իրեն էլ մի բան կանի. նա խելագարուել է (*Ուզում է գնալ*)։

ԼՈՒՍ.— (Պահելով նրան) Դատարկ բաներ ես ասում. հիմա կը գայ Շահումեանը. երևի նա էլ նրա հետ է... Գիտե՞ս, նա քեզ ուրջ սիրում է... Ինչ որ ասել է Շահումին։

ԼԻԶԱ—Նա չի գայ։ (Զանգ)։ Զանգահարեցի՞ն։

ԼՈՒՍ.—Նա է...

ԼԻԶԱ—(Գնում է դիմաւորելու)։

ԼՈՒՍ.—Ուշքի եկ, այդ ի՞նչի ես նման։

ԼԻԶԱ—(Դռներում հանդիպում է Շահումեանին։ Լուռ կանգնած են իրար դէմ դիմաց)։

ԼՈՒՍ.—Դէ, ինչո՞ւ ես լռել...

ԼԻԶԱ—(Շոյում է ճակատը. կարծես վատ կոշմարից նոր է սթափւել, բայց դեռ չի կարողանում ազատուել)։

ԼՈՒՍ.—Մի բան ասա՞ց։

ԼԻԶԱ.—Ոչինչ, ոչ մի խօսք... (Դանդաղ մօտենում է եւ ընկնում է աթոռի վրայ) Արդէն...

ՇԱՀ.—(Գլխով դրական նշան է անում)։

ԼՈՒՍ.—Ի՞նչու էք լռել, դէ, մի բան ասացէք։ (Մօտեցել է եւ ցնցում է Շահումեանին)։

ՇԱՀ.—Արդէն ուշ էր. երբ ես հասայ, հարևանները, ոստիկանութիւնը արդէն խմբւել էին նրա սենեակի մօտ և ինձ ներս չթողին...

ԼՈՒՍ.—Վիրաւո՞ր է։

ՇԱՀ.—Մեռա՞ծ։

ԼՈՒՍ.—(Բռնում է Շահումեանի ձեռքը. դողում է, շղթունքները շարժւում են, բայց չի կարողանում ձայն հանել։ Մի քանի վայրկեան մեռելային լռութիւն է)։

ԼԻԶԱ—(Ընդհատելով լռութիւնը) Ես գիտէի... Գիտէի, նա այնպիսի աչքերով էր նայում... Նա ասաց, որ ինքը մեռնելու է գնում և ես թողի, թողի, կախ չընկայ փեշերից, թողի որ գնար ու մեռնէր... Ես կարող էի նրան փրկել... Կարող էի... (Ոտքի ելնելով աւելի բարձր) Նա այրել է բոլորը, բոլորը, ոչինչ չի թողել։

ՇԱՀ.—Այրել է բոլորը։

ԼԻԶԱ—Այրել է բոլորը և իր վերջին դրամն, իր կեանքի դրամն... Նա վախենում էր այս կեանքից, որի վրայ մենք այսպէս դողում ենք, պտտւում ենք նրա շուրջը մեր փոքրիկ հաշիւներով և վախենում միջանցուկ քամուց... Նա չուզեց ապրել մեզ պէս։ Կեցցէ կեանքը, ճչում էր նա, իսկ ինքը դէպի գերեզման դիմում։ Գնանք, գնանք նրա մօտ, ես ուզում եմ տեսնել նրան, նա դեռ չի սառել։ Ուզում եմ հարցնել նրան, լսե՞ց մոռացւած երգը... Գնա՞նք, գնանք նրա մօտ։

ՎԱՐԱԳՈՅՐ

ՍԻՊՐ. ՄԱՆՈՒԷԼՅԱՆ

ԸՆԿԵՐՈՋՍ ՕՐԱԳՐԻՑ

11/v, 1915.

Անգին Վարդ,

Քո հանդիպումն այսօր ինձ ոչ ուրախություն և ոչ էլ տխրություն պատճառեց։

Երբ մոտովս անցնելիս գլխի թեթև նշանով ինձ կանչեցիր, առանց սարսուռ զգալու, առանց ցնցումների մոտեցայ, սեղմեցի ձեռքդ և տաք հարցերիդ պատասխանեցի հանգիստ, անյուզում։

Նկատեցի քո անհանգիստ լինելը, զգացի, որ ուզում էիր զբօսնել ինձ հետ, բայց չուզեցի. չէ՞ որ հրդեհն արդէն հանգել էր իմ մէջ։

Այժմ զգում եմ, որ կարող ես լինել սրտիցս անջատ, կարող եմ լինել քեզնից հեռու...

Երանի՜ այն օրին, երբ իմ տենչանքը միայն դու էիր. երանի՜ և այս օրին, որ կրծքիս տակ բռնկված մրրկից յետոյ՝ գլուխս կոթնած աջ ձեռքիս՝ աչքերիս առջև եմ բերում քեզ, ինձ և ինքս ինձնից ամաչում ու ժպտում եմ միայն...

Երանի՜ քեզ, որ սիրեցի բիւրեղի պէս, երանի՜ և ինձ, ո հեռացայ՝ թէև սրտիս բեռից ճկած, բայց առանց ափսոսալու...

Լաւ Վարդ,

Այժմ քո ժպիտների պատասխանը կը լինի ոչ յուզում, ոչ ցնցում, այլ սոսկ ժպիտ, մի անհոգ ժպիտ...

23/v, 1915.

Շատուց էր, որ չէի տեսել օրիորդ Հեղինէին և ամիսներ կը լինէր՝ չէի այցելել նրանց տուն։

Երէկ պատահմամբ տեսայ Հեղինէին և նրա խնդրանօք գնացի նրա բնակարանը։

Այդօր, բացի Հեղինէից, ինձ համար ամեն բան սովորական էր։

Նա շատ ուրախ էր, նրա մշտական հիւրը՝ տխրությունը այցի չէր եկել...

Ես շատ գոհ էի. սրտանց էր իմ հրճվանքն ու անյագուրդ։

Երբ նրա դրասեղանից վերցրի մի տետրակ, աշխատեց խլել... Բայց ինձ յաջողեց կարդալ երեկւայ թուով գրված մի ոտանաւոր, որից իմացայ, որ նա այժմ էլ ինձ «արժանի» չէ համարում իր «կուսական» սիրոյն և «ատում» է ինձ, ենթադրելով, որ ես նրան «կատեմ»...

Հեղինէի զգացմունքների խեղաթիւրումը տհաճ թւաց ինձ.

բայց լաւ էր, որ ճշտեց օրագրումս ունեցած գիտողութիւնս։

Հեղինէի մէջ պատկերիս ու շնչիս հետ մուտք էր գործել թունաւորող աշխարհն ու շոշափել նրա լաւութեամբ անորակելի սիրտը...

Խենթը չէ ըմբռնում մի բան, որ սէրը պայքարի և տանջանքի մէջ է կռում-կոփւում, ձև ստանում։

Նա չէ հասկանում և այն, որ մարդը տանջանքով է կերտւում, սրբագրւում, բայց ափսոս, որ նա ուժասուել ու ընկել է երամից ետ մնացած վատուժ կռունկի նման...

— Ատում է.—հոգ չէ. իմ սիրտը շատ է լայն... Ես միշտ, ամենուրեք եղել եմ ժայռ, իսկ կեանքի գոռ ու կատաղի ալիքները եկել, դիպել են ինձ ու փշրուել. բայց ես նորից կանգուն, նորից անտարբեր հանդիսատես եմ եղել միայն։

Մի ալիք էլ սա է, որ փշրուելով նորից յետ կերթայ, կը ձուլւի նրա սրտին ու կը գայ մարմանդ հովերի հետ շոյելու իմ հպարտ կուրծքը, բաց ճակատը...

27/v, 1915.

Այսօր Հեղինէին պատահեցի թէ չէ՝ տխրութիւն իջաւ վրաս ու դժգոհ արտայայտութիւն տուի դէմքիս, որ նա հասկանայ ինձ...

Ինձ տեսնելուն պէս նրա դէմքը սփրթնեց ու կարմրեց...

«Ատում է ինձ»-ը մտքիցս ու շրթունքներիցս չէր հեռանում այդ պահին։

Մի քանի րոպէ անց էր, որ յուզմունքը հաղիւ զսպել կարողանալով հարցրեց.

— Էլի հազում ես։

Ուզեցի պատասխանել.

— Ի դժբախտութիւն ձեր, ոչ։

Զաստցի, որովհետև նրա միմոզային զգայնութիւն ունեցող սրտին վատ կազդէր, թէև նա սրտիս ամենանուիրական լարերին էր դիպել...

Զար կերպով միայն չարերն են վրէժխնդիր լինում։

Հասկացայ, որ Հեղինէի սիրտը ճմլուեց իմ վերաբերմունքից։

Կարճ լռութիւնից յետոյ, նա, համարեա շփոթ, առաջարկեց զբօսնել։

Մերժեցի...

Զգաց, հասկացաւ ինձ. չգիտեմ, բայց գիտեմ այն, որ նորից նրան նետեցի խոհերի գիրկը, հին տառապանքին նորն աւելացաւ...

Մարդ իմանայ, չէ զղջում այժմ. Հեղինէն չէ մեղանչում ինքն իր սրտի հանդէպ...

Չէ՞ որ նա շատ է սիրել ինձ...

21/XI, 1915.

Դուրսը քամի է և ցուրտ։

Մուգ-կապույտի մէջ աստղերն հուր-հրատին են տալիս։

Դարձեալ զրասեղանիս առջևն եմ ու զբաղմունքս էլի թուղթն ու մելանն է. նորից ու նորից ինձ միակ մխիթարանք պատճառող աշխատանքն եմ կատարում։

Այդ իսկ պահին էր, որ լիշեցի օրիորդ Հեղինէին և անմիջապէս նրան տեսնելու ցանկութիւն մտաւ մէջս։ Նա այժմ լաւ է. էլ առաջւայ պէս թախծոտ չէ ու էլ կասկածների մէջ չէ տանջւում։

Ցանկութեանս հակառակ՝ որոշեցի դուրս չգնալ։

Սենեակիս խաղաղութեան մէջ շարունակում եմ գրել, բայց աղջկան տեսնելու ցանկութիւնս էլ աւելի է ուժեղանում...

Աշխատանքս անարդիւնք դարձաւ։

Երբ նկատեցի այս՝ դուրս ելայ տանից։

Զբօսավայրում մարդ չկար։

Եղածներն էլ, ասես կարևոր գործով, շտապում էին։

Մի փոքր պատոյտից յետոյ, ուզում էի վերադառնալ տուն, երբ մէկը թևս բռնեց. ետ դարձայ, ծանօթս էր, որի հետ սովորաբար զբօսանքի էր դուրս գալիս Հեղինէն։

— Ո՞ւր։

Հարցին պատասխանեցի ճիշտ.

— Տուն։

Կարճ զրոյցից յետոյ, երբ ժամացոյցը ութը զարկեց, բաժանուեցինք։

Ու վերադարձիս մի միտք էր ինձ տանջում, թէ՝ «Ինչո՞ւ դուրս եկայ այս քամուն, ինչո՞ւ դժւարս եկաւ, երբ Հեղինէին չտեսայ»։

Եթէ պատահէի Վարդին, հաւատացած եմ, որ բորբոքւած ցանկութիւնս կը մեղմանար։

Չէ՞ որ շատ ժամանակ չի անցել այն օրից, երբ նա Արտիկին ասել էր, թէ ինքն ինձ հաւկանում է և զգացմունքներիս վերաբերւում է յարգանքով։

— Յարգանք...

Այս էլ թեթև սպեղանի թող լինի դաղւած սրտիս։

Այժմ իմ սէրը դէպի Վարդը մեղմ բնոյթ է ստացել. սիրտս նրա համար սկսել է նւազ բաբախել. ասես նրա դէմքն սկսում է աղօտանալ մէջս...

Վա՜րդ, Հեղինէ՜...

Առաջինը հիւսւած է սրտիս ու երևակայութեանս լարերից՝ իրականին չնմանող, իսկ երկրորդը՝ միայն մի լաւ աղջիկ է, հոգուս և սրտիս քիչ բան ասող...

Մ. ԷՓՐԻԿԵԱՆ

ԵՐԵՔ ԾԱՂԻԿ

(Կատիպ Մենդէսից)

Ընթերցող, սիրուհիդ գաւաճանում է քեզ, բայց մի յուսահատիր, որովհետև քո ցաւը մեր բոլորիս ցաւն է։ Երկրագնդիս բոլոր սիրուհիներն իրարից ոչնչով չեն տարբերւում։ Վիրաւորւելու էլ չէ այդ քնքոյշ արարածներից, քանի որ իրենց անհաւատարմութեան դառնութիւնը իրենք էլ են զգում։ Իսկ այն բոլորի յանցանքը սուլթանուհի Լէյլիինն է։

Սուլթանուհի Լէյլին զուգած դուրս էր եկել պարտէզ ճեմելու։ Նա հանդիպելով կախարդ այգեպանին ասաց.

— Զումշուդ, մինչև հիմա դու իմ բոլոր պատուէրները սրբութեամբ ես կատարել։ Եւ եթէ այժմ լսես ու կատարես էութիւնս համակող կապրիզը, շնորհակալ կը լինեմ առյաւէտ։

— Իշխանուհի, ոչ մի խոչընդոտի դէմ կանգ չեմ առնի։ Ասա, ինչ է ուզածդ։

Պահ մի լռելուց յետոյ սուլթանուհին խօսեց.

— Չեմ ժխտում, Զումշուդ, որ այս այգու ծաղիկները գեղեցիկ են և բուրաւէտ։ Այո, այստեղ աճում են յակինթներ, յասմիկներ և այլ հոտաւէտ ծաղիկներ. և եթէ ես մի վարդ պոկեմ, անշուշտ, ինձնից յետոյ մի ուրիշ կին հնարաւորութիւն կունենայ նոյն ծաղկից ունենալու։ Իմ բարի Զումշուդ, ստեղծիր այնպիսի եզակի ծաղիկներ, որ բացի ինձնից ուրիշ ոչ ոք չըկարողանայ ձեռք բերել. ծաղիկներ, որ եզակի լինեն տիեզերքի մէջ և միմիայն ինձ զարդարեն, բուրեն։

— Օ՜, տիրուհի, ինձ համար շատ հասարակ բան է քո կամեցածը։ Տեսնում ես այս թուփը, որ աւելի բարձր է, քան պարտէզի ցանկապատը. նա իր խիտ ոստերի և տերևների ետևը թագցնում է երեք ծաղիկ, որ իրենց գունագեղութեամբ և արբեցուցիչ բոյրով մի-մի սքանչելիք են։ Հետևիր ինձ և ընտրիր այն ծաղիկներից մէկն ու մէկը. քաղածդ ծաղիկը այլևս ոչ մի շառաւիղ չի ունենայ տիեզերքի մէջ։

— Ի՞նչպէս։ երեք ծաղիկներից միայն մէ՞կը պոկելու իրաւունք ունեմ։

— Այո։ Իմ իշխանութիւնը միայն մէկով է սահմանափակւում։

— Որ այդպէս է, ես էլ իմ ցանկութիւնները կը չափաւորեմ։ Դէհ, շուտով ցոյց տուր ինձ այն ծաղիկները։

Այնքան հրաշալի էին այն ծաղիկները, որ Լէյլին տեսնելով նրանց՝ ուրախութիւնից ճչաց։ Ծաղիկներից մէկը հպարտ, մեծ և վսեմ, զմրուխտ թերթիկներով, ասես՝ հիւսուած ձիւ-

նից և ոսկուց, մի վարդի էր նման, որ մոռացնել էր տալիս արշալույսի փառահեղ ցոլցլանքը։

— Ի՞նչ է այս ծաղկի անունը,—հարցրեց սուլթանուհին։

— Գեղեցկութիւն,—իշխանուհի։

Երկրորդ ծաղիկը՝ վառկարմիր պսակով, նոր ծագող արեգակի բոլորակն էր յիշեցնում. նա հրապուրում և միաժամանակ սառուռ էր ազդում նայողին. ասես մի այրող հեղուկ կաթիլ-կաթիլ ծորում էր սիրտդ, անուշ ցաւ պատճառում։

— Ի՞նչպէս է կոչւում այս ծաղիկը։

— Սէր, իշխանուհի։

Երրորդ ծաղիկը, համեստ և դալուկ, նման էր սպիտակ հագած դեռատի աղջկայ. նրա թերթիկները իրենց քնքոյշ ծալքերում խորունկ թախիծ ունէին պարփակած. հեզիկ շուշանի էր նման նա՝ հիւսուած վեհութեան ու առաքինութեան թելիկներից։

— Իսկ ի՞նչպէս անւանեմ այս երրորդ ծաղիկը։

Սուլթանուհի, Հաւատարմութիւն է նրա անունը։

Էյլին ընկղմւեց մտածմունքի մէջ։

— Ի՞նչ կը լինի, եթէ պոկեմ այս ձիւնից և ոսկուց հիւսուած վարդը,—հարցրեց նա կարծես քնից սթափւած։

— Այլևս, երբէք նա չի փթթի։

— Կախարդ, ուզում ես ասել՝ գեղեցկութիւնը երկրիս երեսից յաւիտեան կը վերանայ։

— Չես սխալւում, տիրուհի։

— Ի՞նչպէս, ուրեմն ես էլ կը տգեղանամ։

— Այո, դու էլ։

— Իսկ եթէ այս կակաչը պոկեմ՝ ի՞նչ կը լինի, - ասաց Էյլին մօտենալով երկրորդ ծաղկին։

— Նրա սերունդն էլ կոչնչանայ։

— Այլևս քեզ ո՛չ ոք չի սիրի, թէև դու կը լինես նոյնչափ գեղեցիկ և հրապուրիչ։

Էյլին թեքւեց դէպի երրորդ ծաղիկը և հարցրեց.

— Իսկ եթէ այս դալուկ և վշտոտ շուշանը քաղեմ։

— Շուշանն էլ երբէք չի փթթի։

— Կը նշանակէ հաւատարմութիւնը կը վերանայ երկրիս երեսից, բոլոր կանայք կը դաւաճանեն իրենց մարդկանց և սիրահարներին։

— Այո։ Կանայք ոռնատակ կը տան իրենց ամենասրբազան երդումն անգամ։

Պահ մի տատանւելուց յետոյ Էյլին ծիծաղելով ասաց.

— Զարիքներից փոքրագոյնը պիտի ընտրել, վնուկ. ցանկութեանս յագուրդ տալու համար պիտի պոկեմ այս երեք ծաղիկներից մէկը, աւելի լաւ է որ...

Եւ սուլթանուհին պոկեց վեհութեան և առաքինութեան

թելիկներից հիւսած գժգոյն և թախծոտ շուշանը։ Ջումշուդն սկզբում գովում էր այդ ընտրութիւնը, որովհետև հաւատարմութիւնը գլխատելուց յետոյ գեղեցիկ Լէյլին անմիջապէս թողեց իր ամուսնուն. նա երեք օր շարունակ ապրում էր կախարդի հետ. իսկ չորրորդ օրւայ արշալոյսին այլևս ոչ ոք տեղ չունէր սուլթանուհու հոգու մէջ։ Նա թողեց ամեն ինչ, գնաց հեռու, նորանոր հորիզոններում թարմ դէմքեր փնտրելու։ Եւ այսպէս վերջնապէս խողողեց հաւատարմութիւնը...

Օ՜, հաւատա ընթերցող, հենց այս վայրկեանիս սիրուհիք դաւաճանում է քեզ։

ՑԱՐ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վարոնցիկ Աղասեան

*** (բանաստ.) 24
Սօսին (բան.) 118

Ազատ Վշտունի

Յուսալքում բանաստ. 150

Ե. Աճրիկեան

Սօնէտ (բան.) 24
Կայարանի մօտ (բան.) 117

Գիսակ

Կենդանիների ժողովը (առակ) 41
Առակ 96

Գր. Գրիգորեան

Հին խրճիթը (Ս. Կլդիաշվիլիից) 93

Ռաֆայէլ Զարդարեան

Օրագիր 16
Փոքրիկ արձակ երգեր 76
*** (արձ. բան.) 118

Ստ. Զօրեան

Գայն ու թոռը 17
Սատանայ 49
Սպիտակ տան բնակիչները 107

Մ. Էփրիկ

Ընկերոջս օրագրից 25
Հանդէս 89
Ընկերոջս օրագրից 187

Վահան Թարգիսից

Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ 78

Արտաւիր Խոնդկարեան

Իմ այցելուն (բան.) 15
*** (բանաստ.) 88

Սաղ Կոճիցեան

Մէկը (պատմուածք) 43

Միք. Մանուէլեան

Կարպ Կարպիչը 67
Սրճարանում 97
Կեցցէ Կեանքը (դրամա) 151

Մեծատուցեան

Հաշտութիւն (բան.) 34

Ցար Մելքոնեան

Երեք ծաղիկ (Կատիւլ Մենդէից) 189

Պատարէ

Անմահական երգը (բան.) 34
*** (բանաստ.) 81
*** (») 149

Վիրու Զիլցի

*** բանաստ.) 90

Գ. Թանիլեան

Հեթանոսական սաղմոսները 91

Սար-Ցով

Հարսաւի ծաղիկները (բան.) 148

Վ. Վարագեան

Զոքանչի մահը 5
Երկիրն Կովկաս 119

Վահան Տէրեան

Եթէ չկայ Աստուած (բան.) 66
Տրիօլէտ (բան.) 104

Սերմենաւի Տիգրանեան

*** (բանաստ.) 23
Աչերիդ (բան.) 23
*** (բանաստ.) 75
*** (») 104

Ե. Տիրոսեան

Ստեփան Մելիքեան 35

Եղիա Տէր-Հայրապետեան

*** (բանաստ.) 150

Տիգրան Տէրունի

Տրամաբանեան նեազներից (բան.) 81

Գ. Փեպաստեան

«Ճաղերի յետև» գրքից՝ Վիտալի Պաւլովիչ 82
Աղօթք (բանաստ.) 105

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Երես
Մ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ—Սրճարանում	97
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ—Տրիօլէտ (բան.)	104
ԱՐՄԵՆՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ—*** (բան.)	104
Գ. ՓԵԱԼԱՇԵԱՆ—Ապօթք (բան.)	105
ԱՆՈՒՐՋ—*** (բանաստ.)	106
ՍՏ. ՁՕՐԵԱՆ—Սպիտակ տան բնակիչները	107
Ն. ԱՖՐԻԿԵԱՆ—Կայարանի մօտ (բան.)	117
ՎԱՐՍԵՆԻԿ ԱՂԱՅԵԱՆ—Սօսին (բան.)	118
ՌԱՖԱՅԷԼ ՁԱՐԴԱՐԵԱՆ—*** (արձ. բան.)	118
Վ. ՎԱԼԱԴԵԱՆ—Երկիրն Կովկաս	119
ՍԱՐ-ՑՈՎ—Հարաւի ծաղիկները (բան.)	148
ՊԱՀԱՐԷ—*** (բան.)	149
ԵՂԻԱ ՏԷՐ-ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ—*** (բան.)	150
ԱՋԱՏ ՎՇՏՈՒՆԻ—Ցուսալքում (բան.)	150
ՄԻՔ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ—Կեցցէ կեանքը, դրամա 3 գործ.	151
Մ. ԷՓՐԻԿ—Ընկերոջս օրագրից	187
ՑԱՐ. ՄԵԼՔՈՒՄԵԱՆ—Երեք ծաղիկ	190

„ՊԱՏԱՆԻ" ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

«Դրամ.-Գեղարուեստ. Ալմանախի» շուրջ համախմբուած մի խումբ երիտասարդների նախաձեռնութեամբ Թիֆլիսում կազմակերպուել է **«Պատանի» Փայտիրատակաց Հրատարակչական Ընկերութիւն**, որի նպատակն է առանձին գրքերով հրատարակել երիտասարդ գրողների ինքնուրոյն և թարգմ. գեղարուեստական գործերն ու քննադատական աշխատութիւնները՝ «Երիտասարդ Գրողների Գրադարան» անուան տակ։ Ընկերութեան փայն արժէ 25 ռուբլի։ Փայ գնել ցանկացողները դիմելու են կազմակերպիչ մարմնի լիազօր Մ. Էփրիկեանին (Խոջիվանքի փող. 5)։ Գրադարանի № 1-ը արդէն լոյս է տեսել, որ պարունակում է Միք. Մանուէլեանի Երկերի ժողովածուն և արժէ 3 ռ. 50 կ.։

ՍՏՈՅԻՆԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գլիսէ Զարենց—*Բանաստեղծութիւններ, էջ 62, գինը 75 կ.. Մոսկուա 1917 թ.։*
Սուրէն Մելիքեան—*Հայ կամաւորի յուշերից, էջ 107 գինը 60 կ.. Թիֆլիս, 1917 թ.։*
Թատրոն եւ երաժշտութիւն—*Թատերական հանդէս, Բագու։*
Վլաս-Տասպ—*Շաբաթաթերթ, Թիֆլիս։*
Միութիւն—*Աշակերտական շաբաթաթերթ, Թիֆլիս։*
Սօխատանի—*Շաբաթաթերթ, Երեւան։*
Պայքար—*Աշակերտական ամսագիր, Գանձակ։*
Ս. Բազէն—*Արեւելքի մրմունջները (բան.), Թաւրիզ, 1917 թ. էջ 8, շքեղ հրատարակութիւն։*
Համբարձեր—*Շաբաթաթերթ, Թիֆլիս։*
Ա.Ն. Սրուանեան—*Լեռնի հեքիաթը (մանկ. յիշողութ.) էջ, 221, գ. 1 ռ. 25 կ., Թիֆլ. 1917թ.*

ԴՈՐԾԱԿԻՑ—*Թիֆլիս*—Երեւանդ Ցոլակ, Վաղարշակ Ցոլհաննիսեան, Մ. Սօրի-Մելիքեան, օր. Ա. Ահարոնեան, Ան. Թումանեան, Հ. Պետրոսեան և օր. Ե. Տէր-Յակոբեան։ *Բաթում*—Արշակ Մարութեան։ *Բագու*—Աւագ Կոծինեան։ *Ալէքսանդրապոլ*—Արշաւիր Խոնդկարեան։ *Շուշի*—Ս. Մուսայէլեան։ *Կոկանդ*—Արսէն Օհանեան, *Թէհրան*—Ա. Գարագաշ, *Երեւան*—Արփենիկ Գորոյեան։

ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ

„ՊԱՏԱՆԻ“ ԱԼՄԱՆԱԽԻ

1910—12 թ.թ. կոմպլեկտները,	գ. 3 ռ.	— կ.
1913 թ. »	(սակաւ.) 3 ռ.	— կ.
1914 թ. »	(») 2 ռ.	— կ.
1915 թ. I—II գիրքը	—	50 կ.
Մ. Մանուէլեան—Երկերի ժողովածու	3 ռ.	50 կ.
«Գրակ.-Գեղարուեստ. Ալմանախ»	I գ.	70 կ.
» » »	II գ.	80 կ.
» » »	III—IV գ. 2 ռ.	50 կ.
Աւագ Կոժինեան Cloria victis		20 կ.
Լեոն Լեոնի—«Իմ էսքիզներից»		20 կ.
Հ. Համբարեան—Տարաբախտ Ուսանողը		25 կ.
Մ. Յովհաննիսեան—Մրմունջներ		10 կ.

Բոլոր 29 գրքերը միասին ճանապարհածախսով արժեն 18 ռուբլի։ Դիմել՝ Тифлисъ, Ходживанская 5. М. Эприкянъ.

ԳԻՆԸ 2 Ռ. 50 Կ.